LAİKMİSİNİZ? YOKSA YOBAZMISİNİZ?

NE LAİKSİNİZ, NE DE YOBAZ. BASKASININ VATANINI YUTTUGUNUZDAN DOLAYI HAZİMSİZLİK GEÇİREN ÇOK BASLI BİR UCUBESİNİZ.

\* \* \*

1915-TEN 1923-E KADAR SİZ MÜSLÜMAN TÜRKLER, MÜSLÜMAN KÜRTLERLE BİR-LESEREK ANATOLYANIN YERLİ HİRİSTİYAN HALKLARINI SOYKIRIMINA UGRATTINIZ. FAKAT 1923-DE SİZİN AGABABPNİZ MUSTAFA KEMAL, KÜRTLERİN SAYESİNDE İKTİDARA GELDİĞİ HALDE, KÜRTLERE HİÇ BİR HAK TANIMADI. BİLAKİS HAK İSTİYEN KÜRTLERİ DE TEMİZLEDİ. VE YALNIZ BASINA YERLİ HİRİSTİYAN HALKLARININ MİRASININ ÜZERİNE OTURDU.

İSTE TÜRKİYEDE 1950-LERDE BASLIYAN VE BUGÜNE KADDAR DA DEVAN EDEN ÇALKANTILARIN ASIL SEBEBİ, TÜRK DENİLENLERİN, KÜRT DENİLENLERLE, YERLİ HİRİSTİYAN HALKLARININ MİRASINI PAYLASHA MÜCADELESİDİR.

\* \* \*

VE TÜRKİYEDE BU TÜRK VE KÜRT MİRAS KAVGASI, İSİM VERİLMEYEN . FAKAT HER GÜN VE HER YERDE VE HER SAHADA AMANSIZ DEVAM EDİYOR.

BAZAN İSMİNE, SOL-SAG KAVGASI DENİLİYOR. BAZAN DE LAİKLİK VE YOBAZLIK MÜCADELESİ İSMİVERİLİYOR.

FAKAT İSMİ NE OLURSA OLSUN, HEPSİNİN KONUSU, TÜRK-KÜRT MİRAS SAVASIDIR...

SON GÜNLERDE “MUSTAFA KEMALCILER” BÜYÜK BİR DARBE HAZIRLADILAR.

ANA YASA MAHKEMESİNE MÜRACAAT ETTİLER VE BUGÜN İKTİDARDA OLAN TAYYİP ERDOĞANIN VE ABDULLAH GULÜN PARTİSİ OLAN A.K. PARTİSİNİN YOBAZLAR PARTİSİ OLDUGUNDAN, KAPATILMASINI İSTEDİLER. BU DAVAYA SEBEB DE SU:

SON AYLARDA A.K. PARTİSİ MECLİSTEKİ BİR KARAR ÇIKARTMIS VE KIZ ÖĞRENİGİLERİN BASÖRTÜSÜ İLE ÜNİVERSİTEYE GİRMELERİNE İZİN VERMİSTİ.

HALBUKI BU KARAR, MUSTAFA KEMALIN LAIKLIGIN SENBOLÜ OLAN KIYAFET KANUNUNA KARSİ GELMEK DEMEKTİR.

VE A.K. PARTISI İÇİN BU DAHA BİR DENEME İDİ. DAHA SONRA YAVAS YAVAS MUSTAFA KEMAL-IN BÜTÜN LAIKLIK KANUNLARINI (MÜSLÜMANLİGA AYKIRI) DİYEREK DEĞİSTİRECEKLERDİ.

BU TEHLİKEYİ GÖREN MUSTAFA KEMALCILER ANA YASA MAHKEMESİNDEN A.K. PARTİSİNİN DAHA İLERİ GİTMESİNE ENGEL OLMAK İÇİN A.K. PARTİSİNİN KAPATILMASINI İSTEDİLER.

DÜŞÜNEBİLİYORMUSUNUZ. BU GÜN TÜRKİYEDE İKTİDARDA OLAN A.K. PARTISI KAPATILSIN.

BU KİTABINA UYDURULMUS HÜKÜMET DARBESİ DEMEKTİR.

VE BUNA KARSİ TAYYİP ERDOĞANIN PARTISI "BİZ HALKIN OYLARI İLE İKTİDARA GELDİK" DİYOR.

BUNUN SONU İÇ SAVAS DEMEKTİR.

ESKİ DEVİRLERDE OLSAYDI, ORDU SOKAKLARA TANKLAR ÇIKARIR. VE HÜKÜMETİ ASAĞI ALIRDI.

1950-DEN, SON SENELERE KADAR TÜRKİYEDE TANKLARLA BİR ÇOK KERE HÜKÜMETLER ASAĞA ALINDI.

FAKAT BUGÜN İS O KADAR KOLAY VE BASİT DEĞİL.

ESKİDEN TÜRKİYEDE BUTÜN HÜKÜMET DARBELERİ AMERİKANIN EMRİ İLE YAPILIRDI.

FAKAT BUGÜN AMERİKA, TAYYİP ERDOĞANIN HÜKÜMETİNİN ASAĞA ALINMASINI İSTEMİYOR.

ÇUNKU ASLINDA TAYYİP ERDOĞAN HÜKÜMETİNİ İKTİDARA GETİREN AMERİKALILAR.

BUNUN İÇİN DİYORUZ Kİ MUSTAFA KEMALCILERİN İSİ ÇOK ZOR.

ÇÜNKÜ AMERİKALILAR İRAKTA BİR KÜRT DEVLETİ KURDULAR.

ÇÜNKÜ AMERİKALILAR BU KÜRT DEVLETİNİN TÜRKLER TARAFINDAN YUTULMASINI İSTEMİYORLAR.

BİLAKİS TÜRKİYENİN DAHA FAZLA BUYÜYEREK ORTA DOĞUDA AMERİKALILARIN BASINA BELA OLMASINI İSTEMİYORLAR.

ONUN İÇİN AMERİKALILAR KÜRTLERİ DESTEKLİYOR.

ONUN İÇİN DİYORUZ Kİ:

EY TÜRKLER, ANATOLYADA RUMLARI VE ERMENİLERİ TEMİZLİYEREK ÇALDIGINIZ RUM VE ERMENİ VATANLARINI, KOLAY KOLAY HAZMEDEMİYECEKSİNİZ.

VE KÜRTLER, ÇALDIGINIZ RUM VE ERMENİ TOPRAKLARINI SİZE BIRAKMIYACAKLARDIR.

Յ. Չ.

### ԾՈՒՌ ԶԱՆԱԿԷՆ ԾՈՒՌ ԳԻԾ ՄԸ ԵՒՍ... ... (Շար. էջ 1-էն)

մը, որ լիբանանցիները կամ անոնց մէկ կամ միւս կողմը կը մերժեն ընդունիլ անխոհեմաբար:

Մեր ներկայ զրոյցին երկրորդ հիմնահարցը Հայաստանի ներքին գոյավիճակն է:

Հարց կը տրուի, թէ ո՞ր հասան Մարտ 1-ի և ասոր յաջորդած օրերու ողբերգական իրադարձութիւն-եղելութեանց շուրջ բացուած հետաքննութիւնները:

Իշխանութիւնները յանձնառու եղան ըսելու, բացայայտելու որքան ամօթալի, նոյնքան աղէտաբեր-բարոյական իմաստով մանաւանդ-դէպքերուն սպտասխանատուները, անոնցմով հետապնդուած նպատակը, իրաքանչիւր ղեկավար անձի մեղապարտութիւնը:

Հարկ է լուսարձակի տակ բերել մանաւանդ, թէ որքանո՞վ հիմնաւորուած է այն պնդումը, որ Երեւանեան նախընթաց չունեցող այդ բուռն ու վայրագ ցոյց-խռովութիւնները ներքին յեղաշրջումի փորձ մըն էին: Հրձիգութիւնն ու աներածութիւնները սպտուիրուած և քաջալերուած էին արտաքին ուժերէ: Նիւթական մեծ միջոցներ տրամադրուած էին որ խուժանը ոտքի հանելով զայն ասպտամբական արարքներու կարելի ըլլայ մղել: Անոնց տրամադրելով նաեւ զէնք ու զինանիւթ-ինչպէս կը վկայէր «Հ-1»ը, հանրութեան ցուցադրելով գրաւեալ պայթուցիկ ու հրազէն:

Եւ վերջապէս՝ ի՞նչ անուն կը կրեն կարծեցեալ այդ օտար ուժերը՝ պետութիւն կամ խմբաւորում: Ինչ էր ասոնց կողմէ հետապնդուած վերջնագոյն նպատակը: Յոյցերու ընթացքին պարզուած ալեծուփ պետական որոշ դրօշները արդեօ՞ք կրնան մեկնաբանական լոյս սփռել արդէն եղած ու ընթացող վերագրումներուն վրայ: Թէ ոչ՝ չարաշահում և զրպարտութիւն են անոնք:

Այս ու նման հարցադրումներ պիտի մնան ենթադրութեան ու կարծիքի սահմաններու մէջ, քանի պաշտօնական Երեւանի տեղեկատու աղբիւրները իրենց հիմնաւորուած զեկոյց-մեղադրագիրը չեն հրապարակած... դեռ մինչեւ սա թոպէին, ինչ որ զարմանք կը յառաջացնէ ու տարաբնոյթ վերագրումներու դուռ կը բանայ: Մանաւանդ՝ Սփիւռքի մէջ, ուր հայութիւնը ակնդէտ ու անհամբեր կը սպասէ ճշմարտութեան յայտնուելուն, անվերապա՛հ անկեղծութեամբ: Չծածկելով ոչ մէկ իրողութիւն: Ծարաւի ենք իմանալու, նախ և առաջ, թէ ինչ գոյն ու անուն կը կրեն կարծեցեալ այդ օտար ուժերը և ինչ էր նպատակը անոնց ծրագրած «Յեղաշրջում»ին: Ո՞ր կ'ուզէին հասնիլ: Աղերս մը կա՞յ անոնց և Թիֆլիսի ու Զիւլի մէջ կատարուած և ասպտամբութիւն բուրող «Գունաւոր Յեղափոխութեան» միջեւ:

Մենք մեզի չենք թոյլատրեր կանխահաս հետեւութիւններ ընել: Կը սպասենք լրացուցիչ նորութիւններու: Պաշտօնական լուսաբանութիւններուն... շատ ուշացած:



Եւ այժմ, պահ մը կեդրոնանանք Հայաստանի նոր կառավարութեան կազմութեան աշխատանքներուն վրայ, որոնք օրերս հապշտապ կ'ընթացուին Երեւանի մէջ, նորընտիր նախագահին հովանաւորութեամբ:

Մինչ կը խորհէինք, որ նոր դահլիճի գոյառումը կարծուածէն աւելի ճիգ ու ժամանակ պիտի պահանջէ, կը յայտնուի ահաւասիկ, որ նոր «Քոալիցիոն»ը գրեթէ ոտքի դրուած է: Մեզի զարմանք պատճառելու աստիճան հեշտութեամբ: Ինչո՞ւ...

Պարզ այն պատճառաւ որ շատ հաւանական է, որ ՀՀ-ի նոր դահլիճին մաս կազմեն կողմեր որոնք, դեռ մինչեւ երէկ՝ լուրջ մեղադրանք կ'ուղղէին՝ նախագահական ընտրութեան օրինականութիւնը առնելով կասկածի տակ: Կոկորդ պատռելու աստիճան գոռալով, որ ընտրութիւնները խարդախուած են: Զուէատուփերու «Լցումներ» եղած են: Պաշտօնատար թեկնածուն իր իշխանութիւնը չարաշահած է ստիպելով քաղաքացիներուն, որ յօգուտ իրեն քուէարկեն:

Այսպէս առարկող-պնդող կողմերը որոնք պահ մը զգացնել կու տային, թէ իրենց մասնակցութիւնը նոր դահլիճի կազմութեան աւելի քան անհաւանական է, կը յայտնուի ահաւասիկ, որ դեռ... հաւը երեք անգամ չխօսած, յետս կոչած են իրենց անպաշտօն յանձնառութիւնը: Վերատեսութեան ենթարկած են իրենց սկիզբի վճռական մերժումը: Որոշած են տեղ գրաւել նոր կառավարութեան մէջ: Բայց՝ «Պայմանաւորեալ» անդամակցութեամբ... ինչ որ իրենց դիմաշրջումը արդարացնելու ձեւական ու ձախող փորձ մըն է:

Ինչ որ հետեւցնել կու տայ մեզի, որ ՀՀ-ի նոր Նախագահի հովանաւորութեամբ կեանքի կոչուող նոր դահլիճը, վերիվերոյ պիտի ունենայ նախկինին սպտկերը: Ընտրութեանց օրինականութիւնը կասկածի տակ դնողները կ'ըլլան նոր դահլիճին առաջին աթոռները համերաշխաբար ու ամենայն գոհունակութեամբ զբաղեցնողները:

Բայց ի՞նչ կրնայ եղած ըլլալ շարժառիթը այս դիմաշրջումին: Ընտրութիւնը ոչ-օրինական սեպողները ինչպէ՞ս կրնան «Քոալիցիա» կազմել քուէարկութիւնը խարդախած և, հետեւաբար, անօրէն դահլիճ կազմող մեղադրեալներուն հետ: Յաւելեալ նոր աթոռներ խոստացուած են իրենց: «Քիչ ունենալը նախընտրելի է բնաւ չունենալէն» սկզբունքի նախամեծարութիւնը բարի խորհրդատու եղած է իրենց, որ դիրք փոխեն: Ո՛վ գիտէ: Մօտի ապագան մեզի կը պատասխանէ հաւանաբար:

Բայց ինչպէ՞ս, դահլիճէ մը ներս, նախարարներ կրնան գործակցիլ անկեղծաբար, երբ ներքուստ կասկած ու վերապահութիւն ունին հանդէպ իրարու: Ներքնապէս կը մնան իրարու հակադրուած: Եւ, բնականաբար, այսուհետեւ ալ պիտի գործեն զարտուղի, ընթացան իրարու ներհակ ուղիւրութեամբ, կեղծ համախոհութեան քօղի տակ ծուարած:

Ծուռ քանակէն ստացուած ծուռ գիծ մըն ալ այս մէկը պիտի չըլլա՞յ:

**ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ**

Սիրան Շատերի [ծնեալ՝ Աշըգեան] մահուան առթիւ, «Նայիրի» կը սգակցի հանգուցեալի ընտանիքին և հարազատներուն, մասնաւորաբար՝ Արժ. Տ. Օշական Ա. ֆհնյ. Աշըգեանին:

**ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ**

Ալիս Խաչերեանի [ծնեալ՝ Շըխըրտըմբան] մահուան առթիւ, «Նայիրի» կը վշտակցի հանգուցեալի ընտանիքին ու հարազատներուն, Տէր և Տիկ Կարպիս և Անահիտ Էյիլմէզեանին՝ մասնաւորաբար:

**ԲԱԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ**

Հանդիմով իմացանք, որ Տէր և Տիկ. Ռաֆֆի և Թալին Պալեաններ բախտաւորուած են երկուորեակ զաւակներով՝ Պարէտ և Պէրնատէք:

«Նայիրի» կը շնորհաւորէ բախտաւորուած ծնողքը և կը խնդակցի իրենց մերձաւորներուն, Տիկ. Ֆիլոր Սընգեանին՝ մասնաւորաբար:

**ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻԲՐԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԵՐԸ “LAÏC” ԵՆ, ԹԷ՞ ԾԱՅՐԱՅԵՂ ԻՍԼԱՄ:**

**Ո՛Չ ԱՅՍ ԵՆ. ԵՒ Ո՛Չ ԱԼ ՄԻՒՍԸ:**

**ԹՈՒՐՔԻԱ ԸՍՈՒԱԾ ԱՌԵՂԾՈՒԱԾԸ՝ ԻՆՉ ԸԼԼԱԼԸ ԱՆՍՏՈՅԳ,**

**ԲԱԶՄԱԹԻՒ ԳԼՈՒԽՆԵՐՈՎ ՃԻՒԱՂ ՄԸՆ Է:**

Ի՞նչ կարծեցիք թուրքեր, այնքան դիրի՞ն պիտի ըլլար ուրիշին հայրենիքը գողնալը:

Անաթոլիոյ 5000 տարուան բնիկ ժողովուրդները քանի մը տարուան մէջ ցեղասպանութեան ենթարկեցիք, և յետոյ, 1933-ին՝ շանթապետութեան տասներորդ տարեդարձին՝ «Տասը տարուան մէջ տասնհինգ միլիոն երիտասարդ ստեղծեցինք» ըսելով յոխորտացիք...:

Մուսթաֆա Քեմալի և Իսմէթ Ինէճիկի բռնապետութեան շրջաններուն, այս սուտերը բոլորին կլլեցուցիք: Բայց, 1950-թ. ներէն յետոյ, իրականութիւնները յայտնուիլ սկսան:

Եւ 2000-թ.ի շրջաններուն ամէն բան մէջտեղ ելաւ:

«Լայի՞ք» էք, թէ՞ ոչ ծայրայեղ իսլամ: Այլ՝ ուրիշին հայրենիքը կլլած ըլլալնուդ պատճառաւ մարտողութեան դժուարութիւն քաշող բազմաթիւ գլուխներով ձիւաղ մըն էք:

★ ★ ★

1915-էն մինչեւ 1923 տարեթիւր դուր, միւսլիման թուրքեր, միւսլիման քիւրտերուն հետ միասնաբար, Անաթոլիոյ բնիկ քրիստոնէայ ժողովուրդները ցեղասպանութեան ենթարկեցիք:

Բայց 1923-թ.ին ձեր մեծաւորը՝ Մուսթաֆա Քեմալը, հակառակ որ քիւրտերուն շնորհիւ իշխանութիւնը ձեռք անցուցած էր՝ քիւրտերուն ոչ մէկ իրաւունքը ծանցցաւ: Ընդհակառակը՝ իրաւունք ուզող քիւրտերու ալ մաքրագործեց: Եւ թուրքերուն մեծաւորը ըլլալով՝ բնիկ քրիստոնէայ ժողովուրդներու հողերուն, ինչքերուն բոլոր հարստութիւններուն տէրը դարձաւ:

Ահաւասիկ, թուրքիոյ մէջ 1950-թ.ներուն սկսող և մինչեւ այսօր շարունակուող ալեկոծութիւններուն և խլրտումներուն բուն պատճառը, որ թուրքերուն և քիւրտերուն միջեւ, բնիկ քրիստոնէայ ժողովուրդներուն ժառանգը բաժանելու պայքարն է:

★ ★ ★

Եւ Թուրքիոյ մէջ այս՝ Թուրքերուն և քիւրտերու միջեւ մղուող պայքարը՝ առանց կողմերու անուններու բացայայտման, ամէն օր ամէն տեղ և ամէն մարզի մէջ անողոքաբար կը շարունակուի: Այս սպառնալից անունին երբեմն «Ձախի և քաղի կոնի, կ'ըսեն և երբեմն ալ "Laïc"ներու և ծայրայեղ իսլամներու պայքար» անունը-կուտան:

Բայց, անունը ինչ որ ալ ըլլայ, բուն արմատը՝ Թուրք և քրտական ժառանգի պատերազմ է...: Վերջին օրերուն «Մուսթաֆա Քեմալական»ները մեծ բայլ մը նետեցին:

Սահմանադրական դատարան դիմեցին և, այսօր իշխանական կուսակցութիւն եղող Թայիպ Էրտողանի և Ապտուլլա Կիլ-ի կուսակցութեան (A.K.) ծայրայեղ իսլամներու կուսակցութիւն մը ըլլալուն պատճառաւ, անոր փակումը պահանջեցին: Պատճառն ալ հետեւեալն է.

Վերջին ամիսներուն A.K. կուսակցութիւնը Ազգային ժողովէն օրէնք մը հաստատել տուաւ-ուսանողուիներուն լաջակով համալսարան մտնելը արտօնեց:

Մինչդեռ այս լաջակի արտօնութեան օրէնքը՝ Մուսթաֆա Քեմալին «Լայիք»ութեան խորհրդանիշը եղող «Հագուստի օրէնք»ին հակառակ էր:

Եւ այս՝ դպրոցի մէջ լաջակ կրելը Թոյլատրող օրէնքը, A.K. կուսակցութեան համար դեռ փորձ մըն էր: Յետոյ, կամաց կամաց Մուսթաֆա Քեմալին բոլոր «Լայիք»ութեան օրէնքները «Միսլիմանութեան հակառակ է» ըսելով՝ փոխել պիտի ուզէին:

Այս վտանգը նախատեսող «Մուսթաֆա Քեմալական»ները Սահմանադրական դատարանին դիմեցին և A.K. կուսակցութեան փակումը սպահանջեցին, որ A.K. կուսակցութիւնը աւելի «Առաջ» չերթայ:

Կրնա՞ք երեւակայել, թէ ինչ ըսել է այսօր, Թուրքիոյ մէջ, իշխանութեան տէրը եղող A.K. կուսակցութեան փակումը:

Ասիկա, օրէնքի վրայ յենելով կատարուած «Պետական հարուած» մըն է...

Այս՝ փակման վտանգին դէմ, Վարչապետ Թայիպ Էրտողան յայտարարութիւն մը տուաւ և ըսաւ թէ՝

«Մենք ժողովուրդին քուէներովը իշխանութեան եկանք»...

Այս վիճակը դէպի ներքին քաղաքացիական պատերազմի կը տանի:

Եթէ անցեալին ըլլար, բանակը կեդրոնական հրապարակներու վրայ հրասայլեր կ'իջեցնէր և կառավարութիւնը վար կ'անէր:

Թուրքիոյ մէջ, 1950-էն յետոյ, մինչեւ վերջին շրջանները, շատ անգամներ հրասայլերով կառավարութիւնները վար առնուեցան:

Թուրքիոյ մէջ բոլոր պետական հարուածները Ամերիկայի հրամանով կատարուած էին:

Բայց այսօր, Ամերիկան Թ. Էրտողանի կառավարութեան վար առնուելուն կողմնակից չէ:

Որովհետեւ, իրականութեան մէջ, Թ. Էրտողանի դահլիճը իշխանութեան գլուխ բերողը Ամերիկացիներն են:

Այդ պատճառաւ կ'ըսենք, թէ Մուսթաֆա Քեմալականներուն գործը շատ դժուար է:

Որովհետեւ Ամերիկացիները, իրաքի մէջ, քրտական պետութիւն մը հիմնեցին:

Որովհետեւ Ամերիկացիները, այս՝ քրտական պետութեան Թուրքերուն կողմէ քանդուիլը չեն ուզեր:

Ընդհակառակը՝ քիւրտերը Թուրքերուն աւելի զօրանալով Միջին Արեւելքի մէջ Ամերիկացիներուն գլխուն փորձանք ըլլալուն արգելք կ'ըլլան:

Այս հեռանկարներով՝ Ամերիկացիները քիւրտերուն թիկունք կը կանգնին:

Այս պատճառաւ ալ կ'ըսենք՝ ո՛վ Թուրքեր, Անաթոլիոյ մէջ Յոյները և Հայերը մաքրագործելով անոնցմէ յափշտակուած հողերը, դիրին, դիրին պիտի չկրնաք մարսել:

Քիւրտերը ձեր Յոյներէն և Հայերէն գողցած հողերը ձեզի պիտի չծագեն:

Թ. Չ.

### ԾՈՒՌ ԶԱՆԱԿԷՆ ԾՈՒՌ ԳԻԾ ՄԸ ԵՒՍ... ... (Ծար. էջ 1-էն)

մը, որ լիբանանցիները կամ անոնց մէկ կամ միւս կողմը կը մերժեն ընդունիլ անխոհեմաբար:

Մեր ներկայ գրոյցին երկրորդ հիմնահարցը Հայաստանի ներքին գոյավիճակն է:

Հարց կը տրուի, թէ ո՞ր հասան Մարտ 1-ի և ասոր յաջորդած օրերու ողբերգական իրադարձութիւն-եղելութեանց շուրջ բացուած հետաքննութիւնները:

Իշխանութիւնները յանձնառու եղան ըսելու, բացայայտելու որքան ամօթալի, նոյնքան աղէտաբեր-բարոյական իմաստով մանաւանդ դէպքերուն սպատասխանատուները, անոնցմով հետապնդուած նպատակը, իրաքանչիւր ղեկավար անձի մեղապարտութիւնը:

Հարկ է լուսարձակի տակ բերել մանաւանդ, թէ որքանով հիմնաւորուած է այն պնդումը, որ Երեւանեան նախընթաց չունեցող այդ բուռն ու վայրագ ցոյց-խռովութիւնները ներքին յեղաշրջումի փորձ մըն էին: Հրձիգութիւնն ու ակերածութիւնները սպտուիրուած և քաջալերուած էին արտաքին ուժերէ: Նիւթական մեծ միջոցներ տրամադրուած էին որ խուժանը ոտքի հանելով զայն ասպտամբական արարքներու կարելի ըլլայ մղել: Անոնց տրամադրելով նաեւ զէնք ու զինանիւթ-ինչպէս կը վկայէր «Հ-1»ը, հանրութեան ցուցադրելով գրաւեալ պայթուցիկ ու հրազէն:

Եւ վերջապէս՝ ի՞նչ անուն կը կրեն կարծեցեալ այդ օտար ուժերը՝ պետութիւն կամ խմբաւորում: Ինչ էր ասոնց կողմէ հետապնդուած վերջնագոյն նպատակը: Յոյցերու ընթացքին պարզուած ակեծուփ պետական որոշ դրօշները արդեօ՞ք կրնան մեկնաբանական լոյս սփռել արդէն եղած ու ընթացող վերագրումներուն վրայ: Թէ ոչ՝ չարաշահում և զրպարտութիւն են անոնք:

Այս ու նման հարցադրումներ պիտի մնան ենթադրութեան ու կարծիքի սահմաններու մէջ, քանի պաշտօնական Երեւանի տեղեկատու աղբիւրները իրենց հիմնաւորուած զեկոյց-մեղադրագիրը չեն հրապարակած... դեռ մինչեւ սա թոպէին, ինչ որ զարմանք կը յառաջացնէ ու տարաբնոյթ վերագրումներու դուռ կը բանայ: Մանաւանդ՝ Սփիւռքի մէջ, ուր հայութիւնը ակնդէտ ու անհամբեր կը սպասէ ճշմարտութեան յայտնուելուն, անվերապա՛հ անկեղծութեամբ: Չծածկելով ոչ մէկ իրողութիւն: Ծարաւի ենք իմանալու, նախ և առաջ, թէ ինչ գոյն ու անուն կը կրեն կարծեցեալ այդ օտար ուժերը և ինչ էր նպատակը անոնց ծրագրած «Յեղաշրջում»ին: Ո՞ր կ'ուզէին հասնիլ: Աղերս մը կա՞յ անոնց և Թիֆլիսի ու Քիւեի մէջ կատարուած և ասպտամբութիւն բուրող «Գունաւոր Յեղափոխութեան» միջեւ:

Մենք մեզի չենք թոյլատրեր կանխահաս հետեւութիւններ ընել: Կը սպասենք լրացուցիչ նորութիւններու: Պաշտօնական լուսաբանութիւններուն... շատ ուշացած:

Եւ այժմ, պահ մը կեդրոնանալով Հայաստանի նոր կառավարութեան կազմութեան աշխատանքներուն վրայ, որոնք օրերս հապշտապ կ'ընթացուին Երեւանի մէջ, նորընտիր նախագահին հովանաւորութեամբ:

Մինչ կը խորհէինք, որ նոր դահլիճի գոյառումը կարծուածէն աւելի ճիգ ու ժամանակ պիտի պահանջէ, կը յայտնուի ահաւասիկ, որ նոր «Քոալիցիոն»ը գրեթէ ոտքի դրուած է: Մեզի զարմանք պատճառելու աստիճան հեշտութեամբ: Ինչո՞ւ...

Պարզ այն պատճառաւ որ շատ հաւանական է, որ ՀՀ-ի նոր դահլիճին մաս կազմեն կողմեր որոնք, դեռ մինչեւ երէկ՝ լուրջ մեղադրանք կ'ուղղէին՝ նախագահական ընտրութեան օրինականութիւնը առնելով կասկածի տակ: Կոկորդ պատռելու աստիճան գոռալով, որ ընտրութիւնները խարդախուած են: Քուէատուփերու «Լցումներ» եղած են: Պաշտօնատար թեկնածուն իր իշխանութիւնը չարաշահած է ստիպելով քաղաքացիներուն, որ յօգուտ իրեն քուէարկեն:

Այսպէս առարկող-պնդող կողմերը որոնք պահ մը զգացնել կու տային, թէ իրենց մասնակցութիւնը նոր դահլիճի կազմութեան աւելի քան անհաւանական է, կը յայտնուի ահաւասիկ, որ դեռ... հաւը երեք անգամ չխօսած, յետս կոչած են իրենց անպաշտօն յանձնառութիւնը: Վերատեսութեան ենթարկած են իրենց սկիզբի վճռական մերժումը: Որոշած են տեղ գրաւել նոր կառավարութեան մէջ: Բայց՝ «Պայմանաւորեալ» անդամակցութեամբ... Ինչ որ իրենց դիմաշրջումը արդարացնելու ձեւական ու ձախող փորձ մըն է:

Ինչ որ հետեւցնել կու տայ մեզի, որ ՀՀ-ի նոր Նախագահի հովանաւորութեամբ կեանքի կոչուող նոր դահլիճը, վերիվերոյ պիտի ունենայ նախկինին սխալները: Ընտրութեան օրինականութիւնը կասկածի տակ դնողները կ'ըլլան նոր դահլիճին առաջին աթոռները համերաշխաբար ու ամենայն գոհունակութեամբ զբաղեցնողները:

Բայց ի՞նչ կրնայ եղած ըլլալ շարժառիթը այս դիմաշրջումին: Ընտրութիւնը ոչ-օրինական սեպողները ինչպէ՞ս կրնան «Քոալիցիա» կազմել քուէարկութիւնը խարդախած և, հետեւաբար, անօրէն դահլիճ կազմող մեղադրեալներուն հետ: Յաւելեալ նոր աթոռներ խոստացուած են իրենց: «Քիչ ունենալը նախընտրելի է բնաւ չունենալէն» սկզբունքի նախամեծարութիւնը բարի խորհրդատու՞ն եղած է իրենց, որ դիրք փոխեն: Ո՛վ գիտէ: Մօտի ապագան մեզի կը պատասխանէ հաւանաբար:

Բայց ինչպէ՞ս, դահլիճէ մը ներս, նախարարներ կրնան գործակցիլ անկեղծաբար, երբ ներքուստ կասկած ու վերապահութիւն ունին հանդէպ իրարու: Ներքնապէս կը մնան իրարու հակադրուած: Եւ, բնականաբար, այսուհետեւ ալ պիտի գործեն զարտուղի, ընթանան իրարու ներհակ ուղիւթեամբ, կեղծ համախոհութեան քօղի տակ ծուարած:

Ծուռ քանակէն ստացուած ծուռ գիծ մըն ալ այս մէկը պիտի չըլլա՞յ:

**ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ**

Սիրան Շատերի [ծնեալ՝ Աշըգեան] մահուան առթիւ, «Նայիրի» կը սգակցի հանգուցեալի ընտանիքին և հարազատներուն, մասնաւորաբար՝ Արժ. Տ. Օշական Ա. քհնյ. Աշըգեանին:

**ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ**

Ալիս Խաչերեանի [ծնեալ՝ Շըխըրուզմեան] մահուան առթիւ, «Նայիրի» կը վշտակցի հանգուցեալի ընտանիքին ու հարազատներուն, Տէր և Տիկ Կարպիս և Անահիտ Էյիլմէզեանին՝ մասնաւորաբար:

**ԲԱԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ**

Հանոյնով իմացանք, որ Տէր և Տիկ. Ռաֆֆի և Թալին Պալեաններ բախտաւորուած են երկուորեակ զաւակներով՝ Պարէտ և Պերնատէք:

«Նայիրի» կը շնորհաւորէ բախտաւորուած ծնողքը և կը խնդակցի իրենց մերձաւորներուն, Տիկ. Ֆիլոր Սընգեանին՝ մասնաւորաբար:

**ԿԸ ԿՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻԲՐԹԷ] ԶԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԵՐԸ “LAÏC” ԵՆ, ԹԷ՞ ԾԱՅՐԱՅԵՂ ԻՍԼԱՄ:**

**Ո՛Ղ ԱՅՍ ԵՆ. ԵՒ Ո՛Ղ ԱԼ ՄԻՒՍԸ:**

**ԹՈՒՐՔԻԱ ԸՍՈՒԱԾ ԱՌԵՂԾՈՒԱԾԸ՝ ԻՆՉ ԸԼԼԱԸ ԱՆՍՏՈՅԳ,**

**ԲԱԶՄԱԹԻՒ ԳԼՈՒԽՆԵՐՈՎ ՃԻՒԱՂ ՄԸՆ Է:**

Ի՞նչ կարծեցիք Թուրքեր, այնքան դիրքին պիտի ըլլար ուրիշին հայրենիքը գողնալը:

Անաթոլիոյ 5000 տարուան բնիկ ժողովուրդները քանի մը տարուան մէջ ցեղասպանութեան ենթարկեցիք, և յետոյ, 1933-ին՝ Հանրապետութեան տասներորդ տարեդարձին՝ «Տասը տարուան մէջ տասնհինգ միլիոն երիտասարդ ստեղծեցինք» ըսելով յոխորտացիք...:

Մուսթաֆա Քեմալի և Իսմէթ Ինէօնիի բռնապետութեան շրջաններուն, այս սուտերը բոլորին կլլեցուցիք: Բայց, 1950-թ.ներէն յետոյ, իրականութիւնները յայտնուիլ սկսան:

Եւ 2000-թ.ի շրջաններուն ամէն բան մէջտեղ ելաւ:

«Լայի՞ք» էք, թէ՞ ոչ ծայրայեղ իսլամ: Այլ՝ ուրիշին հայրենիքը կլլած ըլլալնուդ պատճառաւ մարտողութեան դժուարութիւն քաշող բազմաթիւ գլուխներով ձիւաղ մըն էք:

★ ★ ★

1915-էն մինչեւ 1923 տարեթիւր դուր, միւսլիման թուրքեր, միւսլիման քիւրտերուն հետ միասնաբար, Անաթոլիոյ բնիկ քրիստոնեայ ժողովուրդները ցեղասպանութեան ենթարկեցիք:

Բայց 1923-թ.ին ձեր մեծաւորը՝ Մուսթաֆա Քեմալը, հակառակ որ քիւրտերուն շնորհիւ իշխանութիւնը ձեռք անցուցած էր՝ քիւրտերուն ոչ մէկ իրաւունքը ծանցաւ: Ընդհակառակը՝ իրաւունք ուզող քիւրտերն ալ մաքրագործեց: Եւ թուրքերուն մեծաւորը ըլլալով՝ բնիկ քրիստոնեայ ժողովուրդներու հողերուն, ինչքերուն բոլոր հարստութիւններուն տէրը դարձաւ:

Ահաւասիկ, Թուրքիոյ մէջ 1950-թ.ներուն սկսող և մինչեւ այսօր շարունակուող ալեկոծութիւններուն և խլրտումներուն բուն պատճառը, որ թուրքերուն և քիւրտերուն միջեւ, բնիկ քրիստոնեայ ժողովուրդներուն ժառանգը բաժանելու պայքարն է:

★ ★ ★

Եւ Թուրքիոյ մէջ այս՝ թուրքերուն և քիւրտերու միջեւ մղուող պայքարը՝ առանց կողմերու անուններու բացայայտման, ամէն օր ամէն տեղ և ամէն մարզի մէջ անողորբաբար կը շարունակուի:

Այս սպայքարին անունին երբեմն «Ձախի և աջի կոխ, կ'ըսեն և երբեմն ալ “Laïc”ներու և ծայրայեղ իսլամներու պայքար» անունը կուտան:

Բայց, անունը ինչ որ ալ ըլլայ, բուն արմատը՝ թուրք և քրտական ժառանգի պատերազմ է...: Վերջին օրերուն «Մուսթաֆա Քեմալական»ները մեծ քայլ մը նետեցին:

Սահմանադրական դատարան դիմեցին և, այսօր իշխանական կուսակցութիւն եղող Թայիպ Էրտողանի և Ապտիլլա Կիլ-ի կուսակցութեան (A.K.) ծայրայեղ իսլամներու կուսակցութիւն մը ըլլալուն պատճառաւ, անոր փակումը պահանջեցին: Պատճառն ալ հետեւեալն է.

Վերջին ամիսներուն A.K. կուսակցութիւնը Ազգային ժողովէն օրէնք մը հաստատել տուաւ- ուսանողուհիներուն լաջակով համալսարան մտնելը արտօնեց:

Մինչդեռ այս լաջակի արտօնութեան օրէնքը՝ Մուսթաֆա Քեմալին «Լայիք»ութեան խորհրդանիշը եղող «Հագուստի օրէնք»ին հակառակ էր:

Եւ այս՝ դպրոցի մէջ լաջակ կրելը թոյլատրող օրէնքը, A.K. կուսակցութեան համար դեռ փորձ մըն էր: Յետոյ, կամաց կամաց Մուսթաֆա Քեմալին բոլոր «Լայիք»ութեան օրէնքները «Միւսլիմանութեան հակառակ է» ըսելով՝ փոխել պիտի ուզէին:

Այս վտանգը Նախատեսող «Մուսթաֆա Քեմալական»ները Սահմանադրական դատարանին դիմեցին և A.K. կուսակցութեան փակումը սպահանջեցին, որ A.K. կուսակցութիւնը աւելի «Առաջ» չերթայ:

Կրնա՞ք երեւակայել, թէ ինչ ըսել է այսօր, Թուրքիոյ մէջ, իշխանութեան տէրը եղող A.K. կուսակցութեան փակումը:

Ասիկա, օրէնքի վրայ յենելով կատարուած «Պետական հարուած» մըն է...

Այս՝ փակման վտանգին դէմ, Վարչապետ Թայիպ Էրտողան յայտարարութիւն մը տուաւ և ըսաւ թէ՝

«Մենք ժողովուրդին բուհներովը իշխանութեան եկանք»...

Այս վիճակը դէպի ներքին բաղաբացիական պատերազմի կը տանի:

Եթէ անցեալին ըլլար, բանակը կեդրոնական հրապարակներու վրայ հրասայլեր կ'իջեցնէր և կառավարութիւնը վար կ'առնէր:

Թուրքիոյ մէջ, 1950-էն յետոյ, մինչեւ վերջին շրջանները, շատ անգամներ հրասայլերով կառավարութիւնները վար առնուեցան:

Թուրքիոյ մէջ բոլոր պետական հարուածները Ամերիկայի հրամանով կատարուած էին:

Բայց այսօր, Ամերիկան Թ. Էրտողանի կառավարութեան վար առնուելուն կողմնակից չէ:

Որովհետեւ, իրականութեան մէջ, Թ. Էրտողանի դահլիճը իշխանութեան գլուխ բերողը Ամերիկացիներն են:

Այդ պատճառաւ կ'ըսենք, թէ Մուսթաֆա Քեմալականներուն գործը շատ դժուար է:

Որովհետեւ Ամերիկացիները, Իրաքի մէջ, քրտական պետութիւն մը հիմնեցին:

Որովհետեւ Ամերիկացիները, այս՝ քրտական պետութեան թուրքերուն կողմէ բանդուկիլը չեն ուզեր:

Ընդհակառակը՝ քիւրտերը թուրքերուն աւելի զօրանալով Միջին Արեւելքի մէջ Ամերիկացիներուն գլխուն փորձանք ըլալնուն արգելք կ'ըլլան:

Այս հեռանկարներով՝ Ամերիկացիները քիւրտերուն թիկունք կը կանգնին:

Այս պատճառաւ ալ կ'ըսենք՝ ո՛վ թուրքեր, Անաթոլիոյ մէջ Յոյները և Հայերը մաքրագործելով անոնցմէ յափշտակուած հողերը, դիւրին, դիւրին պիտի չկրնաք մարսել:

Քիւրտերը ձեր Յոյներէն և Հայերէն գողցած հողերը ձեզի պիտի չձգեն:

Յ. Չ.

# ՆԱՅԻՐԻ

NAÏRI

Թիի 286 ԵՐԵՎԱՆԻ 22 ԱՊՐԻԼ 2008 (ԺԴ. ՏԱՐԻ) ԿԵՆՏՐՈՆ 22-287 2008

ԶՐՈՅՑ ԸՆԹԵՐՅՈՂԻՍ ՆԵՑ

**ՍՊԱՍԵՆՔ,  
ԴԱՐ ՄԸ ԵՒՍ,  
ՊԱՐՈՆԱՅՔ...**

ԺԻՐԱՅԻ ՆԱՅԻՐԻ

Գործուելէ շուրջ դար մը ետք, Հայկ. ցեղասպանութիւնը դե՛ռ իր արդար դատաւորին և վճիռին կը սպասէ:

Ինչո՞ւ է այս յարատեւ ու անհրաւ սպասումը որ կը պարտադրուի մեզի: Ուշացումը ճշմարիտ հատուցման:

Զանի որ, ինչպէս խելամտաբար կը բնորոշէր բարեյուշ Հրաչեայ Զոչար, Մեծ Եղեռնի Յիսնամեակի առթիւ՝ «Անհրաւեալները տկար են ու անգոր, իսկ մերօրեայ հզօրներուն մօտ ալ չկայ գութ և բարեխղճութիւն»:

Այո: Որքա՛ն ալ ըլլայ կսկծալից ու ցաւատանց՝ խոստովանինք, որ մերօրեայ աշխարհի դատաւոր նկատուածներուն խիղճը կը մնայ գօսացած ու անզգայ: Բո՛ւն յանցագործը այն է որ, իբր թէ, արդարութիւն պիտի տնօրինէր: Բայց ափսո՛ս, որ ուղղամիտ և անկողմնակալ կարծուած դատաւորը կը տեսնենք մեղսակցած ոճրապարտին հետ: Զայն չքմեղացնելու միտող եղկելի դերակատարութեան մը մէջ: Ուստի, նման պայմաններու ներքեւ կարելի՞ է յուսալ օրէնքի գերակայութիւն: Եւ ակնկալել, որ յանցագործը սլատժուի իսկ տուժածին տրուի արդար հատուցում: Զրկեալը վերատիրանայ իրմէ յափշտակուածին: Ստանայ ինչ որ խլուած էր իրմէ նենգաբար ու եաթաղանով:

Արդարութիւն, Յարգանք Մարդու և Ազգի իրաւունքի հանդէպ, անթոյլատրութիւն ամէն նախայարձակումի, կամայականութեան և ուրիշի ստացուածքը թալանելու... այս բոլոր ոսկեջրուած սկզբունքները կը մնան բանտուած ՄԱԿ-ի Ուխտին մէջ: Բարոյախօսական գիրքերու էջերուն: Անգոր ու սնամէջ օրէնքներ որպէս: Մինչ Աշխարհը կը ղեկավարէ, ի հեճուկս շողշողուն ու վսեմ լոզունգներուն, հոգեթով պատգամներուն որոնք կը տրուին մերօրեայ Ոսկեբերաններուն կողմէ՝ Բի՛րտ Ուժը: Մեծ մասամբ «Անտառի Օրէնք»ն է տիրողը մարդկային ընկերութեանէն ներս: Տկարը զոհն է Ուժեղին: Փոքրերը կու կ'երթան... Մեծ Չուկին:



Ո՞ր օրուան կը սպասեն և դեռ ինչքա՛ն պիտի յամենան ՄԱԿ-ը իր Ապ. Խորհուրդով, Եւրոպական Միութիւնը իր տարատեսակ ենթամարմիններով, մարդասիրական միջազգային խայտաբղէտ ընկերակցութիւնները «Յեղասպանութիւնը Մարդկութեան դէմ ոճիր» նկատող՝ դատապարտելու համար հայկական ցեղասպանութիւնը:

Ո՞ւր են ամէն օր «Հրէական հոլոքոսթ» հոլովող, Ափրիկեան ժողովուրդներու բնաջնջումով իբր թէ մտահոգ, Սերպիոյ մէջ որպէս թէ «Իսլամ բնիկներ»ու հաւաքական գերեզմաններ յայտնաբերած, այժմ ալ Թիպէթի վրայ Կոկորդիլոսի արցունք թափող եղերամայրները: Ինչո՞ւ իրենց ողբ ու կոծէն, առատօրէն թափած շիթերէն երկու կաթիլ ալ բաժին չեն հաներ ու յատկացներ հայ ժողովուրդի շուրջ երկու միլիոն զոհերուն, որոնք ողջակէզ եղան անցեալ դարու Ա. ցեղասպանութեան:

Ինչո՞ւ մերօրեայ «Մարդասէր»ներուն սրտերը այնքա՛ն բուխ ու զգայուն են ուրիշներուն հանդէպ, իսկ քարսիրտ ու կոշտացած՝ հայ նահատակներուն նկատմամբ:

Ինչո՞ւ Մեծ Եղեռնէն ահա, շուրջ մէկ դար ետք, «Միջազգային Համայնք» կոչուածը, համաձայն իր իսկ դաւանած մարդկային-բարոյական սկզբունքներուն, չի՛ դատապարտեր հրէշ Հիթլերին «Օրինակ ծառայած» Երիտթուրքերուն եղեռնագործութիւնը: Հաշուետուութեան չի կանչեր մերօրեայ «Զեմալական» Թուրքիան որ ժառանգորդն է իր նախկինին՝ «Օսմանական»ին:

Մերօրեայ «Ազատ Աշխարհ»ը ծանօթ չէ՞ Պատմութեան: Վկայութի՞ւն կը սլակսի իրեն: Հա՞րկ է, որ փաստ ու ապացոյց հրամցուի: Եթէ այդպէս է՝ տա՛նք, խնդրե՛մ:

Բայց ո՞վ, իրմէ աւելի ականատես ու վկայ եղած է թուրքին գործած ցեղասպանութեան: Հայ Ազգի բնաջնջումին: Հայուն պատմական հայրենիքին մեծ մասին գողութեան: Նիւթական անհաշիւ հարստութեանց մոխրացումին կամ իւրացման: Հայուն շարունակուող Գողգոթային որ կը շարունակուի ի՛ր իսկ աչքերուն առջեւ և Հայ-Սփիւռք կը կոչուի այժմ:

«Ասպետական Ֆրանսա»յի վարիչները եթէ տեղեակ չեն կամ դարձեր են մոռացկոտ, թող բարի ըլլան թոյլատրելու որ մե՛նք յիշեցնենք իրենց վարչապետ Պրիանի 1916-թ.ի սա յանձնառութիւնը.— Ֆրանսան պիտի չմոռնայ հայութեան տանջանքները և, համաձայն իր դաշնակիցներուն հետ, պատերազմէն ետք, պիտի ձեռք առնէ անհրաժեշտ բոլոր միջոցները որպէսզի խաղաղ ու բարգաւաճ կեանք մը ապահովէ հայ ժողովուրդին»: Կիլիկիոյ մէջ, «Հայկ. անկախ պետութեան» մը գոյառումը՝ ներառեալ»: (→ էջ 12)

Ո՛Չ, Ո՛Չ:  
ԱՐՇԱԼՈՅՍՆ ԻՐԵՆՑ  
ՊԻՏԻ ԳԱ՛Յ ...



Ո՛Չ, Ո՛Չ: ԱՐՇԱԼՈՅՍՆ ԻՐԵՆՑ ՊԻՏԻ ԳԱՅ...:  
ՈՒ ԵԹԷ՛ ԶԻ ԳԱՅ ԱԻՕՏՆ ԱՊԱԳԱՅ՝  
ՊԻՏ՝ ԿՌՈՒԻՆ: ՄԻՆԶ Ե՞ՐԲ... ՄԻՆԶԵԻ ՅԱԻՏԵԱ՛Ն:  
ՈՒ ԵՐԲ ԳԵՌ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱՐ ՄԵՌՆԻՆ Ա՛Փ ՄԸ ՄԱՐԳԵՐ ԶՆԶԻ՛Ն,  
ԱՆՈՆՔ ՊԻՏ՝ ԸԼԼԱՆ ՄԱՐԳԿՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻ՛Ն,  
ՎԵՐՋԻՆ ՀԱՅԵՐԸ...:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ- «ՎԵՐՋԻՆ ՀԱՅԵՐԸ»- ՀԱՏՈՒԱՄ

**ՄԻ՛ ՆԱՅԻՔ, ԹԷ ԻՆՉ Կ՛ԸՍԵՆ,  
ՆԱՅԵՑԷՔ, ԹԷ ԻՆՉ Կ՛ԸՆԵՆ**

Դեռ նախակրթարանի սարիներէն մեր բարոյախօս սնօրէնը սովորեցուցած էր մեզի.— Մարդը նանչնալու համար նայեցէք թէ ինչ կ'ընէ ան, անոր ըսածին ուշադրութիւն դարձնելէ առաջ»:

Այս վերջիշումը ունեցայ կարդալով տեղական օրաթերթի մը խորագիրը.— Ուելշ կոչ ուղղեց անմիջապէս խորհրդարանին դռները բանալու և նախագահ ընտրելու...»:

Ճիշդն ըսելով՝ առաջին տպաւորութիւնս այն եղաւ, որ Ուելշ ոչ թէ ԱՄՆ-ի ԱԳ նախարարութեան մէկ բարձր պաշտօնատար է, այլ՝ Լիբանանի: Իսկ այն խորհրդարանը որուն կ'ակնարկէ ան, այդ մէկն ալ Մ. Նահանգներու 52-րդ նահանգին ժողովն է և ոչ թէ Մայրիներու Երկիր-ինը:

Պաշտօնատարութիւն կտրուկ, հրամայական ու սպառնալից «Թօն»ը զարմացուց զիս: Հարց տուի: Յարգարժան Պրն. Ուելշը ամերիկացի է, մենք՝ լիբանանցի: Խորհրդարանը որուն կ'ակնարկէ՝ լիբանանեան է և ոչ թէ ամերիկեան: Նախագահը որ պիտի ընտրուի՝ Լիբանանի համար պիտի ըլլայ և ոչ թէ ԱՄՆ-ի: Ուրեմն այդ յո՞նչ իրաւունքով, յանդգնութեամբ և հարկադրիչ թելադրանքով յարգարժան Պրն. Ուելշը կը հրամայէ որ... սէրութիւն մը որուն քաղաքացին չէ ինք և ոչ ալ խորհրդարանը ուր նախագահ պիտի ընտրուի ամերիկեան է, ոչ ալ ընտրուելիք նախագահը ամերիկացի պիտի ըլլայ ու պիտի գործէ Մ. Նահանգներուն համար-բանայ իր խորհրդարանի դռները և նախագահ ընտրէ:

Նման առիթներով չէ՞ որ կ'ըսուի, թէ գերիշխան տէրութեան մը ներքին գործերուն միջամտելը անթոյլատրելի է, սուեալ երկրի ու պետութեան ազատութեան և գերիշխանութեան բռնաբարում կը նշանակէ:

Այս մասին ամէն օր ուրիշներուն քարոզ կարդացող ԱՄՆ-ը ինչպէ՞ս յինգիմեքսի կը կը թոյլատրէ ընել բան մը, որ ինք յանցանք կը սեպէ...

Կը թուի, թէ «Միջազգային Օրինականութիւն» կոչուածը ուրիշներու համար է և ոչ թէ այս մեծ տէրութեան:

Ասոր համար ըսինք՝ Մի՛ նայիք, թէ Պետական ղեկավարներ կամ սոսկական անհատն մը ինչ կ'ըսեն, այլ՝ նայեցէք թէ ինչ կ'ընեն, և ըստայնմ գնահատեցէք անոնց քաղաքակրթական մակարդակը, անոնց ունեցած յարգանքը «Ժողովրդավարութիւն»ի հանդէպ:

**ՏԵՍԷՔ, ԹԷ ԻՆՉ ՉԵՒԻ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔ»  
ԿԸ ՍՊԱՍՈՒԻ ԵՐԵՒԱՆ - ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԷՆ**

«Եթէ Հայաստան և Ազրպէյճան քաղաքական կամք դրսեւորեն, զարաբաղեան տագնապը կրնայ լուծուիլ բաւական արագ».— յայտարարած է ԱՄՆ-ի ԱԳ-Նախարարուհի Տիկ. Լիզա:

Ատրպէյճանը իր «Կամք»ը դրսեւորած է արդէն ըսելով, որ Ղարաբաղը իր անբաժան մասն է: Իսկ Մ. Նահանգներն ալ կը պնդեն, որ Ազրպէյճանի հողային ամբողջութիւնը պէտք է յարգուի: Հասկնալի է, թէ ինչ ըսել կ'ուզուի:

«Քաղաքական Կամք»ի դրսեւորումի հասկացութիւնը եթէ ասիկա է Պաքուի և իր հովանաւորին համար, կը մնայ որ Երեւանն ու Ստեփանակերտը իրենք ալ դրսեւորեն իրենցմէ ականկալուող «Կամք»ը... Արցախը վերադարձնելով Ազերիներուն: Որպէսզի Լ. Ղարաբաղի տագնապի լուծումը «խափանող» չամբաստանուին:

ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՉՕՆԵՆՔ՝  
1915-Ի ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՆՄԵՂ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Ո՞Վ Է ՀԱՅՈՒՆ ԲՈՒՆ ԹՇՆԱՄԻՆ

ՀԱՅՈՒՆ ԲՈՒՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԸ...  
ՀԱՅԵ՞ՐՆ ԵՆ,  
ՀԱՅՈՒ ԱՆՈՒՆ ԿՐՈՂ ԴԱԻԱՃԱՆՆԵՐ

...ԱՍՈՆՔ ԷԻՆ ՈՐ 1453-Թ.ԷՆ՝  
ՊՈԼՍՈՅ ԳՐԱԻՈՒՄԷՆ Ի ՎԵՐ ԿԸ ԾԱՌԱՅԵՆ  
ԹՈՒՐԹԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒՆ

ԵՒ ԵԹԷ «ԱՍԱԼԱ»Ն ԱՌԱՋԻՆ ՕՐԷՆ,  
ՆԱԽ ԵՒ ԱՌԱՋ ԱՅԴՊԻՄԻՆԵՐԸ ՎՆԱՍԱՋԵՐԾԵՐ,  
Գ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ա. ՆԱԽԱԳԱՀԸ  
ԵՒ ԻՐ ՆՄԱՆՆԵՐԸ 1991-Թ.ԻՆ,  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ  
ՔԱՆԴԵԼՈՒ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆԸ ՉԷԻՆ ՈՒՆԵՆԱՐ...  
... ՈՉ ԱԼ, ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ՅՈՅՍԸ ԵՂՈՂ  
ԱՅՍՕՐՈՒԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԱՐՏ 2008-ԻՆ,  
ԿՈՐԾԱՆՄԱՆ ՍԵՄԻՆ ԲԵՐԵԼ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(ՎՐԵԺ ՈՒԻԲԷՆԵԱՆ)

Տարօրինակ ազգ մըն ենք:

Անհերքելի իրականություն մըն է, որ Պատմութեան առաջին թուականներէն ի վեր, գոյութիւն ունեցող մեծ Ազգ մը եղած ենք:

Բայց մենք՝ հայերս, առաջին օրէն մեր ունեցած ազգային հարուստ ժառանգը անտարբերութեամբ վատնող հաւաքականութիւն մը եղանք՝ պատմական բոլոր շրջաններուն, և մինչեւ այսօր:

... Եւ մեր ազգային ժառանգին կորուստին պատճառ եղողները պատժել չենք գիտցած:

Վարդանանցի մեր պատերազմին Պարսիկներուն դաւանափոխ ըլլալու պահանջին կողմնակից եղող Վասակին, հայերը դաւանան որակեցին: Եւ Վասակ անունը հայոց մէջ, մինչեւ այսօր, դաւանանի ու հայրենադաւի հոմանիշ է:

Բայց հայերը, այս Վասակը իրենք չպատժեցին: Ան մնաց պարսիկներու ծառայութեան մէջ, և ի վերջոյ՝ պարսիկները Վասակը բանտարկեցին և յետոյ ալ վերջ տուին անոր կեանքին...

Որքան որ ծանօթ ենք՝ Հայ Ազգին շահերուն դաւանանող առաջնորդները հայոց կողմէ չեն պատժուած:

Կարգ մը երկրորդական դրուժաններ պատժուած են: Բայց ո՛չ այն առաջնորդները, որոնք հայ Ազգին ու Հայրենիքին մեծ մասին կորուստին պատճառ եղան:

Նայեցէք պատմութեան էջերուն...

Յոյները 1921-թ.ին, Անաթոլիոյ ողբերգութեան պատասխանատու զօրավարները մահուան դատապարտեցին:

Ֆրանսացիները 1914-1918-թ.ի պատերազմին. Վերտէօն-ի ճակատամարտին մեծ հերոսը եղող Մարաջախտ Փեթէն-ը 1945-ին, գերմանացիներուն հետ գործակցած է ըսելով, ցկեանս բանտարկութեան դատապարտեցին...:

Վերադառնանք հայ պատասխանատուներուն:

Մինչեւ 1915 թուականը, իր ժողովուրդով և տարածքով գոյութիւն ունեցող Արեւմտեան Հայաստանին կորուստին-ուղղակի կամ անուղղակի-պատճառ եղած հայ առաջնորդները պատժուեցա՞ն: Ո՛չ:

Ընդհակառակը՝ այս առաջնորդներուն մեծ մասը, մինչեւ այսօր, իբր հերոս կը փառաբանուին:

Եւ եթէ Արեւմտեան Հայաստանի կորուստին պատճառ եղող հայ առաջնորդներէն հաշիւ պահանջուէր, անոնցմէ յետոյ իբր առաջնորդ գործողները և մանաւանդ՝ Լ. Տէր Պետրոսեանը պիտի չկարենար մեր բարգաւաճ Սովետական Հայաստանը քանդել և վերջերս ալ՝ 1 Մարտ 2008-ին, մեր վերջին յոյսը եղող ներկայ փոքր Հայաստանը կործանման սեմին բերել:

Քանի մը օրեր առաջ էր, մեր բարեկամներէն հայ կրօնականի մը հետ, Երեւանի Մարտ 1-ի խոսվութեանց և անոնց պարագլուխներուն մասին կը խօսէինք:

Եւ այս հայրենասէր կրօնականը մեզի ըսաւ թէ՝ «Դուք դեռ, այդ ողբերգական դէպքերուն գլխաւոր դրոյիչը, լաւ չէք ճանչցած:

Խնդրեմ՝ Internet-ի վրայ նայեցէք՝

WWW. AVA. AM կայքէջին: ... Եւ Internet-էն կէս ժամանոց Video-ն դիտելով, Գ. «Անկախ» հանրապետութեան Ա. նախագահին ով ըլլալը սորվեցանք...:

«Նայիրի»ի 18 Մարտ 2008-թիւին մէջ, «Ա. Նախագահ»ին Հայաստանի մէջ ալ Ուքրանիոյ և Վրաստանի մէջ եղածին օրինակով, Փետրուար 2008-ի ընտրութիւններու շրջանին ըմբոստութիւններ պաւորաստելու համար, Monte Carlo-ի մէջ, զբօսանաւի մը վրայ Սիոնիստներուն կամ ասոնց պատուիրակատարներուն հետ համաձայնած ըլլալուն մասին գրած էինք:

Այստեղ կը հրատարակենք այս համաձայնութիւնը վկայող և անոր մանրամասնութիւնները փոխանցող Երեւանի «Ազգ» թերթին լոյս ընծայած գրութիւնը՝

AZG -ARMENIAN DAILY

6 Փետրուար 2008

### « ԵՒ ՆՈՐԻՑ ԲԵՐԵԶՈՎՍԿՈՒ ԱԿԱՆՋՆԵՐԸ »

Նման վերնագրով (КРБИМСКОЕ БУХО) կայքի լրագրող Վիկտոր Կովալենկոն անդրադարձել է Հայաստանում տեղի ունեցող ընտրութիւններին: Ըստ Կայքէջի, Անգլիայում ապաստան գտած յայտնի օլիգարխ [սակաւասլետ] Պորիս Բերեզովսկին ակտիւօրէն ներգրաւուած է Հայաստանեան ընտրութիւնների մէջ: Այսպէս, թերթը գրում է, որ մէկ տարի առաջ Քիւեւում Հանդիսուած է տեղի ունեցել ՀՀԾ-ի առաջնորդների և Բերեզովսկու կողմից ֆինանսաւորուող «Քաղաքացիական ազատութիւններ» հիմնադրամի ղեկավար՝ Ալեքսանդր Գոլդֆարբի միջեւ: Հաղորդում է, որ Հանդիսումը կազմակերպուել է Դաւիթ Ժվանիայի միջնորդութեամբ: Յօդուածի Հեղինակը գրում է, որ ըստ որոշ լուրերի, Հանդիսմանը մասնակցել են նաեւ Հայաստանեան ուժային նախարարութիւնների մի քանի ներկայացուցիչներ: Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններից յետոյ, որը աւարտուեց ընդդիմութեան ջախջախումով, ըստ յօդուածագրի, նորից ակտիւացան կապերը Բերեզովսկու մարդկանց և ՀՀԾ-ականների միջեւ: Վիկտոր Կովալենկոն պնդում է, որ այս անգամ Հանդիսումը տեղի է ունեցել ֆրանսիայում, որտեղ, ըստ Հեղինակի, իբր գտնուում է նաեւ Լեւոն Տէր Պետրոսեանի որդու՝ Դաւիթի «Պալատը գոլֆի դաշտով»: Ըստ յօդուածագրի՝ Հանդիսումը այս անգամ կայացել է Ֆրան-

սիայի ամբաստանաբեր շրջաններից մեկում՝ մի հայ մեծահարուստի զբօսանալի վրայ: Ըստ Վիկտոր Կովալենկոյի, Բերեզովսկին լաւ հասկանալով, որ փետրուարեան ընտրութիւնները Հայաստանում իշխանութիւնը վերցնելու վերջին հնարաւորութիւնն են, Լ. Տէր Պետրոսեանին խորհուրդ է տուել փորձել ուժային տարբերակը՝ «Բազրջանների յեղափոխութիւնը»: Յօդուածի հեղինակը սնդում է, որ Փետրուարի 20-21-ին, ՀՀԾ-ի առաջնորդութեամբ, Երեւանի փողոցներ դուրս կը գան «Լեյծուած» ընտրութիւններից դժգոհ զանգուածները, որոնց հնարաւոր է, որ աջակցեն զինուորական և ոստիկանական որոշ ստորաբաժանումներ: «Խրիմսքի էքօ»-ի լրագրողը պնդում է, որ ուժայիններին շահագրգռելու համար արդէն 7 միլիոն տոլար է փոխանցուել համապատասխան հաշուեհամարին, որի իստին իբր թէ իր կողմնակիցներին յայտնել է առաջին նախագահի շտապի պետ Ալեքսանդր Արզումանեանը: Կայքէջը գրում է նաեւ, որ գումարը փոխանցուել է ինչ-որ «Իսրայէլական ճանապարհով», ոմն Լյուդմիլայի անունով:

*Ինչեւէ. ներկայացնելով այս յօդուածը՝ «Ազգ»ը չի ընդունում այն որպէս վերջին ճամարտութիւն, սակայն իր պարտքն է համարում ընթերցողներին ներկայացնել նաեւ այս տեսակէտը: Թերթը պատրաստ*

*է հրապարակել այդ տեսակէտը հերքող շահագրգռու կողմերի կարծիքը: Յօդուածը ամբողջութեամբ կարող էք կարդալ <http://www.kr-eho.info/index.php?name=New's&op=article&sid=474> կայքէջում կամ «Ազգ»-ի կայքէջի ռուսերէն տարբերակում <http://www.azg.am/RU>:*

ԵՒՐՈՊԱՅԻՆԵՐՈՒՆ՝ ՍԻՈՆԻՍՏՆԵՐՈՒ ԽԱՄԱՃԻԿԸ ԸԼԼԱԼՆՈՒՆ ՆՈՐ ԱՊԱՅՈՅՅԸ՝

«ԵՒՐՈՊԱՆ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ՊԱՏԺԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ»:

Որովհետև Սիոնիստներուն՝ իրենց կամակատարին առաջնորդութեամբ կատարած Հայաստանը Լիբանանի, Ուրբանիոյ և Վրաստանի նման քառասային վիճակի վերածելու դաւադրութիւնը բարեբախտաբար չյաջողեցաւ... Ուստի կրկին ու կրկին պիտի ըսենք՝

Մինչեւ ե՞րբ պիտի տեսէ Սիոնիստ կոչուած աշխարհի մեծագոյն Մաֆիային ժողովուրդները բաժանելով, ժողովուրդներուն տարբեր դաւանանքներու պատկանող հատուածներուն միջեւ թշնամութիւն ներմուծելով անոնց վրայ իշխելու հրէշային քաղաքականութիւնը:

Ահա, Թուրքիոյ նման հողեր գողնալով անոնց վրայ իսրայէլեան պետութիւն հիմնածներուն սահմանակից երկիրներուն ճակատագիրը՝

1.- Զարուբանդ, եղբայրասպան պատերազմի զոհ, բաժան-բաժան եղած Իրաքը:

2.- 60 տարիներէ ի վեր ամէն օր ցեղասպանութեան ենթարկուող Պաղեստինը:

3.- Ամէն վայրկեան ժայթքելու հակամէտ, հրաբխանման երկիր մը՝ Լիբանանը:

...Եւ խորհիլ, որ Սիոնիստները այս բաժանելու ճամբով իշխելու ռազմավարութիւնը, աշխարհի բոլոր կողմերը ամէն օր կը կիրարկեն:

Վերջին օրինակը տրուեցաւ՝ Taliban-ներու վերածուած Boudhiste-Lama-յեական կրօնականներու կողմէ, Թիպէթ-ի մէջ...

... Եւ մինչեւ այսօր կը շարունակուի, Սիոնիստներուն խամաճիկը եղող երկիրներուն մէջ:

His Masters Voice-ի եւրոմիութեան խողովակները, այս Boudhiste-Taliban-ներուն կատարած- ծրագրուած սադրանքները իբր առաջնակարգ լուր կը տարածեն:

Բնական է՝ այս ցոյցերուն բուն նպատակը շատ զօրացած և աշխարհի տնտեսական գրեթէ հզօրագոյն ուժը դարձած Չինաստանը՝ ներսէն բաժանելու և կործանելու Սիոնիստական ծրագիրներուն առաջին փորձերն են:

Եւ Սիոնիստները կը շահագործեն Օգոստոսի 2008-ին, Չինաստանի մէջ կատարուելիք Ողիմպիական խաղերը: Կը ջանան խանգարել այդ խաղերուն խաղաղ ու բնական պայմաններու մէջ կայացումը:

Ողիմպիական խաղերուն յայտագրին մաս կը կազմէ՝ Ողիմպիական բոցին տարբեր երկիրներէ անցնելով մինչեւ Չինաստան հասցուիլը: Հակաչինական ցուցարարներ և նաեւ Պուտինիսթ կրօնականներ ջանացին արգելք ըլլալ այս երթին:

Եւ հեռատեսիլները այս քանի մը հազար ցուցարարներուն կատարած բողոքի արարքները որպէս առաջնակարգ լուր կը ներկայացնեն...

... Այս Ողիմպիական բոցին անցքը արգիլելու միտող գլխաւոր ցոյցերը, անցեալ շաբաթ Փարիզի մէջ կատարուեցան:

Եւ Ողիմպիական բոցին տողանցքը, այս հակացոյցերուն պատճառաւ, Փարիզի մէջ չկատարուեցաւ:

Եւ ֆրանսական կառավարութեան պատասխանատուները, այս ցոյցերը պատրուակելով, Չինաստանի իշխանութիւններուն Թիպէթի վերաբերող քաղաքականութեան դէմ յայտարարութիւններ կատարեցին: Մինչեւ (→էջ 3)

**HARATCH**  
 LE PREMIER JOURNAL ARMÉNIEN EN EUROPE FONDÉ EN 1927

ՇՈՒԲՐԱ - ԿԻՐԱԿԻ  
 ԱՊՐԻԼ 19-20  
 SAMEDI-DIMANCHE  
 19-20 AVRIL  
**2008**

**ԵՐԵՎԱՆ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ  
 ՊԱՏԺԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ**



**Ո՞Վ Է ՀԱՅՈՒՆ ԲՈՒՆ ԹՇՆԱՄԻՆ... (Շար. էջ 2-էն)**

անգամ Sarkozy-ն երկդիմի ելույթով մը յանձնարարեց որ Չինաստանը, Թիպեթի խնդրով, Տալալի Լամայ-ի հետ բանակցութիւններու սկսի:

Չինաստանի պատասխանը շատ շուտ հասաւ... Թիպեթը Չինաստանի նահանգներուն մաս կը կազմէ: Թիպեթը մեր ներքին խնդիրն է: Թիպեթցիները Չինացի են» ըսաւ Փեքին:

Այսինքն՝ Չինաստանը ֆրանսացիներուն ըսել ուզեց.

«Դուք նախ, ֆրանսացի չեղող Զորսիքացիներուն դէմ ձեր կատարած բռնութիւններուն մասին մտածեցէք»:

**\*\***

Կը կարծենք, որ ֆրանսացիներուն հակաչինական այս վերջին կեցուածքը, ֆրանսայի տնտեսութեան համար շատ աննպաստ հետեւանքներ պիտի ունենայ:

Չինաստանէն վերջերս եկող լուրերը, ֆրանսայի համար շատ փայլուն չեն:

Չինացիները, հակազդելով ֆրանսացիներուն բռնած հակաչինական կեցուածքին, Internet-ի ճամբով Չինացիներուն և ուրիշներու կը յանձնարարեն, որ այլեւս ֆրանսական ապրանք չգնեն և չգործածեն:

Այս առթիւ ծանուցուեցաւ նաեւ, որ Չինական հակազդեցութիւնը մանաւանդ ֆրանսական “Carrefour” հաստատութեան դէմ եղած է:

Որովհետեւ Carrefour-ը Չինաստանի մէջ ամէնէն շատ մասնաճիւղ ու ծաւալ և ամենամեծ առեւտրական գործունէութիւնը ունեցող ֆրանսական հաստատութիւնն է:

Եւ մտածել՝ որ մէկուկէս միլիառ բնակչութիւն ունեցող Չինաստանի մէջ Carrefour-ի եկամուտը ի՞նչ առասպելական գումարներու կը հասնի...

Այս հաստատութեան հանդէպ Չինաստանի հակազդեցութիւնը բացատրելով ըսուեցաւ.

«Ֆրանսական «Զարըֆուր» հաստատութիւնը Տալալ Լամային թիկունք կանգնող հաստատութիւններէն մէկն է»:

Եւ մենք, ֆրանսա հաստատուելէ միջոց մը յետոյ տեղեակ եղանք, որ Carrefour-ի տէրերը հրեաներ են:

**\*\***

18 Մարտ 2008 թուակիր «Նայիրի»ի մէջ գրած էինք թէ՛

«Ոսկիի գիներուն մէկ տարուան մէջ օնսը 300 տոլարէն 1000 տոլարի բարձրանալը՝ պատերազմի վտանգի նշան է»:

Իրապէս ալ, սա վերջին շրջաններուն, Աշխարհի տնտեսական վիճակը վտանգաւոր նշաններ ցոյց տալ սկսած է:

Ընթերցողներս ալ անպայման նկատած ըլլալու են, որ Ամերիկայի մէջ Supreme ըսուած կալուածային Credit-ներուն ստեղծած տագնապը՝ աշխարհի բոլոր դրամատուներուն շատ մեծ վնասներ կրելուն պատճառ եղաւ:

Այս վնասը հազար միլիառ տոլարէն աւելի է-ըսողներ կան:

Այսօր ալ տեղեկացուցին, թէ Ամերիկայի մեծագոյն դրամատուներէն մէկը եղող “City Groupe”-ը տասը հազար պաշտօնեայ գործէ հանելու որոշում տուած է:

Այս վիճակը չհռչակուած սնանկութիւն ըսել է:

Վերջին շրջաններուն բոլոր ուտեստեղէններուն գիները յիսուն առ հարիւր տղած են:

F.A.O.-ն (Ուտեստեղէններու և Երկրագործութեան Միջազգային Կազմակերպութիւնը) տեղեկացուց, թէ Աշխարհի վրայ հարիւր միլիոններով մարդիկ անօթի մնալու վտանգին ենթարկուած են:

Այս բոլոր երեւոյթներուն իմաստը այն է, որ Աշխարհ դէպի քաոսային վիճակ կ'առաջնորդուի ինքնաբերաբար:

Եւ երբ աշխարհի այս անստոյգ վիճակը կը տեսնենք, կրկին ու կրկին կը մտաբերենք հրեաներու անպաշտօն թագաւորը եղող՝ Հենրի Զիսինճըրի ասկէ տասը տարիներ առաջ ըսածները.

«Յառաջիկային կատարուելիք աթոմական պատերազմէն առնուազն 50 միլիոն մարդ կրնայ վերապրիլ:

Եւ այս վերապրողները բոլորովին նոր աշխարհ մը կը կերտեն»:

Իրապէս ալ, Սիոնիստներուն կողմէ իրենց ծրագիրներուն գործադրութեան համար կիրարած ռազմավարութիւնը ա՛յն աստիճան անմարդկային և հրէշային է, որ եթէ այսպէս շարունակուի, խելագարած մարդկութեան մասը պիտի կործանէ այս Աշխարհը:

Մաղթենք, որ Չինացիներուն իմաստուն քաղաքականութիւնը վերջ կու տայ Սիոնիստներուն աշխարհը դէպի քաոս առաջնորդող իշխանութեան:

\* \* \*

1915-ի Եղեռնի 93-րդ տարելիցի այս օրերուն, ինչպէ՛ս չյիշենք Ռուբէն Սեւակին դեռ 1911-ին կատարած նախատեսութիւնները՝

«Սակայն ստոյգ, ստոյգ կ'ըսեմ ձեզի, վտանգը մեծ է, շա՛տ մեծ, անելի մեծ քան կրնանք ենթադրել:

Ժամանակն է հակազդելու՝ հակազդե՛նք: Մեզի նոր Ոսկեդար մը պէտք է, նոր Ոսկեդար մը:

Այլասերո՞ւմ, ոչ՝ վերածնունդ...»

1911 - Լոզան

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ»

Եւ մտածել՝ որ Ռուբէն Սեւակի «Այլասերո՞ւմ, ոչ, վերածնունդ» ըսած տարիներուն, Գրիգոր Զօհրապի առաջնորդութեամբ մեր խելացի կարծուած [իսկութեան մէջ տխմար] «Մեծերը»՝ ֆարմաստնութեան ճամբով թուրքերուն հետ եղբայրութիւն կը քարոզէին:

\* \* \*

### ԺԱՆՆԻ ՍԵՒԱԿ-ԻՆ

### ԱՆՀԱՒԱՏԱԼԻ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Ժաննի Սեւակ 27 Հոկտեմբեր 1915-ին, Լոզանէն Պոլիս՝ Գերմանական դեսպանատան նամակ մը կը գրէ:

Այս նամակը Գերմանացիներուն 1945-թ.էն սկսեալ և մինչեւ այսօր Հրէական Holocauste-ին պատճառաւ ենթարկուած անվերջանա ի անէծքներուն նախատեսութիւնն ու իրականացումն է:

Ահա այդ նամակը՝

«Պոլսոյ կայսերական Գերմանիոյ դեսպանատան.

Աստուծոյ սիրոյն՝ Գերմանացիներուն դէմ կատարուած այս սարսափելի ամբաստանութիւններուն իրականութիւն չըլլալը ապացուցանելու համար,

ամենագրու կերպով միջամտեցէք թրքական իշխանութիւններուն մօտ՝ ազատեցէք ինչ որ կարելի է փրկել: Փրկեցէք անմեղ կանանց, երախաներուն, հիւանդներու և ծերերու արիւնը, որ երկինք կը բարձրանայ: Գերմանիոյ վրայ նզովք, Գերմանիոյ վրայ անէծք կրնայ տեղալ, եթէ Գերմանիա չ'ընէ այն ամէնը, ինչ որ կը գտնուի իր երկաթեայ ուժերուն ներքեւ:

Լոզան

27 Հոկտեմբեր 1915

ՀԵԼԷՆ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ԾՆԵԱԼ՝ ԱԲԷԼ»

Այս նամակը՝ իր գերմաներէն բնագիրով, Մարտ 2008-ին, հրատարակուեցաւ FRANKFURT-ի ADK (ARMENISCH-DEUTSCHE KORRESPONDENZ) պարբերաթերթին մէջ:

ADK պարբերաթերթին խմբագիրը՝ Dr. Raffi Kantian այս թիւին մէջ Ռուբէն Սեւակի մասին ծաւալուն ուսումնասիրութիւն մը հրատարակած է:

1995-թ.ին, «Նայիրի»-ի առաջին թիւերէն սկսեալ Ռուբէն Սեւակի մասին, անոր ստեղծագործութեան, անոր գաղափարականին, անոր կեանքին և նահատակութեան մասին իբր Ռուբէն Սեւակի եղբօրորդին, իբր խղճի պարտք մեր գիտցածները և լսածները ջանացինք հրապարակել:

Բայց միշտ յոյս ունէինք, որ Ռուբէն Սեւակի մասին նոր տուեալներ, նոր գրութիւններ, նոր փաստաթուղթեր կրնան գտնուիլ:

Եւ մեր այս յոյսը վերջերս իրականացաւ:

Քանի մը ամիսներ առաջ էր՝ Նիւ Եորքէն Փրօֆ. Վահագն Տատրեանը հեռաձայնեց և ըսաւ, թէ իր բարեկամը՝ թուրք Փրօֆ. Taner Akçam-ը թրքական արխիւներէն Ռուբէն Սեւակի սպանութեան և Ռուբէն Սեւակը սպաննող ոճրագործներուն մասին նոր փաստաթուղթեր գտած է:

Եւ Փրօֆ. Մ. Տատրեանը մեզի տուաւ Minnesota-ի (USA) համալսարանը պատմագէտի ամպիոն ունեցող Փրօֆ. Taner Akçam-ի հեռախօսի համարը, և մենք հեռաձայնեցինք անոր, շնորհաւորեցինք ու շնորհակալութիւն յայտնեցինք Ռուբէն Սեւակի մասին կատարած նոր յայտնագործութեան համար:

Եւ Թաներ Աքչամ մեզի հետեւեալ տեղեկութիւնները տուաւ.

«Հայկական թերթերուն մէջ գրուած է, թէ Ռուբէն Սեւակը և իր չորս բախտակիցները սպաննող «Քիւրտ Ալօ»ն և միւս ոճրագործները, Չանդըրը-ի զինուորական հրամանատար Մէհմէտ Իզզէթ-ի կողմէ Tüney գիտի մօտերը ձերբակալուած և Չանդըրը տարուած են և հոն, նորէն զինուորական հրամանատար Մէհմէտ Իզզէթ-ը, այս բոլոր ոճրագործները սպաննել տուած է:

Հայկական թերթերուն մէջ տրուած այս տեղեկութիւնները իրականութեան չեն համապատասխաներ:

Որովհետեւ թրքական արխիւներուն մէջ իմ գտած փաստաթուղթերս կ'ապացուցանեն, որ Քիւրտ Ալօ և միւս ոճրագործները Չանդըրը-ի բանտէն Պոլիս՝ Թալաթ Փաշա-ին աղերսագիր դրկած են: Եւ Թալաթ Փաշան մասնաւոր հրամանագիրով Քիւրտ Ալօն և միւս ոճրագործները ազատ արձակել տուած է:

Ես, մօտ ատենէն, այս ողբալի դէպքերուն մասին գիրք մը պիտի հրատարակեմ, որուն մէջ պիտի գտնէք այս մասին բոլոր տեղեկութիւնները»:

Քսանի մը օրեր առաջ վերջապէս, Պոլիսէն ստացանք Թաներ Աքչամ-ի հրատարակած այս գիրքը:

Եւ այս գիրքին մէջ նշուած գտանք Փրօֆ.ին ըսած բոլոր ցաւալի իրադարձութիւնները:

Այս գիրքին վերնագիրն անգամ ինքնին շատ տպաւորիչ է –  
“ERMENI MESELESI HALLOLUNMUSTUR”  
[ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ՝ ԿԱՐԳԱԴՐՈՒԱԾ Է]

Շատ ծանօթ եղելութիւն է, թէ ցեղասպան Թալաթը 1915-ի Եղեռնէն քանի մը ամիսներ յետոյ, գոռոզաբար յոխորտացած էր.

«ՍՈՒԼԹԱՆՆԵՐԸ ԴԱՐԵՐՈՎ ՉԿՐՅԱՆ ԿԱՐԳԱԴՐԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ: ԵՍ, ՀԱՅԿԱՆ ՀԱՐՅԸ, ԶԱՆԻ ՄԸ ԱՄՍՈՒԱՆ ՄԷՋ ԿԱՐԳԱԴՐԵՑԻ»:

Թանէր Աքչամի գիրքին վերնագիրը, Թալաթ-ի այս գոռոզ խօսքերուն ակնարկութիւն և վկայութիւն է:

\*\*

Այստեղ կը հրատարակենք՝

1.– Պէյրուս 1960-ին լոյս տեսած, Կարօ Գէորգեանի «Ամէնուն Տարեցոյցը»ին մէջ հրատարակուած՝ «ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԵՒ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆՑ ՎՐԻԺԱՌՈՒՆ ՄԷՀՄԵՏ ԻԶԶԷԹ ՊԷՅ» վերնագրով գրութիւնը:

2.– ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄԻ ՅՈՒՆՈՒԱՐ 2008-ին Պոլիս հրատարակուած “Ermeni Meselesi Hallolunmustur” վերնագրով գիրքին առաջին էջին նկարը, ու նաեւ այս գիրքին մէջ Ռուբէն Սեւակի սպանութեան, ոճրագործներուն և Թալաթ փաշայի մասին փաստաթուղթերով տրուած զգայացունց տեղեկութիւնները՝

**ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ - ԿԱՐՕ ԳԵՈՐԳԵԱՆ, ՊԷՅՐՈՒԹ 1960, էջ 223**

**ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԵՒ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ**

**ՍՊԱՆՈՒԹԵԱՆՑ ՎՐԻԺԱՌՈՒՆ ՄԷՀՄԵՏ ԻԶԶԷԹ ՊԷՅ**

Տարեգրքիս անցեալ տարուան Հատորով Հրատարակեցինք Արամ Անտոնեանի յուշերը, Դանիէլ Վարուժանի, Ռուբէն Սեւակի և նոյնքան դժբախտ իրենց երեք ընկերներուն վայրագ սպանութեանց մասին [էջ 134-137]: Արամ Անտոնեան, իր այս յուշերուն մէջ, երախտագիտական սուղերով արձանագրած էր վերաբերումը Չանդըրըի զինուորական Հրամանատար և զինուորագրութեան ճիւղին սլետ Մէհմէտ Իզզէթ Պէյի, որ «Նախախնամութիւն մը եղած էր բոլոր աքսորականներուն համար և սլասուոյ խնդիր դարձնելով իրեն համար՝ գործուած ոճիրը, ամբողջովին բնաջինջ ըրաւ Քիւրտ Ալօն և անոր Հրամաններուն սակ գտնուող Հրոսախումբը»:

– «Պարագաները այնպէս բերին, որ ամենագարհուրելի սլայմաններու սակ գործուած այս ոճիրը անպատիժ չմնայ, – կը գրէր Ա. Անտոնեան: – Թուրք սպայ մը՝ Մէհմէտ Իզզէթ պէյ սլասուոյ խօսք տուած էր Տօքթ. Ռ. Զիլինկիրեանին, թէ ողջ-առողջ պիտի հասնի Պոլիս և թէ, որեւէ վստանգ չկայ ոչ իրեն և ոչ ալ իր ընկերներուն համար: Եւ սակայն, հակառակ Իզզէթ պէյի խոստումին, սպանութիւնները գործուեցան: Իզզէթ պէյ, այս եղածը լսելուն պէս կասողած է: Անմիջապէս հեռագիր մը կը ղրկէ Գասթէմունի Ռէշիտ փաշային, բողոքելով եղածին ուղիւ և աւելցնելով, որ «Զինուորական սլատիւս ոտնակոխեցիք»: Իզզէթ պէյ չբաւականացաւ այս եղածով, այլ ինք անձամբ զնաց Թիւնէյ, քննութիւն կատարեց և իրեն համար սլասուոյ խնդիր մը դարձուց ոչ միայն ոճրագործներուն, այլեւ անոնց ընկերներուն բնաջինջումը: Այս գործը զլուխ հանեց ան անողորմաբար, (→ էջ 4)

### Ո՞Վ Է ՀԱՅՈՒՆ ԲՈՒՆ ԹՇՆԱՄԻՆ... (Շար. էջ 3-էն)

Հետապնդելով և սպաննելով բոլորն ալ, անոնց պետէն մինչեւ յետինը մեղսակիցներուն, և ասիկա՝ տաքը տաքին, շատ կարճ ատենուան մը մէջ»:

Կը վերատպենք այս քանի մը տողերը Հրատարակութեանը առթիւ Մէհմէտ Իզզէթ պէյի լուսանկարին, որ մեր ձեռքն անցաւ, անցեալ տարուան Հատորի պատրաստութենէն յետոյ: Կ'արժէր տեղ տալ ատոր, ըսելու Համար նաեւ, որ Իզզէթ պէյ եղաւ մէկը այն Հազուագիւտ թուրք պաշտօնատարներէն, որոնք չկրցան իրենց մէջ խեղդել մարդասիրական զգացումները և իրենց կեանքն ու դիրքերը վտանգելու գնով, օգնեցին մահապարտ բազմութիւններուն:

Նկարին տակը, նոյն ինքն՝ Իզզէթ պէյի ձեռքով գրուած է. — «Քանզըրը ախըր ասքէր շիւպէսինին տէօրտիւնճի պէօլիւք քոմանտանը միւլազիմ էվվէլ Մէհմէտ Իզզէթ էֆէնտի» [Չանդըրըի զինուորագրութեան ճիւղին չորրորդ վաշտի հրամանատարը՝ Ա. տեղակալ Մէհմէտ Իզզէթ էֆէնտի]:

\*\*

Փրօֆ. Թանէր Ազչամ իր «Ermeni meselesi hallolunmustur»- «Հայկական հարցը կարգադրուած է» վերնագիրով գիրքին մէջ հրատարակած այս փաստաթուղթերը, թէ՛ Ռուբէն Սեւակի սպանութեան և թէ՛ Հայ Ազգի ցեղասպանութեան համար բացառիկ կարեւորութիւն ունին:

Այս գիրքին մէջ Թանէր Ազչամ փաստաթուղթերով կ'ասպացուցանէ, թէ Թալաթ փաշա անձամբ ծրագրած և գործադրել տուած է Ռուբէն Սեւակի սպանութիւնը՝ Չանդըրը-ի Իթթիհատ Վէ Թերաքքի կուսակցութեան պատասխանատու Gemal Oguz-ի գլխաւորութեամբ:

Եւ սպանութեան գործադրուելէն յետոյ ալ, նոյն ինքն՝ Թալաթ, անձամբ դրկած (Chifre-ով) ծածկագիր հեռագիրներով, ազատ արձակել տուած է ոճրագործները:

Մենք կ'ուզենք հրասպարակաւ շնորհակալութիւն յայտնել Փրօֆ. Թանէր Ազչամին՝ Ռուբէն Սեւակի սպանութեան և հայկական ցեղասպանութեան շուրջ մինչեւ հիմա գաղտնի մնացած եղելութիւն ու մանրամասներ լուսաբանող իր այս բացառիկ յայտնագործութիւններուն համար:

\*\*

Մեր գրութեան սկիզբը նգոված էինք հայ դաւաճանները և Ազգին վնասարարները որոնք հայկական ցեղասպանութեան պատճառ կամ գիտակցաբար թէ ակամայ մեղսակից եղան և այս ցեղասպանութեան հե-



Մէհմէտ Իզզէթ պէյ «Վրիժառու» թուրք սպան

**Taner Akçam**

**'Ermeni Meselesi Hallolunmustur'**

Osmanlı Belgelerine Göre  
Savaş Yıllarında  
Ermenilere Yönelik Politikalar

տեւանքով ալ մեր հայրենիքին 90 առ հարիւրը կորսնցուինք:

Այսօր մեծ եղեռնին 93-րդ տարելիցն է:

Հայ ժողովուրդը 24 Ապրիլ 2008-ին կրկին պիտի յիշատակէ մեր անպատիժ մնացած ցեղասպանութիւնը:

Ինչպէ՞ս չնզովել անոնց, որոնք գործեցին հայկական ցեղասպանութիւնը, ազգասպանները որոնք ցարդ չեն պատժուած, անոնք որ մեղսակից եղան եղեռնագործութեան բայց մինչեւ այսօր անոնցմէ հաշիւ չէ պահանջուած, և ոչ ալ Ազգին բռնախլուած իրաւունքները վերադարձուած են հայութեան:

Եւ հայ ազգը մինչեւ այսօր դեռ կ'աշխատի և կը պաղատի, որ հայկական ցեղասպանութիւնը ընդհանուր ճանաչում գտնէ:

Այդ սլատճառաւ կրկին պիտի հառաչենք՝ Երանի, թէ Արդարութեան ձեռքը անցեալ և նորեկ դաւաճանները և պատասխանատուները պատժէ:

8 Ապրիլ 2008 թուակիր «Նայիրի»-ի մէջ գրուած էր թէ՛ «...Եւ ժամանակը պիտի գայ և Ռուբէն Սեւակին իրական արժէքը պիտի գնահատուի»:

Վերջին շրջաններուն գոհունակութեամբ կը տեսնենք, թէ Ռուբէն Սեւակի մասին թերթերուն մէջ զարթօնք մը կայ:

Եւ զանազան տեղեր Ռուբէն Սեւակի մասին ելոյթներ, հանդիսութիւններ կը կատրուին:

Ուրիշ եղելութիւն մը՝ որ մեզի շատ ուրախութիւն պատճառեց:

24 Ապրիլ 2008-ին, Փարիզի մէջ հայկական ցեղասպանութեան ոգեկոչման օրերուն, Ռուբէն Սեւակի դուստրը՝ Շամիրամ Սեւակ Փարիզ հրաւիրուած է, որ Փարիզի L'ARC DE TRIOMPHE-ի յուշարձանին առջեւ կատարուելիք արարողութեան, Անժանօթ Զինուորի կրակը Շամիրամ Սեւակ ինք բոցավառէ իբր խորհրդանիշ-Ներկայացուցիչ 24 Ապրիլի նահատակներուն:

Այստեղ կը հրատարակենք այս մասին լոյս տեսած յայտագրին մէկ մասը:

*COMMÉMORATION*

*DU 93ème ANNIVERSAIRE DU GÉNOCIDE*

*PARIS*

Mercredi 23 Avril

~ 18h: Ravivage de la flamme au Soldat inconnu par Shamiram Sevag, survivante du génocide et fille du poète-écrivain Roupen Sevag, accompagnée d'enfants, à l'Arc de Triomphe, place Charles de Gaulle-Etoile. 19h: Veillée des jeunes - Concert et lancement officiel de la pétition pour la reconnaissance par les Turcs du génocide, en présence d'Ali Ertem. Parvis de Notre-Dame de Paris.

Jeudi 24 Avril

11h30: Réception à la Mairie de Paris- Hommage aux victimes du génocide rendu par Bertrand Delanoë, dans les Salons de L'Hôtel de Ville de Paris (invitation obligatoire).

16h30: Rassemblement et prises de paroles: \*Pour rendre hommage aux 1,5 millions

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ (ԻԲՐԹԷ) ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**ԱՅՍՕՐ, 24 ԱՊՐԻԼ 2008,**

ԹՈՒՐՔԵՐՈՒ ԿՈՂՄԷ ԳՈՐԾՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
Ասկէ տասը տարիներ առաջ էր: Լոզանի մէջ, Շընեի Հոգեւոր Հովիտ Դոկտ. Աբէլ Մանուկեան եւ Գանատաբնակ Տիկնի Մարօ Մանաւեան մեզի նուիրեցին vidéo-cassette մը, որուն վրայ մեր բուն հայրենիքը՝ Արեւմտեան Հայաստանը եւ Թուրքերուն բարբարոսութիւններն փրկուած, մեծ մասամբ կիսափրկուած վիճակի մէջ եղող պատմական յուշարձանները դիտելու մեծ, բայց նաեւ տխրութեամբ պարուրուած հաճոյքը ունեցանք:

Տեսաւերիզը պատրաստող Լուս Անճելըսաբնակ, նախկին Ճիպիւնցի (Արեւմտեան Հայաստան, Հոմնկրայի մօտ) ընտանիքի գաւակ՝ Արմեն Արոյեանն էր, որ ամեն տարի Ամերիկայէն դէպի Արեւմտեան Հայաստան ճամբորդութիւններ կը կազմակերպէր, որուն կը մասնակցէին կին եւ այր՝ շատ մը հայրենասէր հայեր: Եւ Արմեն Արոյեան այս ուղեւորութիւն-ուխտագնացութիւնները ինք կը նկարէր եւ կը ձայնագրէր:

Այս՝ դէպի մեր արմատները, դէպի Մայր Հայրենիք ճամբորդութիւններուն իբր ուղեցոյց, շատ անգամ կը մասնակցէին Մետրոպ Արք. Աշճեանի եւ Դոկտ. Հրանդ Մարգարեանի նման հմուտ անձնաւորութիւններ, որոնք իրենց տուած բացատրութիւններով անկի կ'իմաստատարէին ու կ'արժեւորէին այս բնոյթի ուխտագնացութիւնները:

Այս տեսաւերիզը սկզբնաւորութիւն մը եղաւ, եւ մենք կայ հաստատեցինք Լուս Անճելըսաբնակ Արմեն Արոյեանին հետ: Եւ ան մեզի ուղարկեց դէպի Արեւմտեան Հայաստան կատարած գրեթէ բոլոր ուխտագնացութիւններուն տեսաւերիզները:

Եւ այս ձեւով, առանց Արեւմտեան Հայաստան երթալու, ճանչցանք մեր բուն հայրենիքը, անոր ամեն մէկ քաղաքը, գիւղը եւ ամեն մէկ Սուրբ յուշարձանը: Եւ այս տեսաւերիզովներով ամիթ ունեցանք տեսնելու եւ մտիկ ընելու այդ հողերուն վրայ ջարդերէն ճողոպոտած տարեց հայերու խօսակցութիւնները:

Իրապէս ալ, մեր բարեկամին կատարածը հայապահպանման օգտին իրած բացառիկ գործունեութիւն մըն էր: Անոր տեսաւերիզները՝ Արեւմտեան Հայաստանի պատմական յուշարձանները ձեւով մը փրկեցին թուրքերուն կողմէ բոլորովին բրայջնջուել:

Եւ այդ *վիտեո*ներուն շնորհիւ հայկական պատմական յուշարձանները եւ վայրերը անմահացան:



Տիրահոլչակ Զանդըրը-ի մուտքը ուղեցուցող նշանակը:



Զանդըրը-ի բարձունքին վրայի փլատակ թերղէն՝ ուխտագնաց Արմեն Արոյեան կը դիտէ արհնաթաթախ քաղաքը:



Բայց, այս բոլոր տեսակի զենքերով մեջ պակաս բան մը կար, որ երկար առեկն է վեր մեր միտքը կը չարոյարէր: Ինչո՞ւ 24 Ապրիլ 1915-ի սպանդանոցները եղող Զանդըրըի եւ Այաշի մասին մինչեւ այսօր ո՛չ մէկ նկար, ո՛չ մէկ տեղեկութիւն եւ մանաւանդ, ո՛չ մէկ տեսանկար գոյութիւն ունեցած է:

Մինչգեւ Վրեաները՝ իրենց HOLOCAUSTE-ին վայրերը եղող AUSCHWITZ-ը, DACHAU-ն, BUCHENWALD-ը, եւ նման CAMP DE CONCENTRATION-ները՝ սրբատեղիներու վերածած են:

Իսկ մենք, Զանդըրըն եւ Այաշը ոչ միայն սրբատեղիի վերածած չէինք, այլ՝ նոյնիսկ Հայ կրօնական մը մինչեւ այսօր, Զանդըրը եւ Այաշ չէ համարձակած երթալ եւ նահատակ մտաւորականներուն անյայտ գերեզմաննոցը եղող այդ հողերուն վրայ աղօթք մը մտնելէ...

Այս մտասուեցումներով, զիմեցինք Արմէն Արոյեանին եւ իրմէ խնդրեցինք, որ իր ուխտագնացութիւնը ամբողջացնէ, եւ մինչեւ հիմա ոչ մէկ կրօնականի եւ նաեւ աշխարհականի կողմէ այցելուած, 24 Ապրիլ 1915-ի սպանդանոցները եղող Զանդըրը եւ Այաշ ուխտագնացութեան երթալ:

\*\*\*\*\*

Մեր ուղեգնաց ազգակիցը շատ ճիշդ գնահատելով այս ուխտագնացութեան կարեւորութիւնը, սիրով ընդունեց մեր առաջարկը: Եւ 15 Սեպտեմբեր 2006-ին, ինք եւ իր երկու հայ ուղեցոյցները ինքնաշարժով Պոլիսէն ճամբայ ելան, դէպի առաջին սպանդանոց՝ Զանդըրը:

Զանդըրըի հին քաղաքը պտըտկէ եւ նկարահանկէ յետոյ, մեր ուխտագնաց, յանդուգն բարեկամը, իր երկու ուղեցոյցներով կը դիմեն Զանդըրըի բարձունքը գտնուող պատմական բերդը, ուրկէ ինք իր հայեացքը կ'ուղղէ դէպի վար, հին Զանդըրըի տնակ-բնակարանները, ուր քանի մը ամիս բնակած էին մեր նահատակ մտաւորականները: Եւ հոգեհանգիստ մը կատարելու ինքնամիտմամբ եւ երկիրդածութեամբ կը կարգայ Զանդըրըի մէջ նահատակուած մտաւորականներուն խորհրդանիշը եղող Ռուբէն Մեալի մասին իր հոգեյոյզ դամբանականը եւ կ'ընթերցէ նոյնքան թախծալի մէկ քերթուածը, հերոս նահատակ բանաստեղծէն:

Ուխտագնացները կը փնտռեն նաեւ երբեմնի Հայկական Եկեղեցին: «Նու էր, այժմ քանդուած է՝ կը պատասխանուի: Նոն էր, որ Կոմիտաս Վարդապետ, արտրէ վերադարձէ առաջ, պատարագած էր տարագիր Հայ մտաւորականներուն համար, որոնց մասին նոյնպէս արտրեալ Յովիան Օ. Վարդապետ Կարապետեան պիտի վկայէր յետագային. «Մատուոյն դասին առջեւ ասպետական դիրքով կանգնած էր Տոքթ. Զիլինկիրեան: Կը զգայի թէ ինք, այդ վայրկեանին կը մարմնացնէր մեր ցեղին հաւատքի դիցազնութիւնը: Երկիրդի նշոյլը անգամ չկար իր առնական դէմքին արտայայտութեան մէջ: Մեալ առաջինը եղաւ Ս. Հաղորդութիւն ճաշակող: Զեմ կրնար մտքէս հեռացնել իր այդ օրուան գրաւիչ վեհութիւնը: Կը նմանէր յաղթական կաղնիին, որուն բունը տապալել կը պատրաստուէին փայտահատները...», Յովիան Օ. Վարդապետ Կարապետեան «Հայաստանի Կոչնակ» 1922 թ.:

\*\*\*\*\*

Մեր ուխտատը հայրենակիցը եւ իր երկու հայ ուղեցոյցները, հոգեպէս շատ ընկճուած վիճակով կը բաժնուին Զանդըրըն, եւ կ'երթան դէպի 24 Ապրիլ 1915ի երկրորդ սպանդանոցը եղող Այաշ քաղաքը:

Այաշ արտորուած Հայ մտաւորականները այնտեղ շատ ծանր պայմաններու մէջ գտնուած էին, քանի որ, բոլորն ալ մնացած էին բարտարկուած: Իրենց արգիլած էին դուրս գալ: Եւ Այաշ արտորուած Հայ մտաւորականներէն շատ քիչեր Պոլիս վերադարձան: Գրեթէ բոլորն ալ նահատակուեցան:

Եւ այս անիծեալ Այաշէն, Արոյեան եւ իր ընկերները, ինքնաշարժով Պոլիս վերադարձի ճամբուն վրայ, ինքզինքնին, սիրելի անձի մը յորդարկաւորութենէն վերադարձողի հոգեմիճակի մէջ զգացեր են:

\*\*\*\*\*

Մենք կը հաւատանք, որ Արմէնի եւ իր ընկերներուն Զանդըրը եւ Այաշ կատարած ուխտագնացութիւնը՝ պատմական բացառիկ ձեռնարկ մըն է: Եւ մենք ունինք այսօր Զանդըրըի եւ Այաշի սպանդանոցներուն նկարները: Եւ ունինք մանաւանդ ուխտագնացութիւնը յաւերժացնող տեսանկարը:

Հազար շնորհակալութիւն ձեզի՝ Արմէն Արոյեան, Սարգիս Սերոբեան եւ Պայծար Վարդանեան: Գիտակից Հայ ժողովուրդը երախտապարտ է ձեզի:



Ճեղասպան թուրքին խորհրդանիշը եղող Այաշ-ի հին քաղաքի տխրալուջ «Սինարե»:



24 Ապրիլ 1915-թ.ին հայ մտաւորականներուն սպանդանոցը եղած Այաշ-ի մէջ, այսօրուան «Նշան»-ի տեսանկարը:

## Ն Ի Ս

### Մ Ի Օ Ր Ե Ա Յ Ի

#### ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍԸ

Անկասկած, հոգեթով պահերու դուռ կը բանան մեր Միօրեայի ամսագրի հանդեսները: Այս ուսումնական տարուանը՝ 2007-08, տեղի կ'ունենայ Կիրակի, Յունիս 15ին, անցնող եղանակներու նման Պարսամեան շքեղ սրահը:

Այլ եւ ձախ պարզուած մեր Ֆրանսական եւ հայկական դրոշները կը զարդարեն բեմը: Եւ, ահա, կ'երեւին երեք տասնեակէ աւելի աղջնակ ու տղայ, Միօրեայի գունագեղ շապիկներով: Տէրունական աղօթքէ ետք կը հնչեցնեն Փրանսական եւ հայկական փառերգները:

Բացման խօսքը կ'արտասանէ կըրթական յարկիւր անձանձիւր տնօրէնուհին՝ Տիկին Շաքէ Յակոբեան Փլաուան: Կը յիշեցնէ թէ օրուան հանդէսը նուիրուած է ասկէ 30 տարի առաջ հերոսական պայքարով մեր հայրենիքին անկախութիւնը ապահոված եւ առաջին Հանրապետութիւնը հիմնած «խենթեր»ուն Նոյնպէս ասկէ երկու տասնեակ տարի առաջ մեր պատմական Արցախը ազատագրած մարտիկներուն: Այս նուհետեւ կը յիշեցնէ, կրկին սըր տաշարժ խօսքերով, թէ ներկայիս ալ մահու կենաց պայքար կը մը

ղենք, պայքար յանուն մեր ազգային ինքնութեան պահպանման: Ի՞նչ մա՛ լեզու, Մշակոյթ, գլխաւորաբար: Գոչ կ'ուզէ ծնողներուն սատարել հայկական կրթարանին, տոկոս կամ ջով, յամառ ողիով հետամտել նորահասներու՝ իրենց զաւակաց հայեցի դաստիարակութեան գործը: Զայն նկատել սրբազան առաքելութիւն:

Յայտագիրը կը սկսի փոքրերու «Նապաստակներ» ներկայացումով: Առաջին կարգէն ութ փոքրիկներ, երկու սեռէ, խինդ-ծիծաղով, ուրախ-զուարթ կը ցատքուտեն, աջ ձախ կը դառնան իրենց փոքր տարիքին այնքան պատշաճ, յարմար գողտր շարժումներով: Այսպէս թէ այնպէս կը «պարեն», հարկաւ: Երկու անընդմէջ: Յաջորդ կարգի արգէն չափահաս աղջնակներ եւ տղաներ, կը ներկայացնեն Յ. Թումանեանի «Ոսկիի Կարասը»: Վերջապէս «մեծերը», «հասունները» վերի կարգերու կ'երեւին համարձակ կեցուածքով: Այսպէս, «Անունը» փոխասացութիւն խաղարկութեան մը շրջանակով եւ, թատերակ մը՝ «Միծամեայ բժիշկը» խորագրեալ, Յակոբ Թորոսեանի:

Այլապէս տպաւորիչ կը գտնենք արտասանութիւնները՝ «Լարարազցիները» (Լուսինէ Պալաթեան) եւ սփիւռքահայ քերթող ժագ Յակոբեանի «Մէկ ենք մենք» (հաւաքական) եւ ասոնց յաջորդած Յ. Յակոբեանի «Հրաժեշտի խօսքը»: Յանկուցիչ, իրապէս, քանի բոլորն ալ աչքի կը զարնեն մեր լեզուին հայող իրենց մաքուր, հարազատ առօգանութեամբ: Այնուհետեւ, ծափեր խլող հայկական պարերը՝ ազգային տոհմիկ տարազներով եւ վերջապէս փակումը չորս ոգեւորիչ երգերով:

Հաղորդավարուհին՝ Միօրեայի փաստակաշատ ուսուցչուհի Տիկին Անոյշ Սերովբեան:

Իսասաւանդութիւնները, ինչպէս միշտ, տեղի կ'ունենան Զորեջաթ թիօրերը (յաւելեալ ծամեր Եաբաթ օրերը, վերապահուած աւարտականներու): Ուսուցչուհիներն են տիկիներ Ազնիւ Հէքիմեան՝ Ա. կարգ, Թիլտա Ալման՝ Բ. կարգ, Անի Թէմըլէն՝ Գ. կարգ, Անոյշ Սերովբեան՝ Դ. կարգ: Եաբէ Յակոբեան՝ Գլխուան՝ վերջին աւար

տական կարգ:

Այլ առիթով մեր գնահատանքը յայտնած ենք Միօրեայի տարիներէ ի վեր հաստատած կրօնագիտութեան եւ Հայց. Եկեղեցւոյ պատմութեան նուիրուած դասերուն համար, մեր մատրան մէջ, Նիս: Դասերը հմտօրէն կը վարէ գաղութիա հողեւոր հովիւը՝ Վաչէ Քհնյ. Հայրապետեան: (Ի՞նչ թէ օրինակը վարակիչ դառնար նաեւ այլոք):

Ուսուցչական կազմը լրիւ դարձրեն լու մտօք աւելցնենք, թէ երգուսոյցն է Տիկին Անոյշ Բարսեղեան, պարուսոյցը՝ Օր. Վարդուհի Պօղոսեան:

Հուսկ բանքը կ'արտասանէ մեր հողեւոր հովիւը: Վաչէ Քհնյ. ըստ արժանւոյն կը գնահատէ Տիկնանցի աշխատանքը, զայն կը նկատէ յոյժ ազգօգուտ: Յորդորը կ'ըլլայ աչքի լոյսի նման սիրելի փայտի վաւրեանին, Զգտիլ պահել ու տարածել մեր Ռակեղինիկը յայտնօրէն նորահասներու մօտ: Ապա՝ «Հայախօս Պատանի»ի խիստ պատուաբեր մրցանակը կը յանձնէ Քաջիկ Պաղտասարեանի: Մոյն մրցանակը, ինչպէս գրած ենք արդէն, հաստատած Արապեան ընտանիքի կողմէ, կը տրուի հայերէնի դասերու մէջ առաջին հանդիսացող, Մայրենին իրօսակցական առօրեայ լեզու դարձուցած սաներու:

\* \* \*

Ներկաներուն հրամցուած յայտագիր – գրքոյկը, միշտ գունատիպ, նկարուն ու ծաւալուն (մեծադիր 80 էջ) այս անգամ եւս բովանդակալից կրնանք նկատել: Իսկապէս, տեղեկատուական բնոյթով սոյն պարբերականը (որակումը այնքան ալ տեսլ չենք գտներ) նախ եւ առաջ Միօրեայի եւ, աստիճանով մըն ալ Տիկնանց միամեայ կեանքին մանրամասներու պատկերացումով կը յատկանշուի: Պարտինք աւելցընել սահող տարուան ազգ. կեանքին հայող կարծ թէ երկար, «հեռագրական» ոճով շարագրեալ կամ ոչ, բազմապիսի լուրերը: Յայտնապէս գլխաւորները:

Նախորդներուն պէս, այս մէկն ալ կը բովանդակէ շահեկան գրութիւններ: Վրէժ Արմէն («Հորիզոն»ի աւագ խմբագիր) Հայ մարդու սրտցաւ զգայնութիւններով, ակընկալութիւններու մատնանշման ճամբով կը ձգտի ուղիղ ուղի մը հաստատել ազգային առաջադրութիւններուն մէջ: Պայծառ ու վսեմ ձրգտումներ: Վաչէ Քհնյ. Հայրապետեան կը յորդորէ ամուր կառչել ազ

գային ողբոյն, գիտակցական ճամբով: Այս տողերուն հեղինակը կը փորձէ խիտ զոյններով ներկայացնել Հայաստանի անդրանիկ Հանրապետութեան հիմնումն ու հաստատումը՝ սա ԳՊամեակին առթիւ: Տալիտա Հաճեան, աղջիկը մեր ողբացեալ Տիգրան Հաճեանի, Փրանսերէն կ'անդրադառնայ Յեղասպանութեան ժխտումի չոր իրականութեան, Փրանսական որոշ չըջանակներու մէջ: Նիւթին կը մօտենայ մտաւոր ճամբով: Յովհաննէս Չիլինկիրեան դառնօրէն կը մատնանշէ ցաւոտ իրողութիւն մը: Թէ հայ մը տաւորականութեան գլխաւոր աքտորալայրերէն, Չանդրըրն եւ Այաչը, անձանօթ տեղանուններ կը մնան Ապրիլեան սգաւորներուն համար: Բարեբախտ երեւոյթ, որ գտնուեր է անձ մը՝ Արմէն Արոյեան, որ երկու ընկերակիցներով իբր այցելու «Հոգեյոյզ դամբանական» մը արտասաներ է տխրահուշակ վայրին մէջ (Չանդրըր):

Վերջակէտի փոխան հաստատենք Յայտագիր – գրքոյկը հետաքրքրական եւ շահեկան է միանգամայն:  
Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ

**ՆԵՒԱԾ, ԽԱՐԽԼԱԾ ԱԾՄԱՐԸ ՄԸ...**  
«ԱՐԵՒՍՏԵԱՆ ԱԾՄԱՐԸ ԸՍՈՒԱԾ ԵՒ ՍԻՈՆԻՍՏՆԵՐՈՒ ՁԵՌՔԸ ԵՂՈՂ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՈՂՄԷ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՈՂ ԱԾՄԱՐԸ»:

ԱՆԶԵՐՔԵԼԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է, ՈՐ ԻՐԱՔԻ ԴԷՍ ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ՍՈՒՏԵՐՈՒ ԿՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ ՊԱՏԵՐԱԶՄ ՄԸՆ ԷՐ:

...ԵՒ ԻՐԱՔԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԻԼԻՈՆՆԵՐՈՎ ԱՆՄԵՂ ՄԱՐԴԻԿ ՄԱՀԱՑԱՆ:

... ԵՒ ԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՄԵՐԻԿԱՅԻՆ 3000 ՄԻԼԻԱՌ ՏՈԼԱՐԷ ԱԻԵԼԻ ԱՐԺԵՑ...

... ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ՃՈՐՃ ՊՈՒՇ-Ը ՎԵՐՋԵՐՍ ԵԻՐՈՊԱ ԵԿԱԻ ՀՐԱԺԵՇՏ ՏԱԼՈՒ...

... ԵՒ, ԻԲՐ ԹԷ՝ ՄԱՐԴԱՍԵՐ ԵԻՐՈՊԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ, ԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՐՁԻԳ ՊՈՒՇԻՆ ԴԷՍ ԶԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ԸՆԴՎՋՈՒՄԻ ՑՈՅՅԵՐ ՉԿՐՑԱՆ ԿԱՏԱՐԵԼ...

...ՈՐՈՎԶԵՏԵԻ, ԳՐԵԹԷ ՈՉ ՄԷԿ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԾԱՐԺՈՒՄ, ԱՌԱՅ ՍԻՈՆԻՍՏՆԵՐՈՒ ՀՐԱՄԱՆԻՆ, ՉԻ՝ ԿՐՆԱՐ ԿԱՏԱՐՈՒԻԼ...:

ՈՐՈՎԶԵՏԵԻ, ԻՐԱՔԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԿԱՏԱՐՈՒԵՑԱԻ...  
1.- ԻՍՐԱՅԷԼԸ ԱՐԱԲՆԵՐՈՒՆ ԴԷՍ ՊԱԾՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ,  
2.- ԻՐԱՔԵԱՆ ԶԱՐԻԻԴԻՆ ԿՐԱՅ ՁԵՌՔ ԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ,  
3.- ԾԻԻ ԵՒ ՍԻՐՆՆԻ ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՄԸ ԲՈՆԿԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:  
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԵԺ ՈՒՐԲԵՆԵԱՆ]

Այստեղ կը հրատարակենք NOBEL-ի Տնտեսութեան մրցանակակիր Ամերիկացի Joseph E. Stiglitz-ի վերջերս հրատարակած գիրքին առաջին էջին և կողքին նկարները.

“Aujourd’hui, c’est clair : l’invasion de l’Irak a été une terrible erreur.” Une erreur qui va coûter à l’Amérique quelque 3000 milliards de dollars, et encore ne s’agit-il que d’une estimation basse.

Թարգմանութիւնը՝  
JOSEPH E. STIGLITZ  
«Պատերազմ մը որ  
3000 միլիար. տոլար կ’արժէ»  
EDITIONS-FA YARD- PARIS 2008

\*\*\*

Այսօր այլեւս յստակ է...  
Իրաքի դէմ արշաւանքը, սարսափելի սխալ մըն էր: Եւ այս սխալը Ամերիկային պիտի արժէ 3000 միլիար տոլար, և այս գումարը դեռ նուազ գնահատանք մըն է:

**JOSEPH E. STIGLITZ**  
Prix Nobel d'économie  
**LINDA J. BILMES**

# UNE GUERRE À 3000 MILLIARDS DE DOLLARS

fayard

Կրնա՞ք երեւակայել... Ամերիկան 3000 միլիար տոլար կը ծախսէ՝ սուտերու վրայ հիմնուած պատերազմի մը համար...

... Եւ մտածել՝ որ յետամնաց Ափրիկեան և Ասիական երկիրներուն մէջ, մարդու մը օրական ապրուստը հազիւ մէկ տոլար կ’արժէ...

... Եւ հարկ է մտածել նաեւ, որ այս 3000 միլիար տոլարով ի՞նչ լաւ գործեր կրնային կատարուիլ ի նպաստ մարդկութեան...

Բայց Ամերիկայի տխրահռչակ նախագահը՝ կրտսեր Պուշ իր Եւրոպա կատարած վերջին շրջապտոյտին կրկին յայտարարեց, թէ՛ «Չի՛ գղջար Իրաքի դէմ պատերազմ կատարելուն համար»:

Բնական է՝ Պուշ իր հաշիւները ունի Իրաքի պատերազմէն գոհ ըլլալու համար: Անով...

1.— Իսրայելը փրկուեցաւ Սատտամի նման «Ազգայնամուլ»է մը, որ կրնար ամբողջ արաբական աշխարհը Սիոնիստական Ամերիկայի դէմ պայքարելու մղել:

Եւ հարկ է նկատել, որ այսօրուան արաբական պետութիւններու ղեկավարները, մեծամասնութեամբ, Ամերիկայի կամակատարներն են:

2.— Իրաքի բաժանումով Մեծն Իսրայելի ստեղծման ճամբան բացուեցաւ:

3.— Եւ այսօր, Աշխարհի քարիղի երկրորդ մեծ պահեստին տերը եղող Իրաքը, Ամերիկացիներուն ձեռքն է:

4.— «Բաժանէ և իշխէ» սկզբունքին համեմատ՝ բաժանեցին Շիիները և



Սիւննիները:

... Եւ այսօր, եղբայրասպան ահռելի պատերազմ մը տեղի կ'ունենայ Իրաքի մէջ, Շիի-ներու և Սիւննի-ներու միջեւ:

5.- Իրաքի պատերազմին համար անհաւատալի և առասպելական գումարներ ծախսած է:

Եւ Ամերիկացի ժողովուրդը, այս բեռին տակ, դեռ շա՛տ դժուար տարիներ պիտի անցընէ:

Բայց... որո՞ւն հոգը...

Այս պատերազմը այնքա՛ն անմեղներու մահուան պատճառ եղած է:

Պատերազմի հրծիգները խիղճ ունի՞ն արդեօք, որ այս մասին մտածեն:

... Պատերազմի ծախսերէն գոյացած եկամուտը, մեծ մասամբ, զէնքի արտադրութեան գործարաններու տէրերուն գրպանը պիտի երթայ...

Եւ այս ծախսերէն գոյացող եկամուտներէն մեծ մասամբ պիտի օգտուին այս պատերազմը ծրագրած ղեկավարները, ասոնց պատկանած կազմակերպութիւնները և ընկերութիւնները:

\* ... Եւ մանաւանդ՝ պիտի օգտուին անդամները NEO CONSERVATEUR կոչուող կազմակերպութեան որ, իբր թէ, ազգասէր Ամերիկացիներու միութիւն մըն է...:

... Իրականութեան մէջ, Paul Wolfowitz-ի և Richard Perle-ի նման Սիոնիստ հրեաներն են այս կազմակերպութեան առաջնորդները:

Բնական է, որ այս պատերազմի հրծիգները Իրաքի մէջ, իրենց գործակատարները և խամաճիկները ունին:

Եւ Իրաքի համար յատկացուած դրամները այս խամաճիկներու միջեւ կը բաժանուին:

Այստեղ կը հրատարակենք 18 Յունիս 2008 թուականի ֆրանսական «Le Monde» թերթի առաջին էջին լուրը ուր կ'ըսուի, թէ Իրաքի մէջ, խարդախութիւններու պատճառաւ, 23 միլիարդ տոլար անհետացած է:

\*\*

Այս յօդուածին վերնագրին մէջ ըսինք, թէ՛

«Նեխած, խարխլած Աշխարհ մը՝

«Արեւմտեան Աշխարհ ըսուած և Սիոնիստներու ձեռքը եղող Ամերիկայի կողմէ առաջնորդուող Աշխարհը»:

Որովհետեւ վերջին շրջաններուն Ամերիկայի մէջ կատարուած դրամական և սակարանային անհաւատալի ելեւէջները, դէպի սնանկացում առաջնորդող տնտեսա-ընկերային դրութեան մը ախտանշաններն էին:

**Le Monde**

MERCREDI 18 JUIN 2008

**L'Irak est rongé par la fraude : 23 milliards de dollars disparus**

Corruption Depuis 2003. l'argent destiné à reconstruire le pays a été largement gaspillé

11 Սեպտեմբեր 2001-ին, Նիւ Եորքի Trade Center-ի դէմ կատարուած ահաբեկչական ողբերգութենէն յետոյ [որուն հեղինակները մեծամասնութեամբ Սաուտցի հայրենասէրներ էին], Ամերիկան իր ապագայ իշխանութիւնը պաշտպանելու հեռանկարով Նիւ Եորքի ահաբեկչութիւնը պատրուակեց՝

1.- Եւ Ամերիկան 2001-ին նախ Աֆղանիստանը գրաւեց. որովհետեւ Աֆղանիստանի վրայ իշխողը ամբողջ կեդրոնական Ասիան կրնայ հակակշռել [նոյնպէս՝ Ռուսիան և Չինաստանը հսկողութեան տակ առաւ Աֆղանիստանը գրաւելով]:

2.- Եւ 2003-ին ալ, կրկին յարձակեցաւ Իրաքի վրայ՝

Ա.- Արգելք ըլլալու համար ապագայ Սաուտական ազգայնական շարժումին: Բ.- Իրաքը գրաւելով անոր քարիւղի հարստութիւնները ձեռք անցուց...

Գ.- Եւ այսօր Ամերիկան իրաքէն սկսելով, կը հակակշռէ ամբողջ Միջին Արեւելքը:

Դ.- Իսկ իրեն համար ամէնէն կարելորդ՝ Սիւննիներու և Շիիներու միջեւ եղբայրասսայան պատերազմ ստեղծեց, որ Ամերիկան և Իսրայէլը, հանգիստ պայմաններու մէջ, իրենց ծրագիրները կարենան գործադրել...:

... Եւ G.W.Bush-ը 2003-ին, Սատտամի իշխանութիւնը կործանելէ յետոյ յայտարարեց, թէ՛ «Իրաքի պատերազմը աւարտած է»:

Մինչդեռ, 2003-էն մինչեւ 2008, մինչեւ այսօր, հինգ տարիներէ ի վեր, Իրաքի պատերազմը դեռ կը շարունակուի...

Եւ Ամերիկեան 300,000 [երեք հարիւր հազար] հոգինոց զինուորական հսկայ ուժ մը կը ստիպուի պատերազմական վիճակի մէջ պահել:

... Բնական է՝ այս աննախընթաց պատերազմը շատ սուղի պիտի արժէ Ամերիկային:... Եւ ինչպէս որ վերը նշեցինք՝

NOBEL-ի տնտեսութեան մրցանակակիր Joseph E. Stiglitz կը բացայայտէ՝ «Իրաքի պատերազմը՝ Ամերիկային 3000 միլիարտ տոլար պիտի արժէ»:

\* \* \*

Եւ շատ նախատեսելի էր, որ այս առասպելական ծախսերը Ամերիկայի տնտեսութեան վրայ շատ ծանր հետեւանքներ պիտի ունենային...

Եւ 2007-էն ի վեր, Ամերիկեան արժեթուղթերու սակարանները սկսան անկում արձանագրել:

Եւ ինչպէս որ շատերուն ծանօթ իրականութիւն է՝ «Եթէ Ամերիկեան սակարանները «Հարթուիս» ըլլան, աշխարհի բոլոր սակարանները՝ «Կռիբ»ով կը վարակուին»:

Եւ 2007-էն սկսեալ, աշխարհի դրամատուները մեծ վնասներու ենթարկուեցան, որուն պատճառը Ամերիկայի մէջ SUBPRIMES կոչուած կալուածական վարկերուն անգանձելի ըլլալուն իրողութեան յայտնուիլն է: Եւ այս պատճառով Ամերիկեան մեծագոյն դրամատուները սնանկացան:

Եւ Ամերիկայի մէջ անգանձելի վարկերուն վրայ յենելով հրապարակ հանուած արժեթուղթերը գնող Եւրոպական դրամատուները, Ամերիկեան դրամատուներուն հետ գործակցած ըլլալուն համար, սնանկանալու աստիճանի հասնող վնասներ կրեցին:

Օրինակ՝ Ֆրանսայի առաջնակարգ դրամատունը եղող “Société Générale”ը գրեթէ 50 միլիարտ տոլար կորսնցուց:

**TÜRKLERİN (SÖZDE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ**  
**“VIYANA DÜSTÜ”**  
**“ADRIYATIK-TEN ÇİN SEDDI-NE”**  
**“MAÇ DEGİL SAVAS”**

BU UÇ BASLIK DA BIZIM YAZIMIZ DEGİL.

“VIYANA DÜSTÜ” VE “ADRIYATIK-TEN ÇİN SEDDI-NE” İSTANBULDAKI TÜRK GAZETELERİNİN BASLIKLARI. “MAÇ DEGİL SAVAS” İSE KÜRTLER TARAFINDAN AVRUPADA YAYINLANAN “ÖZGÜR POLİTİKA” GAZETESİNİN BASLIĞI.

1.- İSTANBULDA YAYINLANAN BİR GAZETE, BİRİNCİ SAHİFESİNİN YARISINI KAPLIYAN BÜYÜKLÜKTE PUNTOLARLA YAZMIS “VIYANA DÜSTÜ”

20 HAZİRAN 2008 CUMA GÜNÜ VIYANADA OYNANAN VE TÜRKLERİN PENALTILARLA GALİP GELDİKLERİ HİRVATİSTAN-TÜRKİYE MAÇININ, VIYANANIN DÜSMESİYLE NE ALAKASI VAR ?

FAKAT BUGÜN HÂLÂ SOYKIRIMCI İTTİHAT VE TERAKKİCİLERİN İKTİDARDA OLDUĞU TÜRKİYEDE, EN KUÇUK FIRSATTA 1683-DE VIYANAYI KUSATAN ÇAPULCU VE KATLIAMCI OSMANLI ZİHNİYETİ HORTLAR, VE VIYANADA OYNANAN FUTBOL MAÇININ GALİBİYETİNİ, VIYANANIN DÜSMESİNE BENZETİRLER.

2.- İSTANBULDA YAYINLANAN “ZAMAN” GAZETESİ BASLIK ATMIS “ADRIYATIK-TEN, ÇİN SEDDI-NE”

ÇÜNKÜ BOSNADAN.... AZERBEYCAN KADAR OSMANLI İSGALİNDE ZORLA MÜSLÜMAN OLAN HALKLAR, BİR KAÇ MESİL SONRA PROPAGANDALARIN SONUCU, TÜRKİDEN FAZLA TÜRK OLMUSLAR.... İSTE BU PSÖDOTÜRKLER BOSNADA, ÜSKÜPTE, BAKUDA, VIYANADAKİ FUTBOL MAÇINDA TÜRKLERİN HİRVATİSTANI YENMESİNİ KUTLAMISLAR.

FAKAT “ZAMAN” GAZETESİNİN ADRIYATIK-TEN ÇİN SEDDİNE KADAR” BASLIK ATMASININ BASKA BİR SEBEBİ VAR.

ÇÜNKÜ 1993-DE CUMHUR BASKANI OLAN FARMASON SÜLEYMAN DEMİREL, SOVYETLER BİRLİĞİNİN ÇOKMESİNDEN SONRA, İSTAHİ AÇILMIS VE İTTİHATÇILARDAN DA İLERİ GEDEREK, FASİST-TURANCI ZİHNİYETLE ADRIYATIKTAN ÇİN SEDDİNE KADAR UZANAN “BÜYÜK TÜRKİYE” RUYALARI GÖRMESİNE BAŞLAMISTI.

İSTE “ZAMAN” GAZETESİNİN BÖYLE BİR BASLIK ATMASININ SEBEBİ SÜLEYMAN DEMİRELİN “BÜYÜK TÜRKİYE” ZİHNİYETİNİN FASİST-TÜRKLERİN BEYİNLERİNDE (20 HAZİRAN 2008-DE VIYANADAKİ MAÇTA TÜRKLERİN HİRVATİSTANI YENMESİNDEN SONRA) HORTLAMASININ NETİCESİDİR.

3.- AVRUPADA YAYINLANAN KÜRTLERİN “ÖZGÜR POLİTİKA” GAZETESİNDE İSE, ÇOK GERÇEKÇİ BİR BASLIK YAZILMISTI. “MAÇ DEGİL, SAVAS”

10 HAZİRAN 2008-TARİHLİ “NAİRİ” GAZETESİNDE SÖYLE YAZMISTIK.

“BU TÜRKLER, FUTBOL MAÇINI MI SEYRETMESİNE GELMİSLERDİ ?

YOKSA CENEVRE SEHRİNİ İSGALE Mİ?”

“ÖZGÜR POLİTİKA” GAZETESİNİN YAZDIGINA GÖRE TÜRKLER VIYANADA DA AYNI İSGALCI ZİH-

# ZAMAN

Adriyatik'ten Çin Seddi'ne  
kırmızı-beyaz coşku  
Milli Takım'ın Avrupa  
Şampiyonası'nda yarı finale  
yükselmesi, Balkanlar'dan  
Çin'e kadar büyük bir  
coğrafyayı sevince boğdu.  
Türk bayraklarıyla donatılan  
Üsküp, İstanbul'dan  
farksızdı. Birbirlerine  
sarılarak gözyaşları döken  
binlerce kişi, Avrupa cadde  
lerini trafige kapattı

“ÖZGÜR POLITIKA” GAZETESİNİN YAZDIGINA GÖRE TÜRKLER VIYANADA DA AYNI ISGALCI ZIH- NİYETLE DAVRANMISLAR VE VIYANADA TÜRKLERİN ÇOGUNLUKTA OL- DUGU KISIMLARDA TASKINLIKLAR YAPMISLAR, POLISLER MÜDAHALE ETMIS. YARALANANLAR OLMUS. VE POLISLER ONBIR KISIYI GÖZ ALTINA ALMIS.

FAKAT TÜRKLER VIYANADA YASAK OLMASINA RAGMEN, KORNA ÇALARAK OTOMOBILLE VIYANA SOKAKLARINDA KANLI BAYRAKLARLA SABAHA KADAR GÖSTERILER YAPMISLAR.....

VE BU GÖSTERILERDE, BIZI EN ÇOK ETKILEYEN TÜRKLERIN SU SÖZ- LERI :

“AVRUPA, AVRUPA. DUY SESIMIZI. BIZ GELİYORUZ”.

\* \* \*

VE BIZ DE DIYORUZ KI”

“UYAN AVRUPALI UYAN. TÜRKLER 1683-DE VIYANAYI ZAPTEDEMEDILER.

AMA BUGÜN TÜRKLER VIYANANIN GÖBEGİNDE TÜRK MAHALLELERI KURMUSLAR.

BERLININ YARISI ISE TÜRKLERLE DOLU.

VE YARIN... TÜRKLER BÜTÜN AVRUPAYI ELE GECIRECEKLER.

Յ. Չ.

**ՆԵՒԱԾ, ԽԱՐԽԼԱԾ ԱԾԽԱՐՀ ՄԸ..... (Շար. էջ 2-էն)**

... Աշխարհի ամենավատահելի դրամատուները կարծուած զովցերիական UBS-ը 40 միլիարդ վճաս կրեց:

Եւ վճաս կրող դրամատուներու թիւը անթիւ ու անհամար է:

Եւ կորուստներուն ընդհանուր գումարը դեռ յայտնի չէ: Եւ զրոյցներ կան, որ վճասը՝ հազարաւոր միլիարդներու կը հասնի:

... Եւրոպական դրամատուները ինչպէ՞ս ինկան այս ծուղակը: Նկատե- լով, որ Եւրոպական դրամատուները, մէկու մը վարկ տալու համար, հազար տեսակ քննութիւն կը կատարեն:

Այս դրամատուներուն վարիչները ա՛յն աստիճան միամիտ էին, որ մի- լիարդներով տոլար կորուստի պատճառ եղան:

Կը կարծենք, թէ ասոր յանցանքը, պատճառը Արեւմտեան աշխարհի տնտեսական դիրաբեկ կառոյցին մէջ պէտք է փնտռել:

. «Մատուցում և Պահանջք»ի օրէնքին վրայ յենելով կառուցուած առու- ծախի Աշխարհի սակարաններու մէջ, ամէն օր, միլիարդաւոր տոլարի «Ար- ժեքներ», մէկ ձեռքէն միւսը կը փոխանցուին:

Իրականութեան մէջ [պարզ խօսիմք] սակարաններուն մէջ կաւարուա- ծը՝ «ԽԱՂԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԵՋ ԽԱՂԱՅՈՒԱԾ “POKER”Ի ԿԸ ՆԱՍՆԻ:

Եւ վարպետ խաղացող մը սակարաններու մէջ միլիարդներ կրնայ շահիլ: Ինչպէս որ շատ մը միլիարդաւորներ, իրենց հարստութիւնը կը պարտին՝ սակարաններու ելեւէջներուն: Այս մեծ [սակարանի] հարուստներէն մէկն է՝ Ամերիկայի միլիարդաւոր WARREN BUFFET-ն:

... Ու նաեւ կայ, սակարանի խաղերով հարստացող, տխրահռչակ GEORGE SOROS-ը, որ իր սակարանի խաղերով սնանկութեան մատնած էր շատ մը երկիրներ և մանաւանդ՝ Ասիոյ Հարաւ-Արեւելեան երկիրներուն մեծ վճասներ հասցուցած է:

Բայց, մեզի համար, G. Soros-ին պատճառած մեծագոյն վճասը Ուքրանիոյ և Վրաստանի մէջ եղած է, ուր Սորոսին իշխանութեան բերած արեւմտեան պետութիւններու խամաճիկները եղող ղեկավարները՝ մինչեւ այսօր կը շա- րունակեն քանդել Ուքրանիան և Վրաստանը:

\* \* \*

Կերը նշած էինք, թէ ֆրանսական Sociéte Générale դրամատուները “Sub- primes” ի պատճառաւ 50 միլիարդ տոլար կորուստ ունեցած է:

# Politika

## Maç değil savaş!

ՄԱՅԻՐԻ

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻԲՐԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
**«ՎԻԵՆՆԱՆ ԻՆԿԱԻ»,**  
**«ԱՏՐԻԱԿԱՆ-ԷՆ ՄԻՆՉԵԻ ՉԻՆԱԿԱՆ ՊԱՐԻՍՊՈՆԵՐԸ»,**  
**«ԽԱՂ ՉԷ, ՊԱՏԵՐԱԶՄ Է»**

Այս Երեք վերնագիրներն ալ մեր գրութիւնները չեն:

«Վիեննան Ինկա», «Ատրիականէն մինչեւ Չինական Պարիսպները»- Պոլսոյ 2 Թրքական Թերթերուն առաջին էջերուն վերնագիրներն են:

Մինչդեռ «Խաղ չէ, սպտերազմ է» գրութիւնը, Երոպայի մէջ քիւրտերու կողմէ Թրքերէն լեզուով հրատարակուող «ÖZGÜR POLITIKA» Թերթին վերնագիրն է:

1.- Պոլսոյ մէջ հրատարակուող Թերթ մը, իր առաջին էջին կէսին ծաւալով ու մեծատառ վերնագիր մը հրատարակեր է՝ «Վիեննան Ինկա՛ւ»

20 Յունիս 2008-ին, Վիեննայի մէջ խաղացուած և թուրքերուն “Penalty”ներով շահած՝ Խրուաթիա-Թուրքիա ֆուտպոլի խաղը՝ ի՞նչ կապ ունի Վիեննայի անկումին հետ:

Բայց, մինչեւ այսօր, ցեղասպան «Իթթիհատ Եւ Թերաքքի»ականներուն իշխանութեան ենթարկուած Թուրքիոյ մէջ, ամենափոքր առիթով, 1683-ին Վիեննան սլաւոնացի-թալանող և ջարդարար Օսմանեան մտայնութիւնը կը վերակենդանանայ, և այս պատճառաւ Վիեննայի մէջ տեղի ունեցած ֆուտպոլի խաղի յաղթանակը՝ Վիեննայի անկումին կը նմանցուի:

2.- Պոլսոյ մէջ հրատարակուող «ZAMAN» օրաթերթին առաջին էջի վերնագիրն է՝

«Ատրիականէն մինչեւ Չինական Պարիսպները»:  
 Որովհետեւ Պոսնիա-էն մինչեւ Ադրբեջան, Օսմանեան շրջանին բռնութեամբ իսլամացած ժողովուրդները, քանի մը սերունդ յետոյ, քարոզչութիւններով Թուրքէն աւելի Թուրքի վերածուած էին:

Ահա, այս PSEUDO-Թուրքերը Պոսնիա-էն ու Սոֆիա-էն մինչեւ Բաքու՝ Վիեննայի մէջ Թրքական ֆուտպոլի խումբին Խրուաթիոյ խումբին դէմ տարած յաղթանակը ցնծութեամբ տօնեցին:

Բայց «ZAMAN» Թերթին «Ատրիականէն մինչեւ Չինական Պարիսպները» վերնագիր դնելը՝ ուրիշ նպատակաւ է:

Որովհետեւ 1993-ին Թուրքիոյ շանրասպետութեան նախագահ եղող Ֆարմասոն Սիւլէյման Տէմիրել-ը, Սովետական Միութեան կործանումէն քաջալերուած և իթթիհատական մտայնութենէն ալ աւելի ծայրայեղ եղող Ֆաշիստ-Թուրանական գաղափարականով, Ատրիականէն մինչեւ Չինական Պարիսպները երկարող «Մեծն Թուրքիա»-ի երազներ տեսնել սկսած էր:

Ահա, «ZAMAN» Թերթին այս տեսակ վերնագիր մը դնելուն նպատակը, Սիւլէյման Տէմիրելին «Մեծն Թուրքիա» մտայնութիւնը, Ֆաշիստ Թուրքերուն ուղեղներուն մէջ [Թրքական խումբին Վիեննայի մէջ տարած յաղթանակէն յետոյ] վերակենդանացնել էր:

3.- Երոպայի մէջ քիւրտերուն կողմէ Թրքերէն լեզուով հրատարակուող «ÖZGÜR POLITIKA» օրաթերթին մէջ մինչդեռ, շատ իրատես վերնագիր մը դրուած էր՝ «ԽԱՂ ՉԷ, ՊԱՏԵՐԱԶՄ Է»

10 Յունիս 2008-ին, «Նայիրի» Թերթին մէջ սապէս գրած էինք՝ «ԱՅՍ ԹՈՒՐՔԵՐԸ ՖՈՒՏՊՈՒԼԻ ԽԱՂ ԴԻՏԵԼՈՒ ԵԿԱԾ ԷԻՆ ԱՐԴԵՕՔ, ԹԵ՞ ԺՐՆԵԻ ՔԱՂԱՔԸ ԳՐԱԻԵԼՈՒ...»:

«ÖZGÜR POLITIKA» թերթին գրածին համաձայն թուրքերը՝ Վիեննայի մէջ ալ նոյն գոռոզ մտայնութեամբ ցոյցեր կատարեր են: Բազմին մեծամասնութեամբ թուրք բնակչութիւն ունեցող թաղերուն մէջ եղած ծայրայեղ արարքներուն պատճառաւ, ոստիկանութիւնը միջամտեր է:

Վիրաւորներ եղեր են: Եւ ոստիկանները 11 հոգի հսկողութեան տակ առեր են:

Բայց թուրքերը (մանաւանդ՝ իրենց խումբին յաղթանակէն յետոյ), հակառակ աղմկելը արգիլուած ըլլալուն, ինքնաշարժերով միևնույն առաւօտ Վիեննայի փողոցներուն մէջ «Թուրքիա, Թուրքիա» աղաղակելով ցոյցեր կատարեր են...

... Եւ այս ցոյցերուն ընթացքին արձակուած և մեզ ամէնէն աւելի տպարած լողունգը հետեւեալն է՝ «Եւրոպա՛, Եւրոպա՛, լսէ մեր ձայնը, Մենք եկած ենք»:



Եւ մենք ալ կ'ըսենք.

«Արթնցի՛ր, Եւրոպացի, արթնցի՛ր... Թուրքերը 1683-ին Վիեննան չկրցան գրաւել:

Բայց այսօր թուրքերը, Վիեննայի մէջ, Թրքական թաղամասեր ստեղծեր են:

Պերլինին կէսն ալ՝ թուրքերով լեցուած է:

Եւ վաղը... Թուրքերը, ամբողջ Եւրոպան ձեռք պիտի անցընեն»:

Թ. 2.

Բայց "Société Générale"-ին կրած վնասներուն մէջ դրամատիրական (Capitaliste) վարչակարգին նեխած և հիւծած ըլլալը ապացուցանող պարագայ մը կայ...

Այս դրամատան պաշտօնեաներէն մէկը որ երեսուն տարեկան Jerome Kerviel անունով երիտասարդ մըն է, որուն պաշտօնը՝ սակարանի մէջ արժեթուղթեր գնել և ծախել է: (Աւելի ճիշդ՝ ձեռով մը սակարանի մէջ թղթախաղ խաղալ է): Անձամբ ինք, Jerome Kerviel-ը դրամատան հաշուեցոյց կատարած առուծախերու ընթացքին, Société Générale-ին 5 միլիարտ տոլարի վնաս կրելուն պատճառ եղած է:

Կրնա՞ք երեւակայել՝ մէկ անձ մը միայն, մէկ միլիոն չէ, հինգ միլիոն չէ, այլ՝ հինգ միլիարտ տոլարով խաղ կը խաղայ և կորուստ կը պատճառէ դրամատան հաշույն:

Այստեղ կը հրատարակենք, ֆրանսական "Le Point" շաբաթաթերթին 19 Յուլիս 2008-ի թիւին մէջ լոյս տեսած նկար մը, որով թերթը, հեգնանքով, այս Société Générale-ին 5 միլիարտ տոլար վնաս հասցնող անձը, ընթերցողներուն կը ծանօթացնէ հետեւեալ նշումով՝



«JEROME KERVIEL Մարդը – որ հինգ միլիարտ կ'արժէ...»

\*\*

(→ էջ 6)



...Ա՛ՅՆ ՕՐԵՐՈՒՆ, ԱՐԱՔԿԻՐԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ  
ՏԷ՛ՐՆ ԷՐ ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ  
ԳԷՈՐԳ ՏԱՐՕՆԻ

– Այդ տարեթիւին, 1912 թուին, հայուքեան Վարդավառ-ի աւանդական տօնախմբութիւնը կը զուգադիպէր Օգոստոս ամսուան երկրորդ կիրակի օրուան: Մանկութեանս օրերուն, լուսահոգի հայրս մանրամասնօրէն կը պատմէր մեզի, թէ Վարդավառ-ի հայկական տաղաւարը, իր եկեղեցական նշանակութեան կողքին ունէր նաե՛ւ իր ժողովրդական իմաստն ու տարողութիւնը: Ան կը ծանրանար յատկապէս ա՛յն կէտին վրայ, թէ Արաքկիւրի հայութիւնը կը յարգէր մեր աւանդական սովորութիւնները և տոհմային բարքերը և, ստոր համար սլ, կառչած կը մնար իր ա՛յն հաւատքին, իր նախահայրերէն իրեն աւանդ մնացած ա՛յն համոզումին, թէ հի՛ն ժամանակներուն, Վարդավառ-ը ընդունուած է հայութեան Նո՛ր Տարին, ուր, վարդեր փոխանակուած են որպէս նշան՝ յարգանքի ու մեծարանքի և տիրապետող եղած է ջուրի սրսկումը, որպէս խորհրդանիշ՝ յաւերժականութեան:

Արաքկիւրի հայրենակ բաղամասերուն մէջ, մեր բնակարանը ընդարձակ էր և շրջապատուած՝ որբատունկերով և պողառու ծառերով հարուստ այգիներով:

Մանկութեանս օրերէն, յիշողութեանս մէջ վա՛ր կը մնայ 1912 տարեթիւի Վարդավառ-ը: Եկեղեցական արարողութիւններէն ետք, սզգականներ ու մերձաւոր բարեկամներ փութացին դէպի մեր բնակարանը, ուր, մուտք գործեցին հայկական ժողովրդական երգերով:

Հիւրերուն մէջ նկատեցի պատկառազոտ՝ անձ մը, որուն կը հանդիպէի առաջին անգամ ըլլալով. խի՛ստ լուրջ էր: Տղեկ մըն էի տակաւին ու զիս ուղղակիօրէն զարմացուց ա՛յն իրողութիւնը, թէ մինչ ներկաները կը զուարճանային ու կը գրուցէին, ա՛յդ մարդուն խոհո՛ւն դէմքին վրայ ո՛չ մէկ արտայայտութիւն կար. ինքս ինձ հարց կուտայի, թէ այս մարդը ինչո՛ւ այնքա՛ն լուռ է և այնքա՛ն մտածկոտ: Կէսօրուան ճաշի սպասարկութեան պահուն, յարմար առիթ մը գտայ և հօրս հարցուցի ի՛ր մասին:

– Մեր ընտանիքին բարեկամ, սրտամօտ անձ է. առաջին անգամ ըլլալով է, որ մեր տունը կու գայ: Բազմազբաղ մարդ մըն է: Արաքկիւրցի է, մեզի հայրենակից: Բոլորէն սիրուած ու յարգուած հայորդի մըն է և կը կոչուի Արամ Աչըզայաշեան:»

Պրն. Արամ սակաւակեր էր ե՛ւ, միաժամանակ, սակաւախօս:

Ճաշի սպասարկութեան աւարտին, նկատեցի, թէ հօրեղբայրս՝ Հրանդ Եկաւեան, որ ուսանող էր տակաւին և անսահման սէր կը տածէր հանդէպ Գիտութեան և Գրականութեան, նստած է Պրն. Արամին կողքին:

Հօրեղբայրս ոտքի կանգնեցաւ և յայտնեց, թէ Պրն. Արամ խօսք պիտի սունէ:

Կը յիշեմ միա՛յն նախամուտը. ան ողջունեց հիւրերը, շնորհաւորեց անոնց Վարդավառ-ի հայկական աւանդական տօնախմբութիւնը և գրպանէն իր թուղթերը հանելով կարդաց զանոնք մե՛ղմօրէն:

Բարեբախտաբար, Պրն. Արամ Աչըզայաշեան իր ձեռագիրները, մեզի հրածեշտ տալու պահուն, յանձնած էր հօրս: Մասունքի նման զանոնք կը պահեմ տանս մէջ, խարթում:

Տարին երեք անգամ, Ս. Յարութեան տօնին, Ապրիլի 24-ին և Յունիսի 15-ին, կը կարդամ զանոնք. գեղագիր է ու բազմաբովանդակ: Այս պահուն, այդ մասունքէն կրնամ վերյիշել կարեւոր հատուածներ.

...Ա՛ՅՆ ՕՐԵՐՈՒՆ, ԱՐԱՔԿԻՐԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ  
 ՏԷ՛ՐՆ ԷՐ ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ  
 ԳԷՈՐԳ ՏԱՐՕՆԻ

– Արաքկիրի մեր հայութիւնը խաղաղասէր, աշխատասէր ազգ է: Առաքինութիւններ ունի: Ա՛յդ առաքինութիւնն է, որ այսօր կը համախմբէ մեզ, սլառմական այս օրով, Եկառեաններու պատուարժա՛ն ընտանիքին մօտ, հաւատարիմ մնալու համար մեր ազգային արմատներուն:

Այսօր, ա՛յս ընտանեկան միջավայրին մէջ, երբ միասնականօրէն կը ճշեմք հի՛ն ժամանակներու մեր Նոր Տարին, երբ կը վերանայինք մեր անտոսնայի անցեալին, իմաստութիւնը պէ՛տք է ունենանք անսահման զգօնութեամբ և պահանջուած ուշադրութեամբ՝ նայելու նաե՛ւ մեր վաղուան, մեր ապագային, այսինքն՝ հայութեան Գալիքին:

Այսօր ժամանակներէ ստդին, Արաքկիրի մէջ մենք կ՛ապրինք մեր արդա՛ր վաստակով: Ունի՛նք մեր թաղամասերը, ունի՛նք մեր եկեղեցին ու մեր դպրոցը: Ունի՛նք նոյնպէս մեր բնակարանները, գործնք կառուցանած ենք մեր աշխատանքով ու մեր ֆրտիւնով:

Ձխորհինք սակայն, թէ մեզ դիտողներ չկան: Այդքան ալ բարի՛ չըլլանք ենթադրելու, թէ մեզի հակած չա՛ր աչքեր ու չա՛ր լեզուներ չկան:

Կը շեշտեմ կրկին, վերանայինք մեր ազգի Պատմութեան: Անոր տարեգրութիւններուն մէջ արձանագրուած կան իրականութիւններ որոնցմէ դասեր կրնանք քաղել, և, այսօր, աւելի քան երբեք, անհրաժեշտ է որ քաղենք:

Մեր սզգին Պատմութիւնը կը վկայէ, թէ մենք, հայերս, հի՛ն ժամանակներէն ստդին, ամէնուրեք մեր ազգային գոյապայքարը մղած ենք հասնելու համար մինչեւ մեր օրերը, մինչեւ այս քսաներորդ դարասկիզբը:

Պիտի սիրե՛նք ճշմարտութիւնը, մեր ուղղութիւնը անո՛րմէ պիտի ստանանք:

Ա՛յն օրերուն երբ ունեցած ենք Արքայական գերդաստաններ, հզօր կայսրութիւններ, մօտաւոր թէ հեռաւոր, արշաւած են մեր հայրենիքին վրայ, դէպի Հայաստան:

Աւելի ուշ, վայրենի ցեղախուճներ փոխարինած են զանոնք:

Բոլո՛ր ժամանակներու համար, հայերս սիրած ենք մեր Ազատութիւնը: Մարտընչած ենք, մարտիրոսացած ենք որպէսզի մեր ազգին Ազատութիւնը և մեր ազգային ինքնութիւնը աննուան մնան, անխոցելի մնան:

Ա՛յս է պատմական ճշմարտութիւնը: Ճշմարտութիւնը կը շողա՛յ յաւե՛րժ:

Այս պահուն, մի՛ վախճաք երբեք, երբ ըսեմ, թէ մեր ազգային ինքնութիւնը վտանգուած է մեր այս օրերուն: Ջայն պաշտպանելու քաջութիւնը ունինք: Մեր ինքնապաշտպանութիւնը, մեր դիմադրութիւնը պիտի կազմակերպենք անձայն և անաղմուկ: Քաղաքակիրթ ազգ ենք. Գիր և Մշակոյթ ունինք: Առանց ուրիշը խանգարելու, առանց ուրիշին վնաս հասցնելու մենք մեր ազգային ինքնութիւնն ու մեր իրաւունքները պիտի պաշտպանենք խիզախութեամբ:

Անձնապէս հաւատացած եմ և դո՛ւք նոյնպէս, վստահ պէտք է ըլլաք, թէ կրնանք պաշտպանել:

Նախապէս ձեզի խօսած եմ Արեւմտա-Հայաստանի տխո՛ւր իրադարձութիւններուն մասին, անոր տարածքին գործադրուած կոտորածներուն և սպանդներուն մասին:

Անգամի մը համար եւս կարեւորութեամբ կը յայտնեմ. մի՛ վախճաք, հակահայ հալածանքներն ու հայկական կոտորածները կրնան հասնիլ մինչեւ մեր կողմերը:

...Ա՛ՅՆ ՕՐԵՐՈՒՆ, ԱՐԱՔԿԻՐԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ  
ՏԷ՛ՐՆ ԷՐ ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ  
ԳԷՈՐԳ ՏԱՐՕՆԻ

Ա՛մԷ՛Ն ինչի պատրաստ պիտի ըլլանք, ինչպէս ըսի, լուրթեամբ, միա՛սնութեամբ ու համագործակցութեամբ: Մեր ազգային-ֆաղափական կազմակերպութիւնը՝ Ս.Դ.Հնչակեան Կուսակցութիւնը օրը օրին կը հետեւի կայսութեան հող-

վոյթին և՛ ներքին և՛ արտաքին ճակատներուն վրայ:

Մեր հիմնական նպատակակէտն է՝ Արդարութեամբ շարունակել մեր ազգային ազատագրական պայքարը, կասեցնելու համար՝ հսկահայ հալածանքները և հիմնելու՝ Ազատ ու Ինքնավար Հայաստան:»

Վարդավառ-ի այդ տօնական կիրակի օրով, մեր ընտանիքին հրաւիրեալները, խորունկ յարգանքով ունկնդրեցին Պրն. Աչըզպաշեանի պատգամը: Բացարձակ վստահութիւն ունէին իր անձին հանդէպ: Արաքկիրի հայութեան տեղական իշխանութիւններուն հետ ստնչուած բոլո՛ր խնդիրները կարգադրողը ի՛նք եղած էր: Լայնախոհ և անբասիր նկարագրի տէր անձնաւորութիւն էր:



Արամ Աչըզպաշեան

Սրտբացօրէն արուայատուելէ ետք, Պրն. Արամ Աչըզպաշեան հրաժեշտ տուաւ բոլորին և մեր բնակարանէն հեռացաւ ընկերակցութեամբ հօրեղբօրս՝ Հրանդ Եկաւեանին:

Այդ օրերուն, որո՞ւն մտէն կ'անցնէր, որ Արաքկիրի այս երկու հայորդիները, գաղափարի այս երկու ուխտեալ ընկերները, հազիւ երեք տարիներ ետք, միասին կայստան պիտի բարձրանային, սո՛ւրբ դատի համար:»

... 1960-ական թուականներուն, երբ կ'աշխատակցէի Պրն. Սիմոն Սիմոնեանի խմբագրած «Սփիւռք» շաբաթաթերթին, յաճախ կը գրէի նաե՛ւ Քսաններու ազգային-ֆաղափական ուղեգիծին մասին: Այդ տարիներուն, Պրն. Ս. Սիմոնեան, հրատարակչական սոցիալականներով կ'ուղեւորուէր դէպի Եգիպտոս, Սուտան ու Եթովպիա: Այս երկիրներուն մէջ ունէր հաւատաւո՛ր բաժանորդներ, որոնց կանոնաւորաբար կ'առաւէր իր «Սփիւռք»ը:

1964 տարեթիւի ամառնամուտին, հեռաձայնային հաղորդակցութեամբ, Պրն. Սիմոն Սիմոնեան հրաւիրեց զիս իր մօտ, իր «Սեւան» հրատարակչատան կեդրոնատեղին:

Երբ ներկայացայ իրեն, իր մօտ ինձի մինչ այդ անձանօք հիւր մը ունէր. ոտքի կանգնեցաւ և տպաւորի՛չ լրջութեամբ ըսաւ.

– Տարօնի՛, կը փափաքիմ որ ծանօթանաս բարեկամիս՝ Պրն. Գառնիկ Եկաւեանին, Սուտանի մայրաքաղաք Խարթումէն: Իւրաքանչիւր անգամին, երբ իրարու հանդիպինք ինչ մասիդ կը հարցնէ:»

Եկաւեան ազգանունը երբ լսեցի, հարց տուի.

– Պրն. Գառնիկ լսա՞ծ էք, Քսաններու կրօնքաւարներէն՝ Պրն. Հրանդ Եկաւեանի մասին:»

**...Ա՛ՅՆ ՕՐԵՐՈՒՆ, ԱՐԱՔԿԻՐԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ  
ՏԷ՛ՐՆ ԷՐ ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ**  
ԳԷՈՐԳ ՏԱՐՈՆԻ

Իր թույս դեմքը կարմրեցաւ ակնթարթի մը մէջ ու սլառասլախանց.

– Ի՞նչպէս թէ չէ. ան կրտսերագոյնն էր նաե՛ւ հօրեղբայրներու:»

Իր ազնի՛ւ տիկնոջ և իր զաւակներուն հետ, տասնօրեայ այցելութեամբ, Պրն. Գառնիկ Եկաւեան ժամանած էր Պէյրուս: Անոնք իրենց ամառնային արձակուրդը անցկացուցին Լեռնալիբանանի Պրումմանա գիւղին մէջ, ուր, յաճախ, իրենց հրաւերով ու ցանկութեամբ, իրարու հանդիպելու երջանկութիւնը ունեցանք:

Սոյն գրութեան սկզբնաւորութեան հրատարակած պատմայո՛ւշ հաղորդումները կը կազմեն ամփոփումը՝ ի՛ր յիշատակներուն և ի՛ր սպրումներուն սկզբնական մէկ մասին:

Պրն. Գառնիկ Եկաւեան տակաւին կ’ասլէր իր ծննդավայրին՝ հայաբնակ Արաբկիր–ի յաւերժավա՛ր՝ տեսիլքով. կը հաւատար թէ յառաջիկային, մարդկային մտքի բարեշրջումներուն հետ, համաշխարհային Պատմագրութիւնը իր հաստատած փաստարկութիւններով սլիտի գար, սլիտի չուշանար վերահաստատելու Արդարութիւնը և՛ ճանչնալու՝ հայ ազգին կրած վիշտն ու տառապանքը:

– Վստահ եմ, որ Պատմագրութիւնը, մասնաւորապէս՝ հզօ՛ր տէրութիւններու Պատմագիտական Ակադեմիաները, իրենց կատարելիք խմբային ուսումնասիրութիւններով, վասն պատմական ճշմարտութեան և, պատմագէտներու ճշգրի՛տ հետախնդրութիւններով, սլիտի ընդունին թէ անարդարութիւնը և ցեղասպանութիւնը պարտադրուեցան հայ ազգին, Պատմական Հայաստանի բոլո՛ր տարածաշրջաններուն վրայ,» հաստատեց Պրն. Գառնիկ Եկաւեան ու եզրափակեց. – Պրն. Արամ Ալըզպաշեանի դիմաբանակը, մանկութեանս անմե՛ղ ժամանակներէն, դրոշմուած է յիշողութեանս մէջ, ազգասէ՛ր հայու իր ազնուակա՛ն տիպարով: Մեր հօրենական բնակարանին մէջ իր տուած պստղաւիճին հետեւողականութեամբ, անձնապէս սիրած եմ ճշմարտութիւնը և կեանքիս բովանդա՛կ տեւողութեան ֆալած՝ անոր բացած լուսատու արահետներուն վրայ:

Համաշխարհային ընտանիքը այժմէն իսկ կը խօսի հայութեան դեմ գործադրուած խժոճութիւններուն և բռնարարքներուն մասին: Օտարազգի պատմաբաններ կը խորհին հրապարակել իրենց կատարած ուսումնասիրութիւնները՝ 1894–95–ի հայկական սպանդներուն, 1909–ի Ատանայի կոտորածին և 1915 տարեթիւի եղեռնագործութեան մասին:

Ճշմարտութիւնն ալ իր իրաւունքները ունի և, լիայոյս եմ, որ ան սլիտի յաղթանակէ հայ ազգի մարդկային և հողային դատի արդարութեան վերստիւստատումին համար:»

*Պէյրուս, Յունիս 2008*

**ՆԵՒԱԾ, ԽԱՐԽԼԱԾ ԱԾԽԱՐՀ ՄԸ..... (Շար. էջ 3–էն)**

Jerôme Kerviel-ը դրամատան գանգատով, Փարիզի ռստիկանութեան կողմէ ձերբակալուեցաւ և քանի մը օրեր խիստ հարցաքննութեան ենթարկուեցաւ:

Բայց, միջոց մը ետք, թերթերը տեղեկացուցին, թէ Jerôme Kerviel ազատ արձակուած է: Որովհետեւ ռստիկանութիւնը և դատաւորները Jerôme Kerviel-ին կատարած արարքին մէջ որեւէ յանցանք... չէին գտած:

Որովհետեւ՝ Jerôme kerviel դրամատիրական վարչակարգին օրէնքներուն հպատակելով, սակարանին մէջ «Առ և Տուր» ըրած է «շատ օրինատր» ձեւով...

Հինգ միլիար տոլար կորսնցուցած էր:

... Jerôm kerviel-ի poker-ի խաղն ալ կ’ապացուցանէ թէ...

Դրամատիրական վարչակարգը իրապէս նեխած և այլեւս իր շրջանը ապրած–անցուցած է:

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ Ի՞ՆՉ ԳՈՐԾ ՈՒՆԻՆ  
ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՄԷՋ:

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ Ի՞ՆՉ ԳՈՐԾ ՈՒՆԻՆ  
ԻՐԱԹԻ ՄԷՋ:

1980-Թ.ՆԵՐՈՒՆ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԼՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ  
ՑԱՆՑԸ՝ ԽՈՐՀՐԴԱՑԻՆՆԵՐՈՒՆ ԴԷՄ  
ՀԱՄԱՁԱՐԿ ԲԱՅԱԾ ԷՐ:  
ՈՐՈՎԶԵՏԵԻ ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ԲԱՆԱԿԸ ՕԳՆՈՒԹԵԱՆ  
ՀԱՍԱԾ ԷՐ ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ  
ՎԱՐՉԱԶԵԻՆ:

ԵՒ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐՈՒՆ ԶԻՆԱԾ ԱՖՂԱՆ  
ԿՐՕՆԱՄՈԼՆԵՐԸ ԿԸ ՊԱՏԵՐԱԶՄԵՆ  
ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԱՖՂԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ:

ԵՒ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ ՅԱԶՈՂԵՑԱՆ ՎԱՐ ԱՌՆԵԼ  
ԱՅՂ ԱՖՂԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ:  
ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԳԼՈՒԽ ԲԵՐԻՆ  
ԿՐՕՆԱՄՈԼ ԱՖՂԱՆՆԵՐԸ:

ԱՅՍՕՐ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ ԱՖՂԱՆԻՍՏԱՆԸ  
ԳՐԱԻԱԾ ԵՆ, ԵՒ ԿԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԻՐԵՆՑ ԻՍԿ  
ՋԱՆԶՈՎ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԳԼՈՒԽ ԲԵՐՈՒԱԾ  
ԿՐՕՆԱՄՈԼՆԵՐՈՒՆ ԴԷՄ:

ԵՒ ԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ՝ ԱՄԷՆ ՕՐ ՀԱՐԻՒՐԱԻՈՐ  
ԱՖՂԱՆՆԵՐ ԿՍՊԱՆՆՈՒԻՆ  
ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ:

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ 2003-Թ.ԻՆ ՅԱՐՉԱԿԵՑԱՆ  
ԻՐԵՆՑ ՄԻՋՈՑՈՎ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԳԼՈՒԽ ԲԵՐՈՒԱԾ  
ՍԱՏՏԱՄԻ ԴԷՄ:

ԵՒ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ, ԱՆՈՆՔ ՄԻԼԻՈՆԱԻՈՐ  
ԻՐԱՔՅԻՆՆԵՐՈՒ ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏՃԱՌ ԵՂԱԾ ԵՆ:

ԻՍԿ ԱՅՍՕՐ, [ԻԲՐ ԹԷ] ԱՋԱՏ ԱՐԵԻՄՏԵԱՆ  
ՄԱՍՈՒԼԸ ԻՆՉՈ՞Ւ ԱՅՍ ՄԻԼԻՈՆԱԻՈՐ ՋՈՂԵՐՈՒՆ  
ՄԱՍԻՆ ՉԻ ԳՐԵՐ:

ԻՆՉՈ՞Ւ [ԻԲՐ ԹԷ] ԱՋԱՏԱՄԻՏ ԵՒ ԱՐԴԱՐԱՍԵՐ  
ԱՐԵԻՄՏԵԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒՆ ՄԵԾ ՄԱՍԸ  
ԱՍԵՐԻԿԱՅԻՆՆԵՐՈՒՆ ԴԷՍ ՉԵՆ ԸՆԴԿՁԻՐ:

ՈՐՈՎԿԵՏԵԻ ԱՐԵԻՄՏԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ  
ՀՐԷԱԿԱՆ “HIS MASTER’S VOICES-Ի ՉԱՅՆՆ Է ՈՐ ԿԸ  
ԼՍՈՒԻ ՄԻԱՅՆ, ԿԱՄ ՀՈՆ ՏԻՐԱԿԱՆ Է:

ՈՐՈՎԿԵՏԵԻ, ԱՐԵԻՄՏԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ,  
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒՆ ԼԵՋՈՒՆՆԵՐԸ ԵՒ ԿՈԿՈՐԴՆԵՐԸ  
ԿԱՊՈՒԱԾ ԵՆ ԴՐԱՄԻ ՈՒԺՈՎ:

ՅՈՎԿԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԷԺ ՈՒԻԲԷՆԵԱՆ]

Յարգելի ընթերցող՝

1995-թ.էն ի վեր, «Նայիրի»-ի մէջ, այս գաղափարները կը յայտնենք:

Թերեւս դուք ալ ձանձրացաք, այս իրականութիւնները տեսական լսելէ:

Բայց, մենք ալ ըսենք, որ այլեւս ձանձրացանք այս իրականութիւնները գրելէ:

Որովհետեւ «Չայն բարբառոյ յանապատի» կը մնան մեր գրութիւնները, գոնէ մեծ մասամբ:

Բայց վերջերս, ֆրանսական “MARIANNE” շաբաթաթերթին մէջ, որ հրեայ Jean-Francois Kahn-ին կը պատկանի [Արդէն ո՞ր կարելոր թերթին տէրը Հրեայ մը չէ...], գրութիւն մը հրատարակուեցաւ, որուն մէջ ըսուածները բացարձակ իրականութիւններ են:



Հրեական թերթի մը մէջ ինչպէ՞ս հրատարակուեցաւ այս տեսակ գրութիւն մը:

Բնական է՝ հրեաները շատ լաւ գիտեն, թէ երբեմն իրականութիւնները պէտք է գրեն, որ շահին վստահութիւնը ժողովուրդին որ յետոյ, կարեւոր գայն, նոյն ժողովուրդը խաբել:

Ահա, 19 Յուլիս 2008-ի "MARIANNE" ի մէջ հրատարակուած՝



Վերի գրութեան թարգմանութիւնը:  
 «Աշխարհ»- Այդ «ԼՈՊԻ»ՆԵՐԸ ՈՐՈՆՔ ԿԸ ՍՊԱՌՆԱՆ ՄՈԼՈՐԱԿԻՆ:  
 Մթնոլորտին ջերմութեան բարձրացումը, նախանիւթերու գիներուն սղանք, սննդամթերքի համաշխարհային տագնապը... Անոնք այս բոլորի մասին ոչինչ կ'ուզեն գիտնալ:

Անոնց համար ամէնէն կարեւորը՝ կարե՛նալ յարատեւ հարստանալն է:  
 "Marianne"ի մէջ հրատարակուած այս գրութիւնը կը կարծենք որ Դրամատիրութիւն, Գաղութարարութիւն կամ Կայսերապաշտութիւն (երեք անուններն ալ նոյն հրէշին թելերն են) կոչուող վարչաձեւին իսկական անուանակոչումն ու մեկնաբանութիւնն կը կազմեն:

Այս հրէշը, դարերու ընթացքին, զանազան անուններով կոչուեցաւ՝  
 IMPERIALISTE-COLONIALISTE-CAPITALISTE: Այսօր ալ կը կոչուի MONDIALISTE:

Բայց ի՞նչ անուն ալ ունենայ այս հրէշը, իր նպատակը նոյնն է՝  
 Ինչպէս որ "MARIANNE"ին մէջ գրուած է՝  
 «ԿԱՐԵՆԱԼ ՏԵԻԱՊԷՍ ՀԱՐՍՏԱՆԱԼ»:

Եւ, հարստանալու համար, ան կը հարստահարէ ու կը կողոպտէ ժողովուրդները: Կը պահէ զանոնք թշուառ:

Հարստահարելու համար ալ, այդ երկիրներուն մէջ, իր խամաճիկները իշխանութեան գլուխ կը բերէ:

Այս հեռանկարով ալ, իր ընչաքաղց որկորը յագեցնելու համար, ժողովուրդներու միջեւ պառակտում և բաժանում կ'ստեղծէ:

Եւ եթէ չյաջողի պառակտել զանոնք, զանազան սուտ պատրուակներով, մէկ կամ միւս երկրին դէմ պատերազմ կը մղէ, կը դառնայ նախաշարժակ...

Զանի մը նախադասութեամբ՝ ա՛յս է MONDIALISTE-ներուն ռազմավարութիւնը:

\* \*

Բայց մինչեւ ե՞րբ պիտի շարունակուի NEO-Colonialiste-ներուն, Նոր Գաղութարարներուն այս հրէշային մարտավարութիւն-ռազմավարութիւնը:

Մենք յոյս ունինք, որ վերածնած Ռուսաստանը և մանաւանդ Չինական ընկերվարական պետութիւնը, այս պատերազմի հրձիգ Արեւմտեան պետութիւններուն կատարած ողբերգութիւններուն վերջ մը պիտի կարենան տալ:

Ինչպէս որ «Նայիրի»ի 1 Յուլիս 2008 թիւին մէջ գրած էինք՝

ՆԵՒԱԾ-ԽԱՐԽԼԱԾ ԱԾԽԱՐՀ ՄԸՆ Է ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱԾԽԱՐՀԸ, ՈՐ ԻՐ ՍԵՆՏՐԱԼԻՅԵԱՆ ՍԵՄԻՆ Է ՀԱՍԱԾ:

Եւ Ռուսիան և մանաւանդ՝ Չինաստանը այսօր, շատ զօրացած են:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԻ ՊԱՀԵՍՏԸ, ՈՐ 2007-ԻՆ 1400 ՄԻԼԻԱՌ ՏՈԼԱՐ ԷՐ, ԱՅՍՕՐ 1700 ՄԻԼԻԱՌ ՏՈԼԱՐԻ ԲԱՐՁՐԱՑԱԾ Է...

Բնական է՝ NEO-COLONIALISTE-ները [Նոր-Գաղութարարները կամ Նոր Կայսերապաշտները] ամէն բան կ'ընեն ու պիտի փորձեն, որ Ռուսաստանը և Չինաստանը խանգարեն, տկարացնեն և բաժանեն:

Ռուսիոյ սահմանին վրայ՝ Ուքրանիոյ, Վրաստանի և Նոյնիսկ Հայաստանի մէջ այս օրերուն կատարուած «Խաղերը» և պատճառուած ներքին յուզումները այդ սադրիչ աշխատանքներուն ապացոյցներն են:

Արեւմտեան Աշխարհի քաղաքակիրթի դիմակ կրող այս հրէշները, Չինաստանի մէջ իրականացուած տնտեսական բացառիկ յառաջդիմութեան դէմ՝ իրենց դասական խանգարիչ, սադրիչ ու խափանիչ դաւերը պիտի փորձեն իրականացնել անպայման:

Իմբերիալիստ Արեւմտեան պետութիւնները մանաւանդ կ'աշխատին, որ խռովութիւններ ստեղծեն Չինաստանի Արեւմտեան մասին մէջ գտնուող Իսլամ Ուլկուրներու մէջ, որոնք Աֆղանիստանի ալ շատ մօտ կը գտնուին, անոր սահմանակից:

Այսօրուան լուրերէն տեղեկացանք, որ Չինաստանի Արեւմտեան մասին մէջ, ահաբեկչական արարք մը կատարուած է, և սպանեալներ կան...

Տալա-Լամայի գծով կատարուած խափանարարական աշխատանքներն ալ կը շարունակուին մինչեւ այսօր:

Մանաւանդ՝ Օգոստոս ամսուան ընթացքին Չինաստանի մէջ կատարուելիք Ողիմպիական խաղերը խանգարելու համար, ամէն միջոցի կը դիմեն Արեւմուտքի Նոր-Գաղութարարները:

Ամերիկացիներուն ձեռքին խամաճիկի վերածուած Ֆրանսայի Նախագահը, ծագումով հրեայ, մեծխօսիկ Նիքոլա Սարքոզին շատ աշխատանք տարաւ, Ողիմպիական խաղերու նախօրէին, որ Չինացիները դժուարութեան մատնէ:

... Ասոր փոխարէն Չինացիները, տնտեսական միջոցներով պատժեցին պառեհապաշտ Sarkozy-ին:

Չինացիները Internet-ի ճամբով իրենց հայրենակիցներուն յանձնարարեցին, որ չգնեն Ֆրանսական արտադրութիւն եղող ապրանքներ:

(→էջ 3)



**TÜRKLERİN (SÖZDE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ**

**2002 YILINDAN BERİ MARMARANIN İMRALI ADASINDA HAPIS OLAN ESKİ PKK LİDERİ ABDULLAH OÇALAN, AVUKATLARI YOLU İLE AVRUPADA YAYINLANAN KÜRTLERİN GAZETESİ “ÖZGÜR POLİTİKA” GAZETESİNE ÇOK MUHİM AÇIKLAMALAR YAPMIS.**

**5 TEMMUZ 2008 TARİHİNDE “ÖZGÜR POLİTİKA” GAZETESİNDE YAYINLANAN ABDULLAH OÇALAN-IN SÖZLERİ, DÜNKÜ VE BUGÜNKİ TÜRKİYEYİ TANIMAK İSTİYENLERİCİN ÇOK FAYDALI BİR KAYNAKTIR.**

2002 YILINDA KENYADA TUTUKLANAN ABDULLAH OÇALAN İÇİN, TÜRKİYENİN O ZAMANKI BASBAKANI OLAN BÜLENT ECEVİT GAZETELERE YAPTIĞI AÇIKLAMADA SUNLARI SÖYLEMİŞ İDİ.

“ERMENİ ASALA ORGÜTÜNÜ TEMİZLİYEN İSRAİL TİMLERİ ÖÇALANI TUZAGA DÜŞÜRDÜLER VE TÜRKLERE TESLİM ETTİLER”.

TÜRKLER ÖÇALANI (SÖZDE) YARGILADILAR VE ÖÇALANI İDAMA MAHKUM ETTİLER.

FAKAT BATILI DEVLETLER, ÖÇALANIN İDAM EDİLMESİNE ENGEL ÖLDÜLER. VE ÖÇALANIN İDAM CEZASI, HAYAT BOYU HAPSE ÇEVİRİLDİ.

2002 SENESİNDEN BERİ İMRALI ADASINDA HAPIS OLAN ABDULLAH ÖÇALAN, AVUKATLARI VASİTASI İLE BAZEN GAZETELERE DEMEÇLER GÖNDERİYORDU.

5 TEMMUZ 2008 TARİHİNDE “ÖZGÜR POLİTİKA” GAZETESİNDE YAYINLANAN ABDULLAH ÖÇALAN-IN SON AÇIKLAMASI, HAKİKATEN DE TÜRKLERİN ÇOGUNUN BILMEDİĞİ GERÇEKLER.....

BU YAZIMIZDA ABDULLAH ÖÇALANIN AÇIKLAMASININ EN MUHİM KISIMLARINI VERMİYE ÇALISACAGIZ :

“ERGENEKONCULAR (NASİONALİSTLER) VE BASBAKAN TAYYİP ERDOĞANIN PARTİSİ AKP ARASINDA YASANANLAR HEGEMONİK SAVASTIR. DISARDAN KONTROL EDİLİYOR.

ULUSALCILAR DA, AKP-DE AYNI GÜÇ TARAFINDAN CATİSTİRİLİYOR.BU GÜÇ USA, İNGİLTERE VE İSRAİL-DİR”.

“YAHUDİLERİN ROLU ÇOK BÜYÜK. TÜRKİYE KURULDUGUNDAN BERİ YAHUDİLERİN KONTROLU ALTINDADIR. SADECE 1960-LARDA ADNAN MENDERES RUSLARA YAKLASMAYA ÇALISTI. ONU DA ASTILAR” ....

...USA-İNGİLTERE-İSRAİL, TÜRKİYE-YLE ARTIK BU SEKİLDE YÜRUYEMİYECEĞİNİ BİLİYORLAR. ORTADOĞU-YA TAM HAKİMİYETLERİ İÇİN İLİMLİ İSLAM İLE BİRLESTİRİLEN BİR SİSTEM TARSARLAMISLAR.

ORTADOĞU İÇİN BUNU GEREKLİ GÖRUYORLAR. TÜRKİYE-YE YENİ BİR SEKİL VERİYORLAR... ÇÜNKÜ İSRAİL, TÜRKİYENİN BÖYLE ÇATISMALI KALMASINI İSTİYOR” .....

“İRAK, İRAN, SURİYE-DEN SONRA SİRANIN TÜRKİYE-YE GELECEĞİNİ BELİRTİYORUM. TÜRKİYE, FİLİSTİN, İRAK, LÜBNAN GİBİ OLUR. TÜRKİYE İRAKLASIRSA, LÜBNANLASIRSA BU ÇOK VAHİM SONUÇLAR DOĞURUR. KALDI KI O ZAMAN ERMENİLER-İN, PONTUS-LARIN VE BASKALARININ, BİR ÇOK SEYİN HESABINI TÜRKİYE-DEN SORARLAR” ....

ABDULLAH ÖÇALAN

\* \* \*

\* \* \*

SIMDI BIZ DE BUNDAN EVVEL "NAIRI" GAZETESINDE YAZDIKLARIMIZI TEKRAR EDELIM.  
 1923-DE TÜRKIYEI YAHUDILER YARATTI.  
 FAKAT BUGUN TÜRKIYE ÇOK BÜYÜDÜ.  
 VE SIYONISTLER İÇİN TEHLİKELI OLMAYA BASLADI.  
 ONUN İÇİN SIYONISTLER, EMPERYALISTLERIN EN BÜYÜK SILAHI OLAN  
 "PARÇALA VE HÜKMET" STRATEJI-SINI TÜRKIYE-YE UYGULAMAYA BASLADILAR.  
 ÖNCE IRAKIN KUZEYİNDE BİR KÜRT DEVLETI KURDULAR KI ILERDE TÜRKIYENIN DOGUSUN-  
 DA BULUNAN KÜRTLERLE BIRLESSIN.  
 SIMDI DE DINCILERI VE NASIONALISTLERI BIRBIRLERINE VURDURUYORLAR KI TÜRKIYE  
 BAS KALDIRAMASIN.  
 VE SIYONISTLER TÜRKIYE-YI DEVAMLI KONTROL ALTINDA TUTABILSINLER.

Յ. Չ.

### ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԸ Ի՞ՆՉ ԳՈՐԾ ՈՒՆԻՆ... (Շար. էջ 2-էն)

Եւ Ֆրանսայի տնտեսութիւնը շատ վնաս կրեց Չինական այս «Պոյ-քոթ»էն...

Եւ Սարքոզի ստիպուած եղաւ Ծերակոյտի (Senat) նախագահ Քրիսթիան Փոնսըլէն և նախկին վարչապետ Ժան Փիէռ Ռաֆֆարտենը Չինաստան դրկել... Եւ անոնք ներողութիւն խնդրեցին Չինաստանի նախագահէն:

Եւ Ֆրանսայի համար նուաստացուցիչ եղող այս այցելութիւնը (Aller A Canossa) հեռատեսիլէն դիտելու առիթը ունեցանք:

\* \* \*

Չինաստանի տնտեսութեան այս բացառիկ զարգացում-յառաջացումը շատ կը մտահոգէ Արեւմտեան Colonialiste-ները, ակելի ճիշտ՝ Նոր-Գաղութարարները:

Բայց ծանօթ է նաեւ որ Արեւմտեանները, իրենց դարաւոր փորձառութեամբ՝ այլազան «Ջէնքեր» ունին ժողովուրդները կարենալ մոլորեցնելու համար:

Արեւմուտքի «Աղուէս»ները՝ յոյսերնին դրած են հետեւեալ հաւանակա-նութեան վրայ:

Անոնք կը ծրագրեն՝ Չինացի ժողովուրդը անգամ մը որ վարժուած է լաւ պայմաններու մէջ ապրելու, իրենց Չինաստանէն կատարած ապրանքի ներածումները նուազեցնել և մինչեւ իսկ դադարեցնել՝ եթէ կրնան, և ուրիշ երկիրներէ գնել իրենց համար պէտք եղածը: Եւ այս ձեւով վնասել Չինաստանի տնտեսութեան: Եւ լաւ ապրելու վարժուած Չինացի ժողովուրդը կերպով մը, թշուառութեան մատնել:

Եւ ճիշդ ա՛յս հակադարձութեան վրայ է դրուած Neo-Colonialiste-ներուն յոյս-միտումը-«Ապրուստի դժուարութեան մատնուող Չինացի ժողովուրդը՝ Համայնավար կառավարութեան դէմ ըմբոստութեան և յեղաշրջում կատարելու մղել»...

Չինաստանի համար՝ Արեւմուտքին կողմէ կատարուող ներածումներու դադարեցման հետեւանքով, դժուարութիւններու մատնուելու հաւանականութիւնը միշտ գոյութիւն ունի:

Բայց Արեւմուտքի Նոր Գաղութարարները մոռնալու չեն նաեւ, որ Չինացի ժողովուրդը ունի փորձառութիւնը Արեւմտեաններուն կատարած խաղերուն արժանի պատասխան տալու:

Չինացիները դարերով տառապեցան, Անգլիացիներուն կողմէ իրենց դէմ

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԷՐՈՒՆ [ԻԲՐԹԷ] ՉԳԻՏՅԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
**2002 ԹՈՒԱԿԱՆԷՆ Ի ՎԵՐ, ՄԱՐՄԱՐԱՅԻ ԻՄՐԱԼԸ ԿՂՋԻՆ ՄԷՋ  
 ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ ՆԱԽԿԻՆ ՔԿԿ-Ի ՂԵԿԱՎԱՐ ԱՊՏՈՒԼԼԱՅ  
 ԷՕՃԱԼԱՆԸ, ԻՐ ՓԱՏՏԱԲԱՆՆԵՐՈՒՆ ՃԱՄԲՈՎ ԵՒՐՈՊԱ  
 ՀՐԱՏԱՐԱԿՈՒՈՂ ՔՐՏԱԿԱՆ ԹԵՐԹԻՆ՝**

**“ÖZGÜR POLITIKA” ՕՐԱԹԵՐԹԻՆ ՇԱՏ ԿԱՐԵՒՈՐ  
 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵՐ Է:**

**5 ՅՈՒԼԻՍ 2008-Թ.ԻՆ “ÖZGÜR POLITIKA”  
 ԹԵՐԹԻՆ ՄԷՋ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԱՊՏՈՒԼԼԱ ԷՕՃԱԼԱՆԻ ՍԱ  
 ԽՕՍՔԵՐԸ, ԵՐԷԿՈՒԱՆ ԵՒ ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՈՒՐԷՒԱՆ ՃԱՆՉՆԱԼ  
 ՈՒՋՈՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՇԱՏ ՕԳՏԱԿԱՐ ԱՂԲԻՒՐ ԿԸ ԿԱՋՄԵՆ :**

2002 թուականին KENYA-ի մէջ ձերբակալուած Ապտուլլահ Էօճալանին համար, Թուրքիոյ այն ատենուան վարչապետ BULENT ECEVIT-ը թերթերուն հետեւեալ յայտարարութիւնը կատարած էր՝

«Հայկական ԱՄԱԼ կազմակերպութիւնը մաքրագործող Իսրայէլեան խումբերը, Էօճալանը ծուղակը ձգեցին և զայն թուրքերուն յանձնեցին»:

Թուրքերը Էօճալանը [իբր թէ] դատեցին և մահուան դատապարտեցին:

Բայց Արեւմտեան սլետութիւնները՝ Էօճալանին կախաղան հանուելուն արգելք եղան: Եւ Էօճալանի դէմ արծակուած մահաՎճիռը ցկեանս բանտարկութեան վերածուեցաւ:

2002 թուականէն ի վեր Իմրալի կղզիին մէջ բանտարկուած Էօճալանը՝ իր փաստաբաններուն ծամբով, թերթերուն երբեմն յայտարարութիւններ կ'ուղարկէր:

5 Յուլիս 2008 թուականին “ÖZGÜR POLITIKA” թերթին մէջ հրատարակուած Ապտուլլահ Էօճալանին կատարած յայտնութիւնները՝ իրապէս ալ, շատ թուրքերու համար, անծանօթ իրականութիւններ են:

... Մեր այս գրութեան մէջ, Ապտուլլահ Էօճալանին կատարած յայտնութիւններուն ամէնէն կարեւորները տալու պիտի ջանանք:

«ERGENEKON [Ազգայնական] կազմակերպութեան և վարչապետ Թայիպ Էրտողանի կուսակցութեան՝ AKP-ի միջեւ անցած-դարձածները՝ գերիշխանութեան պատերազմ է: Արտասահմանէն կը ղեկավարուին: Ազգայնականները և AKP-ները նոյն ուժերուն կողմէ իրարու դէմ ընդհարումի կը մղուին: Այս ուժերը Մ. Նահանգները, Մ. Բրիտանիան և Իսրայէլն են»:

... «Հրեաներուն դերը շատ մեծ է հոս: Թուրքիան, իր կազմուած օրէն սկսեալ, հրեաներուն հակակշռին ենթարկուած է:

Միայն 1960-թ.ներուն Ատնան Մենտերէսն էր, որ ջանաց Թուրքիոյ մօտենալ: Այդ պատճառով ալ զինք կախաղան հանեցին»:

«Մ. Նահանգները, Անգլիան և Իսրայէլը գիտեն, որ Թուրքիոյ հետ գործը այլեւս նոյն ձեւով պիտի չբալէ: Այս պատճառով, Միջին Արեւելքի մէջ իրենց իշխանութիւնը տեւականացնելու համար, «Չափաւորական իսլամութեան» հետ համակարգութիւն մը ստեղծել ծրագրեր են:

Միջին Արեւելքի համար՝ այս համակարգումը անհրաժեշտ կը նկատեն:

Թուրքիոյ համար ալ նոր վիճակ մը, կերպարանք մը նախատեսեր են: Որովհետեւ Իսրայէլը կ'ուզէր, որ Թուրքիան միշտ ներքին բախումներու ենթակայ մնայ»:

«Իրաքէն, Իրանէն և Սուրիայէն յետոյ՝ հերթը Թուրքիոյ հասած ըլլալը կը մատնանշեմ:

Թուրքիան՝ Պաղեստինի, Իրաքի և Լիբանանի նման կ'ըլլայ: Եթէ Թուրքիա Իրաքի և Լիբանանի վիճակին ենթարկուի՝ այս մէկը շատ վտանգաւոր հետեւանքներ կ'ստեղծէ:

Մնաց որ, այն ատեն հայերուն, “PONTUS” ցիներուն և նաեւ ուրիշներուն վերաբերող շատ մը բաներուն հաշիւները Թուրքիայէն պիտի պահանջեն»:

★ ★ ★

Հիմա ալ մենք, ասկէ առաջ «Նայիրի» թերթին մէջ մեր գրածները կրկին նշենք.

«1923-թ.ի Թուրքիան հրեաները ստեղծեցին:

Բայց այսօր, Թուրքիան շատ բազմացաւ և Միոնիստներուն համար վտանգաւոր ըլլալ սկսաւ:

Այդ պատճառաւ Միոնիստները, կայսերապաշտներուն մեծագոյն զէնքը եղող

«Բաժանէ և իշխէ»ի ռազմավարութիւնը Թուրքիոյ համար կիրարկել սկսան:

Նախ՝ Իրաքի հիւսիսը քրտական պետութիւն մը ստեղծեցին, որ յետագային Թուրքիոյ արեւելքը գտնուող քիւրտներուն հետ կարենան միութիւն ստեղծել:

Հիմա ալ կրօնաւորները և Ազգայնականները իրարու հետ հակամարտելու կը մղեն, որ Թուրքիան գլուխ չկարենայ բարձրացնել: Որպէսզի այս ձեւով Միոնիստները Թուրքիան, տեւաբար, հակակշռի տակ կարենան պահել:

Յ. 2.

մղուած Օրիւմ-ի [աֆիոն] պատերազմներով:

Եւ մենք կը հաւատանք, որ Չինական Ընկերվարական Պետութիւնը իր ծիներուն մէջ ունեցած դարաւոր իմաստութեամբ՝ Արեւմուտքի այս Նոր-Գաղութատէրերուն գործելիք սադրանքներուն պիտի կրնայ արգելք ըլլալ:

Չինաստանի դէմ գործադրուելիք այս նեցգ ծրագիրը, Ամերիկացիներուն համար, այժմեական հարց մը չէ:

Ամերիկացիներուն այս օրերուն ամէնէն աւելի մտահոգութիւն պատճառող խնդիրը, Ամերիկացիներուն իսկ խոստովանութեամբ՝ Պարսկաստանի կողմէ տարուող և հիվէական ռումբ պատրաստելու հեռանկարով կատարուած աշխատանքներն են:

Բնական է՝ Ամերիկացիներուն մտահոգութիւնը այստեղ, նախ և առաջ՝ Իսրայէլի ապահովութիւնը երաշխաւորել է:

Արեւմտեան պետութիւններուն համար, Իսրայէլի ապահովութիւնը ամէնէն կարեւոր հարցն է:

Եւ Միջին Արեւելքի մէջ, ուրիշ ազգերու պատկանող հողերուն վրայ ոչինչէն ստեղծուած [Թուրքիոյ նման] Իսրայէլը այսօր, համաշխարհային քաղաքականութեան ծանրութեան մէկ կեդրոնը եղած է:

Բոլոր Արեւմտեան պետութիւններուն նախագահները և նախագահութեան թեկնածուները, ուխտագնացութեան երթալու նման, անպայման նախ Իսրայէլ կ'այցելեն:

Ի՞նչ է այս փոքր երկրին ներկայացուցած ուժը, որ ամբողջ Արեւմտ. Աշխարհի մէջ, առաջնակարգ տեղ կը վերապահէ իրեն: Ծատ բնականաբար և անշուշտ, շատերուն ծանօթ է Իսրայէլին ներկայացուցած այս ուժին ուրկէ գալը և անոր աղբիւրները:

Արեւմտեան աշխարհի պետութիւններուն իսկական իշխանաւորները, իրենցմէ ներս գործող հրէական "Lobby"ներն են...

Եւ Իսրայէլի ապահովութեան մտահոգութեամբ է որ Ամերիկան, Պարսկաստանի դէմ, տեւական պատերազմի սպառնալիքներ կը կատարէ... (→ էջ 10)

**«ՀԱՅ ԴՊՐՈՑԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ  
ԿԵՆՍԱԳՈՐԾԸ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆ Է»**

**ԸՍԱԻ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Շաբաթ, 19 Յուլիս 2008-ին, իր աշխատանքները աւարտեց համաափիւռֆեան կրթական Բ. համագումարը, որուն բացումը կատարուած էր Հինգշաբթի 17 Յուլիսին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի:

Փակման եզրափակիչ իր պատգամին մէջ, Վեհափառ Հայրապետը կարեւորութեամբ շեշտեց հայ ուսուցիչին տեղը ու դերը, յատկապէս ներկայ ժամանակներուն, երբ հայագիտական նիւթեր աւանդող ուսուցիչներու թիւը կը պակսի. «Հայ Դպրոցը տազնայի մէջ է, սակայն պէտք է ժխտական գոյներով ներկայացնենք այդ տազնայը: Մեր ժողովուրդի պատմութեան բարձրակետերը և մեծագոյն իրագործումները, տազնայներու արդիւնք են: Քաջութիւն պէտք է ունենանք տազնայը նիշդ կերպով տեսնելու, ճշգրիտ ախտանշանաչում կատարելու և տազնային լուծումներ որոնելու» ըսաւ Վեհափառը: Ապա, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան այս գծով կատարելիք աշխատանքին անդրադառնալով, Նորին Սրբութիւնը ըսաւ, թէ Սուր Աթոռին դերակատարութիւնը «Երբեմն նախաձեռնողի, և երբեմն յիշեցնողի դերակատարութիւն է, առանց միջամուխ ըլլալու հայ դպրոցի ներքին հարցերուն»: Զանազան երկիրներու մէջ գործող հայ դպրոցներուն իրարմէ ունեցած տարբերութիւնները մատնանշելով, Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Մեր տարբերութիւնները պատճառ չեն, որ մենք մէկ ամբողջութիւն չկազմենք: Տարբեր պայմաններու մէջ ըլլալով հանդերձ, կրնանք իրարու օգուակար դառնալ, հետեւողական աշխատանքով, ու կազմակերպութեամբ» շեշտեց ան: Եւ ի վերջոյ, Նորին Սրբութիւնը հայ դպրոցին իսկական նկարագիրը ընդգծելով ըսաւ, որ «Հայ դպրոցը միայն դասարան չէ, միայն դասագիրք չէ, այլ՝ այդ բոլորին կեանք տուող ուսուցիչն է կարեւորը: Այսօր ամէն տեղ հայ ուսուցիչ պակաս կայ: Միայն աշակերտութեան թիւը չէ՛ որ կը նուազի, այլ հայ ուսուցիչն է թիւը եւս կը պակսի»: Այս գծով Վեհափառ Հայրապետը կոչ ուղղեց կրթական բոլոր կառոյցներուն, որ տէր կանգնին հայ ուսուցիչին, բարձրացնելով անոր կենսամակարդակը:

Յայտնենք, որ սոյն համագումարին կը մասնակցէին շուրջ 100 անձեր, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերէն:

**«ԱՆՈՒՆՈՎԴ ԸՊՐԻՍ՝ ԱՐԱ՛»  
(ՈՒՐԱԽ ԵՂԵԼՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻՒ)**

Ինձի համար հանելի է վկայելը, որ Լիբանանի Հայոց Առաջնորդարանը կը ֆաւջալերէ հայ նորածինները հայկական անուններով կոչելը, ինչ որ հայապահպանումի սպառնակ կը կազմէ: Երախային հայկական անունով մկրտուիլը կը նստատէ որ սն, մանաւանդ երբ մօտիկ անցեալի մանուկը գիտակցական տարիք թեւակոխած է, աւելի սերտ ու ամուր կասյով զօրուի իր ազգային ինքնութեան և արմատներուն հետ:

Այս գովելի ու շնորհաւորութեան արժանի սովորոյթը գնահատելու հանելի սպտեհութիւնը ներկայացաւ ինձի նորածին բողանս՝ Արայի մկրտութեան առթիւ, երբ դիմում ներկայացուցինք Առաջնորդարանին, ծխատէր Քահանայ Հօր միջոցաւ, որ սարսոցուի մեզի երախան մկրտել Մայր եկեղեցիի աւագանին մէջ:

Արդարեւ, երբ Առաջնորդարանէն տեղեկացած են որ մանուկը հայկական Արա անունով կոչել ուզած ենք, մեր նախընտրութիւնը գտած են գովելի: Աւելին՝ Առաջնորդ Սրբազան Հօր ստորագրութեամբ երախայի ծնողին՝ Տէր և Տիկ. Զսւէն և Լո-

որ Դույնուսեանսերուն ղրկուած է շնորհաւորագիր սը, որու մէջ շքշտուած է.—  
 Շնորհաւորագիր — Արա Զաւէն Գույումեան — Սուրբ Մկրտութեանդ ուրախ առթիւ,  
 ջերմագին կը շնորհաւորենք հայկական անունդ: Ի խորոց սրտի կը մաղթենք քեզի,  
 որ հայկական անունի արժանի պատուով և հայադրոջմ հաւատով մեծնաս: Մեր  
 ժողովուրդին գեղեցիկ մաղթանքով քեզի կ'ըսենք՝ Անունովդ Ապրիս — Աղօթարար՝  
 Գեղամ Եպս. Խաչերեան — Առաջնորդ Լիբանանի Հայոց 1-6-2008»:

Մեր հերթին՝ իբր նորածին Արայի մեծ հայր, կը յայտնենք շնորհակալութիւն  
 Սրբազան Հօր և բարձր կը գնահատենք մեր հարազատներուն ազգային նախանձա-  
 խընդիր ոգին մաղթելով, որ իրենց կազմած ընտանիքը մնայ հայարմատ, երախանե-  
 րը սնունդ սազային հայկական հարազատ արմատներէն և ըլլան պատուաբեր իրենց  
 ծնողաց, ժողովուրդին ու հայրենիքին:

Ազգային Առաջնորդարանին ալ կը մաղթենք հայաստանի պանունը ամրապնդող  
 նոր նախաձեռնութիւններ:

**ԱՐՏԱՇԷՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ**

«Նայիրի» կը նոյնանայ այս բարեմաղթանքին, կը շնորհաւոր Արայի հայար-  
 մատ անուանակոչումը և կը խնդակցի իր ծնողին՝ Տէր և Տիկ. Զաւէն Գույումե-  
 անին ու երախային հայրական ու մայրական գծով մեծ հայրերուն և մայրերուն՝  
 Տէր և Տիկ. Արուշէս Գույումեանին և Տէր և Տիկ. Կարօ և Մարօ Հայթայեանին:

**ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ**

Իր նորածին բոնան՝ Արայի մկրտութեան առթիւ, Տէր և Տիկ. Արուշէս Գույումե-  
 ան 50 հազար լ.ո. կը նուիրեն «Նայիրի»ին:

**ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԸ ԻՆՉ ԳՈՐԾ ՈՒՆԻՆ... (Շար. էջ 3-էն)**

Բայց մենք կը հաւատանք, որ Ամերիկացիներուն Պարսկաստանի դէմ  
 աթոմական ռումբ պատրաստելու ամբաստանութիւնը, Իրաքի պատերազ-  
 մին պատրուակ եղած և Սատտամին «Մասսայական բնաջնջման զէնքեր»  
 իբր թէ ունենալուն նման հնարուած սուտ ամբաստանութիւններ են:

Պարսկաստանի գաղտնաբար հիւլէական ռումբ պատրաստելու պատ-  
 մութիւնը, Սատտամի դէմ հնարուած սուտերուն նման, Սիոնիստներու կող-  
 մէ խաղացուած նոր պատրուակ-թատրոն մըն է:

\*\*\*

Սիոնիստներուն խեղկատակ այս նոր թատրոնը, շատ մը արարներ ունի՝

1.— Եթէ Իսրայէլը իրապէս համոզուած ըլլար, որ Պարսկաստանը աթո-  
 մական ռումբ կը պատրաստէ, ատենօք Սատտամին իբր թէ ունեցած աթո-  
 մական կառոյցները քանդելուն նման, կը ռմբակոծէին պարսկական աթո-  
 մական կայանները:

2.— Ամերիկացի արդէն, Աֆղանիստանի և Իրաքի մէջ մղած պատերազմ-  
 ներով և կրած կորուստներով՝ շատ դժուար վիճակի ենթարկուած է:


Եւ Ամերիկային նոր ընտրութիւններու նախօրեակին չենք կարծեր, որ  
 G.W. Bush-ը Պարսկաստանի դէմ նոր պատերազմ մը հռչակելու կարելիու-  
 թիւնը ունենայ:

3.— Արդէն քարիւղի գիները մէկ տարուան մէջ քառապատիկ բարձրա-  
 ցում ունեցան: Եթէ, աշխարհի ամէնէն աւելի քարիւղ արտադրող երրորդ  
 երկիրը եղող Պարսկաստանի դէմ Ամերիկացիները պատերազմ հռչակեն,

# ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՐՈՍԵԱՆԻՆ «Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ»Ի ԸՔԱՆՇԱՆ

Ուրբաթ, 18 Յուլիս 2008-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պիքֆայայի Վանքին մէջ կայացած մեծարանքի յատուկ հանդիսութեան մը ընթացքին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Սրամ Ա. Կաթողիկոս սյարգեատրեց լիբանանահայ վաստակաւոր արուեստագէտ-գեղանկարիչ Յարութին Թորոսեանը:

Վանքի շրջափակը եզերող բնութեան ծոցին մէջ տեղի ունեցած սոյն հանդիսութիւնը կայացաւ Գալուստ Կիլիպէնկեան Հիմնարկութեան մեկենասութեամբ լոյս տեսած Յարութին Թորոսեանի «Իտանկիւնէս» հատորի շնորհահանդէսի ծիրէն ներս: Երեկոյին բացումը կատարեց Հոգեշ. Տ. Սահակ Ա.բղ. Եմիշեան, որ արուեստի բոլոր երանգներուն ազդեցութիւնը մարդու կեանքին վրայ նկատեց անհրաժեշտ, ապրելու համար զայն:



Այս, յայտնի մանկավարժ Գրիգոր Ծահինեան, տարիներու իր բարեկամութեան վկայութիւնը բերաւ օրուան մեծարեալին մասին, միաժամանակ վերլուծումը կատարելով Թորոսեանի երանգապնակի գոյներուն. «Նկարներուն գիծերը յստակ են ու ամուր, ձեւերը տպաւորիչ առանց խստութեան»: Թորոսեանի հետ անձնական մտերմութիւնը և ընտանեկան յարաբերութիւնը մղած էր որ Ծահինեան ճանչնար նաեւ բուն մարդը արուեստագէտին մէջ, և եկաւ այն համոզման, որ անիկա «Լաւ մարդ է, ու սրտցաւ հայ: Իսկական հաճոյք է նոյն անձին մէջ տեսնել գեղարուեստական արժէքը ու բարոյական արժանիքը» հաստատեց Ծահինեան:

Ֆրանսերէն լեզուով խօսք առաւ նաեւ Տիկ. Մարի Թերեզ Թապէթ, մանրամասնօրէն ներկայացնելով Յ. Թորոսեանի արուեստին գունագեղ նկարագիրը. «Հոգին հարստացնող փորձառութիւն մըն է Յարութին Թորոսեանի արուեստը, յատկապէս նման զգայուն հոգիով օժտուած արուեստագէտի մը կողմէ ստեղծագործուած» ըսաւ ան:

Արաբերէն լեզուով խօսք առաւ արուեստագէտ Թորոսեանի աշակերտներէն՝ Հաննա Պու Սուժաան: Իր երախտագիտութիւնը յայտնեց ան իր ուսուցչին, յատկապէս ըսելով, որ «Ա.ն եղաւ ուսուցիչ, որ զինք սիրելէդ առաջ, ի՛նք քեզ կը սիրէ: Արուեստագէտ մը, բառին ամբողջական իմաստով, որ ատելութիւն չճանչցաւ, ոչ ալ հանգիստ ունեցաւ: Գոյներուն հետ շնչեց ան, յատկապէս Լիբանանը ունենալով իբրեւ իր ներշնչման աղբիւր» շեշտեց Սուժաան:

Հուսկ, Վեհափառ Հայրապետը իր եզրափակիչ խօսքով վեր առաւ Թորոսեան Մարդը և Արուեստագէտը. «Պարզութեան, սիրոյ ու հոգեւոր արժէքներու

խտացումն է Յարութիւն Թորոսեան: Անիկա եղաւ այն արուեստագէտը, որ երբեմն խաղաղ ծովու սլէս հանդարտ մնաց, և երբեմն ալեկոծ ծովու սլէս փոթորկոտ»: Վեհափառ Հայրապետը Թորոսեանի անձին մէջ երեք բնորոշիչ գիծեր յատկանշեց. ա) Գիրի, գիծի ու գոյնի արուեստագէտը, բ) Սրեւելքի ու Սրեւմուտքի երկխօսութեան արուեստագէտը, և գ) Հայու ոգին յստակօրէն արտայայտող արուեստագէտը: Անիկա եղաւ բնութեան երգիչը, և ստեղծագործեց հաւատքով ու նուիրումով՝ մեր գերագոյն արժէքներուն: Մենք կու գանք ու կ'երթանք, սակայն ինչ որ կու տանք մարդկութեան՝ անով կ'անմահանանք» աւելցուց Նորին Սրբութիւնը:

Ապա, Վեհափառ Հայրապետը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշանը զետեղեց մեծ արուեստագէտի լամբակին, իբրեւ արժանի յարգանք իր վաստակին:

Յայտնենք, որ յայտագրի ընթացքին դաշնակի վրայ ելոյթ ունեցաւ Հոգշ. Տ. Թորոս Աբղ. Տօնոյեան: Իսկ հանդիսութիւնը փակուեցաւ ներկաներուն կողմէ, «Կիլիկիա» խմբերգի հաւաքական կատարումով:

★ «Նայիրի» կը շնորհասորէ իր բարեկամ-աշխատակիցին պարգևատրուիլը, և կը ցանկայ իրեն ստեղծագործական նոր յաջողութիւններ:

**ԹՈՒՐՔԻԱ - ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱՂՏՆԻ... (Շար. էջ 1-էն)**

Կ'ըսուի միայն, որ Պեռն քաղաքին մէջ կատարուած հանգիստումէն ետք է, որ Նախ. Սարգիսեան խօսած է Թուրքիոյ հետ յարաբերութիւնները բնական զարձնելու մասին:

Որքան ալ տարօրինակ թուի՝ նշենք, որ Ուաշինկթըն գոհունակութեամբ ընդունած է Երեւան-Անգարա մերձեցման լուրը զգացնելով, որ «Մ. Նահանգները ղերակատարութիւն մ'ունի այս մերձեցման մէջ»:

Կը մնայ գիտնալ, թէ Մ. Նահանգները ինչո՞ւ շահագրգռուած է Հայաստան-Թուրքիա կապերու «Նորմալացում»ով, ո՞ւր հասնելու համար:

քարիւղի գիները առասպելական բարձրացում կ'ունենան: Եւ, քարիւղի սակաւութեան պատճառաւ, աշխարհի տնտեսութիւնը կը քանդուի:

4.- Ամերիկացիներուն համար ամէնէն կարեւոր հարցը, իսլամական Աշխարհին բաժանումն է:

Եւ Իրաքի պատերազմով, Ամերիկացիները յաջողեցան Ծիի և Սիւննի յարանուանութեանց միջեւ, եղբայրասսլան պատերազմ բռնկեցնել:

Ամերիկացիներուն Պարսկաստանի դէմ պատերազմ հռչակելը՝ Ծիի-ական ճակատը քանդել ըսել է:

Այս մէկն ալ Սիւննի-ները, Իսլամ աշխարհի մէջ, միահեծան իշխանութիւն հաստատելու կը տանի:

Եւ այս հաւանականութիւնը՝ 11 Սեպտ. 2001-ի Նիւ Եորքի ահաբեկչութեան պատասխանատուներուն Սիւննիներ ըլլալուն պատճառաւ, Ամերիկացիները կը սարսափեցնէ:

Այս պատճառաւ ալ մենք համոզուած ենք, որ Պարսկաստանին ուղղուած սպառնալիքները, ողբերգա-երգիծական թատրոն մըն են:

Մինչդեռ, ըստ Ամերիկացիներուն, զօրաւոր Պարսկաստանի մը գոյութիւնը անհրաժեշտ է... Սիւննիները հակակշռելու համար:



«ՍՈՒՏ Է, ՍՈՒՏ Է, ՍՈՒՏ Է...  
ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ ԱՄԷՆ ԲԱՆ ՍՈՒՏ Է»  
[ԻՄԱՍՏԱԼԻՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ]

ՍՈՒՏ Է, ՍՈՒՏ Է, ՍՈՒՏ Է...  
ԱՐԵՒՍՏԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ  
ԱՄԷՆ ԲԱՆ ՍՈՒՏ Է  
[ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ ՀԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՄԲ]

Յ ՕԳՈՍՏՈՍ 2008-ԻՆ, ԱԻԵԼԻ ՃԻՇԴ՝  
ՓԵՔԻՆԻ ՄԷՋ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ  
ՍԿՍԱԾ ՕՐԸ, ԱՌԻԹԷՆ ՕԳՏՈՒԵԼՈՎ,  
ՎՐԱՑԻՆԵՐԸ ՅԱՐՁԱԿԵՑԱՆ ՈՒ ԳՐԱԻԵՑԻՆ  
ՀԱՐԱԻԱՅԻՆ ՕՍԵԹԻԱՆ ԵՒ, ԹՐՔԱՎԱՅԵԼ  
ՎԱՅՐԱԳՈՒԹԵԱՄԲ, 2000 ՀՈԳԻ ՍՊԱՆՆԵՑԻՆ:


ԵՒ ԵՐԲ ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ  
ՀԱԿԱ-ՅԱՐՁԱԿՈՒՄԻ ԱՆՑԱՆ ԵՒ ԵՏ ՄՂԵՑԻՆ  
ՎՐԱՑԻՆԵՐԸ՝ [ԻԲԲ ԹԷ] ԱՋԱՏ ԱՇԽԱՐՀ ԿՈՉՈՒԱԾ  
ԱՐԵՒՍՈՒՏՔԻ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԱՂԲԻՐՆԵՐԸ  
HIS MASTER'S VOICE-Ի  
ՆՈՅՆ ԽՈՂՈՎԱԿԷՆ  
ՊՈՒՉՏԱԼ ՍԿՍԱՆ,  
ԹԷ՛ ՌՈՒՍԵՐԸ  
ՅԱՐՁԱԿԱԾ ԵՆ  
ՎՐԱՍՏԱՆԻ ՎՐԱՅ:



ՌՈՒՍԵՐ, ՉԻՆԱՑԻՆԵՐ ԵՒ ԲՈԼՈՐ  
ԱՐԴԱՐԱՍԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ՝ ՎԵՐՋ ՏՈՒԷՔ  
ԱՅՍ ՍԱՏԱՆԱՆԵՐՈՒ ԵՒ ՀՐԷՇՆԵՐՈՒ  
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

«Ֆրանսական ծանօթ «ԼԸ ՄՈՆՏ» թերթի 12-8-2008 թիվին առաջին էջին մէջ հրատարակուած է սա նկարը, ուր Ռուսիան կը ներկայացուի իբր նախալարձակ: Ֆրանսայի առաջնակարգ շաբաթաթերթ՝ V.S.D. (Vendre-



**+40 PAGES SPECIAL ÉTÉ** 2,40€ N° 1616 - Du 13 au 19 août 2008

**VSD**

LE PREMIER HEBDO DU WEEK-END

**La Russie a attaqué la Géorgie**

di-Samedi-Dimanche)-ի 13-8-2008-ի թիվին մէջ հրատարակուած այդ գրութեան վերնագիրը՝

«Ռուսիան Յարձակեցաւ Վրաստանի Վրայ»:

\*\*

Այս սուտերու աշխարհին մէջ, իրականութիւնները հասկնալ ուզեցինք... Եւ աշխատեցանք գտնել թերթ մը, ուր ճշմարտութիւնները գրուած ըլլային: Մեր կարելիութեան սահմաններուն մէջ, ֆրանսերէն և օտար լեզուով թերթերը աչքէ անցուցինք:

Բոլորին մէջ ալ, փոքր տարբերութիւններով՝ նոյն լուրերը տրուած էին: Բոլորին մէջ ալ, նոյն խօսքերով, Ռուսիոյ Վրաստանի վրայ «յարձակած»

և Վրաստանը «գրաւած» ըլլալը սրտանմիկ նկարներով կը տեղեկացուէին: Ասոնց մէջ միայն ֆրանսայի համայնավարներուն պաշտօնաթերթը եղող «HUMANITE»-ի մէջ գրուածները աւելի տարբեր էին, և իրականութեան աւելի մօտ:

Բայց նոյն իսկ «Հիւմանիթէ» թերթին մէջ՝ իրականութիւններէն նշոյլներ կային միայն: Մանրամասնութիւններ չկային: Որով, դժուար էր լրիւ գաղափար մը կազմել:

Այդ պատճառաւ, այժմ Փարիզ բնակող մեր բարեկամ հայաստանցի մտաւորականին հարցուցինք, թէ ինչպէ՞ս կարելի է, վերջին դէպքերու մասին, Ռուսական տեսակէտն ալ ունենալ:

Դժբախտաբար, ան ալ չկրցաւ մեզի թերթերու անուններ տալ: Միայն յանձնարարեց, որ Փարիզի Ռուսական դեսպանատան մամուլի պատասխանատուին դիմենք և անոնցմէ գրաւոր տեղեկութիւններ ուզենք...

Կը տեսնէ՞ք, թէ որքա՞ն դժուար է այս [իբր թէ] Ազատութեան Աշխարհ կոչուած Սուտերու Աշխարհին մէջ, իրականութիւնները գիտնալ և «Ուղեղային լուացման» չենթարկուիլ:

\*\*

Այսօր՝ Վրացիներուն Օսէթիա-յի վրայ յարձակելէն ի վեր, գրեթէ շաբաթ մը անցաւ...

Եւ այստեղ, զանազան աղբիւրներէ մեր քաղած և ամփոփած տեղեկութիւնները տալու պիտի ջանանք:

Մենք կը հաւատանք, որ Ազգերուն ծիներուն մէջն է ապերախտութիւնը, վատութիւնը և դաւաճանութիւնը:

Վրացիները պատմութեան բոլոր շրջաններուն մէջ, հայոց դէմ ընդհանրապէս թշնամութիւն և նենգութիւն կատարած են...

... Առաջին օրէն և մինչեւ այսօր, ջանացեր են մեր մշակոյթը գողնալ և իրացնել: Նոյնիսկ՝ հողամաս և... եկեղեցիներ:

Նոյն ապերախտութիւնը գործեցին Ռուսերուն դէմ...

1990-ի [իբր թէ] անկախացումէն յետոյ, թշնամացան Ռուսերուն և դաշնակիցը եղան Թուրքերուն և Ամերիկացիներուն... Եւ ջանացին ճզմել Կովկասեան բնիկ ազգերը՝ Օսէթները, Ապխազները և մանաւանդ՝ Ջաւախքի հայերը:

Եւ Կովկասի մէջ, անոնք եղան Ամերիկայի և յատկապէս՝ թրքական ծաւալապաշտութեան գործակալները: Ա՛լ չխօսինք 1918-20-ին Գերմանիոյ հետ ունեցած իրենց սերտ գործակցութեան մասին:

Ամերիկան ո՛ր, Կովկասը ո՛ր:

Եւ Ամերիկացիները քարիւղի կեդրոն մը եղող Կովկասը ձեռք ձգելու համար, զինեցին վրացիները...

8 Օգոստոս 2008-ին՝ Փեքինի մէջ, Ողիմպիական խաղերու բացման հանդիսութիւններու օրը Վրացիները, օգտուելով Ողիմպիական-ի առիթէն, յարձակեցան եւ գրաւեցին հարաւային Օսէթիա-ն:

Եւ տեղի ժողովուրդին վրայ սարսափ ազդելու և զանոնք իրենց հայրենի հողերէն հեռացնելու համար «Թրքավայել ջարդեր կատարեցին Օսէթիա-յի մէջ:

Ռուսական աղբիւրներուն տուած ստոյգ տեղեկութիւններուն համեմատ՝ շուրջ 2000 Օսէթ-ցիներ, մեծ ու պզտիկ, անհաւատալի վայրագութեամբ սպաննուած են... Եւ տեղացի Օսէթ ժողովուրդը, գրեթէ ամբողջութեամբ, Ռուսական հողերը ապաստանած են...

Բնական է որ Ռուսիան, Վրացիներուն կողմէ գործուած այս վայրագութիւններուն դէմ, անտարբեր պիտի չմնար:

Ուստի, Ռուսերը շուտով հակայարձակումի անցան: Վտարեցին վրացիները և յառաջացան մինչեւ Թիֆլիսի մօտերը: Եւ խորտակիչ հարուած տուին նախայարձակ Վրաց ուժերուն:

\*\*

Այս վերջին օրերուն յայտնաբերուեցաւ նաեւ, որ Ամերիկացիները երկար ատենէ ի վեր կը պատրաստէին Վրացական ուժերը այս յարձակման համար:

Եւ Վրացական այդ ուժերուն՝ կ'ընկերանային հարիւրաւոր Արեւմտեան լրագրողներ, որոնք առաջուց տեղեակ էին այս ոճրային ծրագրին մասին:

Եւ կ'ուզէին Արեւմտեան Աշխարհը տեղեակ պահել «Վրացական յաղթանակէն»: Բայց Ամերիկացիներուն և Վրացիներուն այս իբր թէ շահած յաղթանակը՝ Ռուսերուն հակայարձակումով, սահմուկեցուցիչ պարտութեան վերածուեցաւ:

Եւ Ռուսերուն այս նոր յաղթանակը՝ Ամերիկացիներուն, Վրացիներուն և մանաւանդ թուրանական երազներ տեսնող թուրքերուն համար, լաւ դաս մը եղաւ:

Եւ Ամերիկացիներն ու մանաւանդ Եւրոպացիները շատ լաւ հասկցան որ Ռուսիան, երբ վտանգը իր դռներուն առջեւ հասած է՝ Ռուսական աւանդական անտեղիտալի վճռակամութեամբ, կը պայքարի բոլոր նախայարձակներուն և բոլոր դաւաճաններուն դէմ:

\*\*

Վրացական այս ոճրային յարձակման օրերուն և Ռուսական յաղթանակէն յետոյ՝ շատ հետաքրքրական է գիտնալ թրքական թերթերուն մէջ գրուածները:

(→ էջ 3)

### Ճ Շ Դ Ո Ւ Մ

«Նայիրի»ի 290 թիւին մէջ [22-7-2008] լոյս տեսած Յ. Զիլինկիրեանի «Ամերիկացիները Ի՞նչ Գործ Ունին Աֆղանիստանի Մէջ» յօդուածին վերջին տողերը կը խնդրուի կարդալ այսպէս՝

«... Այս սպառնառաւ մենք համոզուած ենք, որ Պարսկաստանի դէմ սպառնալիքները իսկական թափոնն մըն են: Եւ Ամերիկացիներուն համար՝ զօրաւոր Պարսկաստանի մը գոյութիւնը անհրաժեշտ է՝ Սիւննի-ները հակակշռելու նպատակաւ:

**TÜRKLERİN (SÖZDE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ**  
**TÜRKİYENİN YOBAZ BASBAKANI**  
**TAYYIP ERDOĞANA AÇIK**  
**MEKTUPSEN, ERMENİLERİ O KADAR APTAL**  
**VE KÖR MÜ ZANNEDİYORSUN ?**

SON GÜNLERDE ACELE MOSKOVAYA GITMİSTİN. GÜRCÜSTANI SİLAHLANDIRARAK SON OSETIA KATLIAMININ BAS KISKIRTICISI OLDUGUNDAN, RUSLARIN TEPKISİNDEN KORKTUN. VE MEDVEDEVI YATISTIRMAK İÇİN MOSKOVAYA GITTİN.

... VE DÖNÜSÜNDE 15 AGUSTOS 2008-DE BODRUMDA BİR BASIN TOPLANTISI YAP-  
TIN.

VE BU BASIN TOPLANTISINA YENİ BİR TÜRK PLANI İLİRI SÜRDÜN.

DAHA DOGRUSU PLAN DEĞİL, YENİ BİR TÜRK TUZAGI.

SÖZDE SULH İÇİNDE YASAMAK İÇİN, TÜRKLERLE DIPLOMATİK MÜNASEBETLERİ OL-  
MAYAN ERMENİLERİ, GÜRCÜLERDEN, AZERBAJCAN VE TÜRKİYEDEN OLUSAN BİR BIRLI-  
GIN İÇİNE ALMAYI ÖNE SÜRDÜN.

SEN ERMENİLERİ O KADAR APTAL VE KÖRMÜ ZANNEDİYORSUN ?

1918-DE ERMENİLERİ RUSLARDAN AYIRMAK İÇİN, ÖZGÜR BİR ERMENİSTAN YARAT-  
TINIZ.

VE 1920 DE DE FIRSATTAN-İSTİFADE EDEREK KAZIM KARABEKİR PASA DENİLEN  
CELLADIN ASKERLERİ RUSLARDAN AYRILARAK YALNIZ KALAN, ERMENİLERİN SON  
VATAN PARÇASI OLAN ERMENİSTANA HÜCUM ETTİLER. VE ERMENİLER 1915-DE OLDUGU  
GIBI, KÂZİM KARABEKİRİN ESİKİYALARI TARAFINDAN KILIÇTAN GEÇİRİLECEKTI.

ÇOK SÜKÜR KI SOVYET ORDULARI ERMENİLERİN İMDADINA YETİSTİ.

VE TÜRK SOYKIRIMCILER GERİ ÇEKİLMEME MECEBUR OLDU.

“TARİH TEKERRÜRDE İBARETTİR” DERLER.

TAYYIP ERDOĞAN, 1918-DEKİ TÜRK TUZAGINI BUGÜN YİNE ERMENİLERE YUTTUR-  
MAK İSTİYORSUN.

TABİİ, SON ZAMANLARDA ERMENİSTAN BASKANI SERJ SARKİSYANIN, ABDULLAH  
GÜLÜ ERMENİSTANA FUTBOL MAÇI SEYRETMEME DAVET ETMESİNDEN VE TÜRKLERLE  
SARTSIZ KONUSMAK TEKLİFİNDEN İSTİFADE ETTİN, ERMENİLERE YENİ TÜRK PLANINI  
TEKLİF ETMEK İÇİN.

BUGÜNKÜ ERMENİ LİDERLERİ, KOMSU DEVLET OLARAK TÜRKLERLE BARIS İÇİNDE  
YASAMAK İÇİN SİZE BU TEKLİFLERİ YAPIYORLAR.

FAKAT ERMENİLER, HİÇ BİR ZAMAN RUSLARDAN AYRILARAK, GÜRCÜLERDEN, AZE-  
RİLERDEN VE TÜRKLERDEN OLUSAN BİR BIRLIGE GİRMEZLER.

ERMENİLER ÇOK İYİ BİLİR KI

“SÜRÜDEN AYRILAN KOYUNU, KURTLAR KAPAR”

1920 KAZIM KARABEKİR FACIASINI ERMENİLER HİÇ BİR ZAMAN UNUTAMAZLAR.

16 AGUSTOS 2008-DE ERMENİSTAN BASKANI SERJ SARKİSYAN GÜRCÜSTAN KRİZİ İLE  
ALAKALI OLARAK VERDİĞİ DEMEÇTE ERMENİSTANIN DURUMUNU AÇIKÇA BELİRTTİ.

“RUSYA BİZİM STRATEJİK MÜTTEFİKİMİZDİR”...

VE ERMENİLER, DÜŞMANLARLA ÇEVİRİLİ BU ÇOK TEHLİKELİ DURUMDAN KURTUL-  
MAK İÇİN, ERMENİSTAN DEVLETİ OLARAK BİR AN EVVEL RUSYA FEDERASYONUNA GİR-  
MEYE MECEBURDURLAR.

8. 2.

**ՍՈՒՏ Է, ՍՈՒՏ Է, ՍՈՒՏ Է..... (Շար. էջ 2-էն)**

Ինչպէս գիտենք՝ Թուրքերը 1943-թ.ին, Սթալինկրատի մէջ Նացի Գերմանիոյ յաղթանակին կ'սպասէին, Սովետական Միութեան և Հայաստանի վրայ յարձակելու համար: Բայց երբ որ Սթալինկրատի պատերազմը Սովետներուն յաղթանակով վերջացաւ՝ Թուրքերը իրենց Աղուէս-քաղաքականութեամբ լեզու փոխեցին և Դաշնակիցներուն մօտեցան: Վրացական այս յարձակման պարագային ալ Թուրքերը, նոյն երկերես քաղաքականութիւնը ցուցաբերեցին:

Մինչդեռ, Վրացական այս յարձակման նախապատրաստման մէջ, Թուրքերը մեծագոյն դերը կատարեցին՝ իբր Ամերիկացիներուն գործակալը և Վրացիներուն դաշնակիցը:

Վրաց ուժերը կը մարզուէին թուրք սպաներու կողմէ:

Թուրքերը մեծ քանակութեամբ զէնքեր տուած էին վրացիներուն:

... Բայց երբ վրացական յարձակումը Ռուսերու կողմէ ետ մղուեցաւ և Ռուսերը մինչեւ Թիֆլիսի դռները հասան՝

թրքական թերթերուն մէջ շատ հետաքրքրական, դիմաշրջում վկայող գրութիւններ լոյս տեսան:

Այդ թերթերէն մէկուն մէջ թուրք խմբագիր մը գրեց թէ՛

«ՄԵՆՔ, ՄԵՐ ՄԵԾ ԴՐԱՑԻ ՌՈՒՍԵՐՈՒՆ ՀԵՏ, ՉԵՆՔ ՈՒՋԵՐ ԵՒ ՉԵՆՔ ԿՐՆԱՐ ԹՇՆԱՄԱՆԱԼ»:

«ՄԵՆՔ, ՌՈՒՍԵՐՈՒՆ ՀԵՏ, ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՈՒՆԻՆՔ»:

Այստեղ կը հրատարակենք թրքական թերթերուն Ռուսական յաղթանակէն յետոյ և մեծ վերտառութեամբ տուած լուրերը՝

11 Օգոստոս 2008 թուակիր «Հիւրիյէթ» թերթի վերնագիրը՝

«ԿՐԱՑԻՆԵՐԸ ԾՈՒՆԿԻ ԵԿԱՆ»:

**Hürriyet**

11 Ağustos 2008 Pazartesi

Kurucusu: Sedat Simavi 1896-1953

**GÜRCÜLER PES ETTİ**

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻԲՐԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**ԹՈՒՐՔԻՈՑ ԿՐԾՆԱՄՈՒՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**ԹԱՅԵՒՓ ԷՐՏՈՂԱՆԻՆ**

**ԲԱՅ ՆԱՄԱԿ...-**

**ԴՈՒՆ, ՀԱՅԵՐԸ,**

**ԱՅՆՔԱՆ ՏԽՄԱՐ ԵՒ ԿՈՅՐ**

**ԿԸ ԿԱՐԾԵ՞Ս ...**

Վերջին օրերուն շտապով Մոսկուա գացած էիր՝ Վրաստանը զինելով Օսեթիա-յի ողբերգութեան առաջին պատասխանատուն Թուրքիան ըլլալուն՝ Ռուսերուն հակազդեցութենէն վախցար, և Մետովտեւը հանդարտեցնելու համար Մոսկուա գացիր:

... Եւ վերադառնալէ յետոյ, 15 Օգոստոս 2008-ին Պոտրումի մէջ, մամլոյ հաւաքոյթի մը ընթացքին, թրքական նոր ծրագիր մը առաջարկեցիր:

Աւելի ծիշդ՝ ծրագիր չէ, այլ նոր թրքական ծուղակ մը՝ [Իբր թէ] խաղաղութեան մէջ ապրելու համար, Թուրքիոյ հետ դիւանագիտական կապեր չունեցող Հայաստանը Վրացիներէն, Ազերիներէն և Թուրքերէն կազմուած միութեան մը մէջ առնել առաջարկեցիր:

Դուն, հայերը, այնքան տխմար և կոյր կը կարծե՞ս:

1918-ին հայերը, Ռուսիայէն անջատելու համար՝ Ազատ Անկախ Հայաստան մը ստեղծեցիր:

Եւ 1920-ին ալ այս առիթէն օգտուելով, Քաղիմ Քարապետի Փաշա կոչուած դահիճը, Ռուսերէն բաժնուելով մինակ մնացած Հայերուն վերջին հայրենի հողը եղող Հայաստանի վրայ յարձակեցաւ:

Եւ հայեր՝ 1915-ին եղածին նման, Ք. Քարապետի աւազակներուն կողմէ, բոլորն ալ, սուրէ պիտի անցուէին:

Փա՛ռք Աստուծոյ, որ Սովետական բանակները՝ հայերուն օգնութեան հասան:

Եւ թուրք ցեղասպանները ստիպուեցան նահանջել...

«Պատմութիւնը՝ կրկնութիւն է» կ'ըսեն:

Թայյիփ Էրտողան՝ 1918-ի թրքական ծուղակը այսօր կրկին հայերուն «կլլեցնե՞լ» կ'ուզես:

Բնական է՝ վերջին շրջաններուն Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանէն՝ Ապտիլլա Կիլը հայ-թուրք ֆուտպոլի խաղերը դիտելու համար Հայաստան հրաւիրելէն և թուրքերուն հետ առանց նախապայմանի բանակցելու առաջարկէն օգտուեցար՝ հայերուն նոր թրքական ծրագիրը ներկայացնելու համար:

Այսօրուան Հայաստանի վարիչները իբր դրացի երկիր թուրքերուն հետ խաղաղութեան միջնորդութի մէջ ապրելու համար՝ ձեզի այս առաջարկները կ'ընեն:

Բայց հայերը ո՛չ մէկ ատեն, Ռուսերէն անջատուելով, Վրացիներէն, Ազերիներէն և Թուրքերէն կազմուած միութեան մը մէջ կը մտնեն:

Հայերը շատ լաւ գիտեն թէ՛

«Հօտէն բաժնուող ոչխարը՝ Գայլերուն «Ձեռքը կ'իյնայ»:

1920-ի Քաղիմ Քարապէթիի պատճառած ողբերգութիւնը հայերը երբեք չեն կրնար մոռնալ:

Եւ դեռ երէկ, 16 Օգոստոս 2008-ին Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանը Վրաստանի տագնապի առնչութեամբ Հայաստանի կեցուածքը շատ յսակօրէն բացայայտեց՝

«Ռուսիան՝ մեր Ռազմագիտական Դաշնակիցն է» – ըսաւ:

... Եւ հայերը՝ թշնամիներէն շրջապատուած, այս շատ վտանգաւոր կացութենէն փրկուելու համար, իբր Հայաստանի Պետութիւն՝ ժամ առաջ, Ռուսական դաշնութեանը հետ միանալու ստիպուած են:

Յ. Զ.

13 Օգոստոս 2008 թուակիր «Հիւրիյէթ» թերթի վերնագիրը՝  
«ԵՒ ՌՈՒՍԻՈՅ ՅԱՂԹԱՆԱԿԸ»:



# Hürriyet

13 Ağustos 2008 Çarşamba

Kurucusu: Sedat Bkmavi 1896-1953

## Ve Rusya'nın zaferi

\* \*

Բնական է՝ Ռուսերուն կողմէ Վրացիներուն, Ամերիկացիներուն, Թուրքերուն և ընդհանրապէս Արեւմուտքիներուն տրուած այս դասը, շատ կարեւոր հետեւանքներ պիտի ունենայ մանաւանդ Հայաստանի համար:

Ռուսական այս յաղթանակը ճակատագրական է Հայաստանի և, մանաւանդ՝ Արցախի համար:

Մեծամուլ և քարիւղի դրամով շփացած Ազերիները, այլեւս իրենց պոռոտախօս, պատերազմական սպառնալիքները կատարելու համար, շատ պիտի մտածեն:

Եւ թուրքերը, այս պայմաններու մէջ, Ազերիներուն հետ դաշնակցային պետութիւն մը հիմնելու իրենց ծրագիրը չեն կրնար իրականացնել:

Որովհետեւ աղուէս թուրքերը նոյնիսկ Ազերիներուն համար... եւ սիրոյն... Ռուսերուն թշնամութիւնը շահիլ պիտի չուզեն:

... Այստեղ կը մնայ, որ մեր ներքին թշնամիներն և դաւաճանները շատ զգոյշ... ըլլան և շարժին... իրենց հայրենադաւ արարքներուն մէջ...

Եւ մանաւանդ՝ մեր այսօրուան իշխանաւորներն ալ հարկ է, որ դադրին «Երկու լարի վրայ» քաղաքականութիւն խաղալէ:

Եւ գիտնան [այս բոլորէ ետք], թէ ո՛վ է հայուն թշնամին:

ԵՒ ՄԱՆԱԽԱՆԴ ԳԻՏՆԱՆ, ԹԷ Ո՛Վ Է ՀԱՅՈՒՆ ԲԱՐԵԿԱՍԸ:

ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ԽՕՍԶԸ... ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ՌՈՒՍԻՈՅ

ՀԱՅԵՐ, ՄԻԱՑԷՔ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ՌՈՒՍԻՈՅ



ՄՆԱՆԿԱՑԱԾ ԱՄԵՐԻԿԱՆ ՌՈՒՍԻՈՅ ԴԷՄ  
ՊԱՏԵՐԱԶՄ ԿԸ ՀՐԱՀՐԷ, ՈՐ ՌՈՒՍԻՈՅ  
ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԿԱՐԵՆԱՅ ՎԵՐԱՊՐԻԼ

ԱՇԽԱՐՀԻ «ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵԾԱԳՈՅՆ  
ՈՃՐԱԳՈՐԾ» ԱՄԵՐԻԿԱՅԻ ԻՇԽԱՆԱԻՈՐՆԵՐԻ՝  
**GO HOME**

LA HAYE-Ի ԴԱՏԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՈՉ ԹԷ  
RADOVAN KARADZIC-Ը,  
ԱՅԼ ՊՈՒՇՆ ՈՒ ԻՐ ՆՄԱՆՆԵՐԸ ԴԱՏԵԼ ՊԷՏՔ Է:

1964-ԷՆ ՄԻՆՉԵԻ 1975- ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ,  
ՎԻԷՆԱՄԻ ՄԷՋ,  
ՄԻԼԻՈՆՆԵՐՈՎ ԱՆՄԵՂ ՄԱՐԴԻԿ ՍՊԱՆՆԵՑԻՆ:

1990-ԷՆ ՄԻՆՉԵԻ 2008- ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐՈՒՆ  
ԻՐԱՔ ՆԵՐՄՈՒԺԱԾ ԶՕՐՔԸ, ՄԻԼԻՈՆՆԵՐՈՎ  
ԱՆՄԵՂ ՄԱՐԴՈՑ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌ ԵՂԱԻ  
ՈՒ ԴԵ՛Ռ Կ՛ԸԼԼԱՅ:

2001-ԷՆ ՄԻՆՉԵԻ 2008- ԱՄԵՐԻԿԵԱՆ ԶՕՐՔԸ,  
ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՄԷՋ, ԲԱԶՄԱՀԱԶԱՐ ԱՆՄԵՂ ՄԱՐԴԻԿ  
ՍՊԱՆՆԵՑ: ԵՒ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՍՊԱՆՆԵԼ:

ԵՒ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ, ՌՈՒՍԻՈՅ ԴԷՄ  
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽԱՓՈՐՁԸ ԿԱՏԱՐԵՑԻՆ  
7-8 ՕԳՈՍՏՈՍ 2008-Ի ԳԻՇԵՐԸ...  
ԱՄՆ-Ի ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԱՏԱՆ ԽԱՄԱՃԻԿԸ  
ԵՂՈՂ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՀԱԿԱՇՎԻԼԻՆ  
ՀՐՈՍԱԿՆԵՐԸ, ՅԱՐՉԱԿԵՑԱՆ ՀԱՐԱԻԱՅԻՆ  
ՕՍԷԹԻՈՅ ՎՐԱՅ ԵՒ ԹՐՔԱԿԱՅԵԼ  
ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՄՕՏ 2000 ԱՆՄԵՂ  
ՄԱՐԴԻԿ ՍՊԱՆՆԵՑԻՆ, ԶԱՆՈՆՔ ԻՐԵՆՑ  
ԱՆԿՈՂԻՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԱՆԱԿՆԿԱԼԻ ԲԵՐԵԼՈՎ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ՎՐԷԺ ՈՈՒԲԷՆԵԱՆ]


Եւ երբ Ռուսական ուժերը հակայարձակումի անցան և վտարեցին Անթուսածները, Ամերիկացիներու կողմէ ղեկավարուող Վրացական ուժերը, Արեւմտեան լրատուական աղբիւրները միաբերան «Համազարկ բացին» և ժողովուրդին ուղեղները լուսլ սկսան: Եւ ըսին թէ՛ Ռուսիան նախայարձակ եղած է Վրաստանի վրայ:

Այստեղ կը հրատարակենք ֆրանսական “LE NOUVEL OBSERVATEUR” շաբաթաթերթի 14 Օգոստոս 2008 թիւին ամբողջ առաջին էջին վրայ տեղ գտած POU-

TINE-ին Նկարը, ուր մեծատառ գրուած է՝ «Մինչեւ ո՞ր պիտի երթայ Փուլինը»:

Ահա՛, Արեւմտեան «Սուտերու Աշխարհ»ին մէջ ժողովուրդներուն ուղեղները լուացող «Յերիւրանք»ներէն մէկ հատը:

... Դո՛ւք, պատերազմի հրձիգ Ամերիկացիներ՝ ձեր խամաճիկները եղող Վրացիները զինեցիք, և Կովկասին



տիրելու համար յարձակեցաք Ռուսերուն կողմէ պաշտպանուող Հարաւային Օսեթիոյ վրայ և վայրագաբար սպաննեցիք հարիւրաւոր Ռուս զինուորներ և շուրջ 2000 [երկու հազար] Ռուս և Օսեթացի անմեղ քաղաքայիններ...

Եւ երբ Ռուսերը հակայարձակումի անցան և վտարեցին նախայարձակ վրացիները և հալածեցին անոնց մինչեւ իրենց «Որջը»...

... Այն ատեն Աշխարհը մոլորեցնել-խաբելու համար պորչտացիք՝ «Փուլինը մինչեւ ո՞ր պիտի երթայ»:

\*\*

Այստեղ կը հրատարակենք նոյնիմաստ [ուղեղները լուալու] և նպատակով Գերմանական “DER SPIEGEL” շաբաթաթերթին մէջ 1 Սեպտեմբեր 2008-ին

լոյս տեսած գրութիւնը և նկարները...  
«Ռ՞Վ պիտի կեցնէ Մոսկովեան կայսերապաշտութիւնը»:

Մատլէն Օլպրայթ կոչուած սա հրեուհի վհուկը, որ Զլինթընի շրջանին ԱՄՆ-ի Պետական Զարտուղարի պաշտօնը կը վարէր և մասնակիցներէն է Եուկոսլաւիոյ քանդումին, գերմանական «Der Spiegel» թերթին մէջ տեղ գրտած իր մէկ հարցազրոյցով կը յայտարարէ՝ պէտք է «Միջազգային բեմէն մեկուսացնել Ռուսիան»:

**DER SPIEGEL**

**Wer stoppt den Moskauer Imperialismus?**

Gemeinsam mit päisichen Kollegen EU-Regierungsch die Außenminister Steinmeier s Kouchner um zu die den neuer Imperialismus i terpräsident Wb eindämmen soll. Berliner Außen haben schon v verschiedene Sz

Սթէյնմէյր և Զուշկեր ֓ուրթից

**„International isolieren“**

րայթն և միլիառատեր ժորժ Սօրօսը:

Եւ դեռ կ'աւելցնէ... «ՌՌՍԻԱՆ ԿԱՐՄԻՐ ԳԻՇԸ ԱՆՑԱԻ»

Ռ՞ր երկրին տասը տարի առաջուան Արտաքին Գործերու նախարարին անունը այսօր կը յիշուի և ան կրնայ հարցազրոյցներ կատարել:

Այս կարելիութիւնը միայն Սիոնական հրեաներուն յատուկ է: Անոնց մենաշնորհն է:

Որովհետեւ «Աշխարհը» կառավարողը Սիոնական հրեաներուն «Անպաշտօն թագաւոր»ը եղող շենրի Զիսինըրն է, որուն օգնականներն են՝ Մատլէն Օլպրայթն և միլիառատեր ժորժ Սօրօսը:

Վրաստանի կողմէ Հարաւային Օսեթիոյ վրայ գործուած նախայարձակումը 2008-թ.ի Օգոստոս 7-8-ի գիշերով, Սիոնիստներուն և Ամերիկացիներուն Ռուսաստանը քանդելու- Խ. Միութիւնը կազմալուծելէ յետոյ- և անոր հարստութիւնը ձեռք անցընելու ծրագրին գործադրութեան հանգրուաններէն մէկն է միայն:

... Առաջին հանգրուաններէն մէկն էր նաեւ, 1997-թ.ին Մատլէն Օլպրայթի կողմէ (Ռուսիան եւս շրջապատելու նպատակաւ) Եուկոսլաւիոյ քանդումը... որուն հետեւեցաւ [2001-թ.ին] Աֆղանիստանի գրաւումը:

Այսօր, աթոմական հրթիռներ կրող Ամերիկեան զրահատրոնները [իբր թէ] Վրաց ժողովուրդին ուտեստեղէն հասցնելու համար Վրացական նաւահանգիստները մտած են:

Եւ մեծ թիւով ուրիշ Ամերիկեան զրահաւորներ (Թուրքիոյ համամտութեամբ) Սել Ծով մտած, կը շրջագային Ռուսաստանի եզերքներուն մօտ...

Եւ մենք կը հաւատանք, որ Յ-րդ Համաշխարհային պատերազմը արդէն Եուկոսլաւիոյ քանդումով սկսած է [խնդրեմ՝ կարդացէք 1997-թ-ի «Նայիրի»-ներուն մէջ այն մասին լոյս տեսած մեր գրութիւնները]:

Եւ այսօր, կը շարունակուի այդ պատերազմը, Վրաստանի կողմէ Օսէթիոյ վրայ գործուած յարձակումով:

Եւ Սել Ծովու մէջ Ամերիկեան զրահաւորներուն կատարածը՝ Ռուսերուն դէմ Provocation [գրգռութիւն] է:

Եւ Ամերիկացիները պատրուակ կը փնտռեն... Ռուսիոյ վրայ յարձակելու համար:

Եւ ասիկա՝ «Երրորդ համաշխարհային պատերազմ»ի սկիզբ ըսել է...

Բայց, Ամերիկացիներուն ուզածն ալ, ա՛յս է արդէն...

Որովհետեւ Ամերիկան շատ հեռու է և վտանգը, ամերիկացիներուն համար, շատ աւելի նուազ:

Եւ պատերազմի մը պարագային, ամէնէն աւելի պիտի վնասուին՝ Եւրոպական երկիրները և Ռուսաստանը...

Արդէն Ամերիկացիները նոյն բանը ըրին Առաջին և Երկրորդ համաշխարհային [անցեալ] զոյգ պատերազմներուն ատեն:

Երկու պատերազմներուն ալ ԱՄՆ-ը իրենց մասնակցութիւնը բերին անոնց աւարտէն քիչ առաջ: Նա՛խ՝ ձգեցին, որ Եւրոպական երկիրները և մանաւանդ Ռուսաստանը ամբողջովին քանդուին:

„ Արդէն ի՞նչ կրնաք սպասել սա Cowboy-ներու և Gangster-ներու շառաւիղ, կարմրամորթներու ցեղասպանը եղող և խառնածին խուժաններէ կազմուած իշխանութեան մը ներկայացուցիչներէն:

\*\*

Արդեօ՞ք Եւրոպացիները այնքա՛ն շատ միամիտ են, որ Ամերիկացիներուն լարած «Երրորդ Համաշխարհային պատերազմ»ի ծուղակը կրնան իյնալ:

... Եւ Վրաստանի մէջ Ամերիկայի խամաճիկներուն կողմէ՝ 7-8 Օգոստոս 2008-ին Օսէթիոյ տարածքին վրայ, Ռուսերուն դէմ կատարուած խժոճութիւններուն մասին բո՛ւն իրականութիւնները մինչեւ վերջ պիտի անգիտացուի՞ն, պիտի չբացայայտուի՞ն:

Մենք կը հաւատանք սակայն, որ Եւրոպացիները, հակառակ իրենց վրայ եղած ճնշումներուն, ստիպուած են հրապարակելու... իրականութիւնները, իրե՛նց իսկ օգուտին համար:

... Եւ Օսէթիոյ դէպքերէն 20 օրեր յետոյ՝ գերմանական “Der Spiegel”-ին (→էջ 3)

**Վ Ր Ի Պ Ա Կ**

Յ. Զիլինկիրեանի՝ «Սուտ է, Սուտ է, Սուտ է...» մեծարժէք և ուսանելի յօդուածին [14 Օգոստ. 2008 թուակիր և վերջին շաբաթներու Կովկասի կացութեան վերաբերող] վերջին տողը կը խնդրուի կարդալ... Հայեր, միացէ՛ք Դաշնային Ռուսիոյ»:

**TÜRKLERİN (SÖZDE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ**

**TÜRKİYE CUMHUR BASKANI ABDULLAH GÜL**

**YEREVANDA ASIRLARDAN BERİ DEVAM EDEN**

**SOYKIRIMLARIN KURBANİ OLAN ERMENİ MİLLETİNİN BİR**

**MENSURU OLARAK, BARİSA SUSAMİS BİR ERMENİ OLARAK**

**TÜRKİYE CUMHUR BASKANI ABDULLAH GÜLÜ,**

**BU DOSTLUK ZİYARETİNDEN DOLAYI TEBRİK EDERİZ.**

ERMENİSTAN CUMHUR BASKANI SERJ SARKİSYAN-İN KOMSU BİR DEVLET OLARAK TÜRKİYE İLE BARİS İÇİNDE YASAMAK İÇİN, ABDULLAH GÜLÜ YEREVANA, ERMENİSTAN-TÜRKİYE FUTBOL MAÇINI SEYRETMEME DAVET ETMESİ, ÇOK İLERİ GÖRÜSLÜ BİR KARAR DİR.

... FAKAT SERJ SARKİSYAN BUGÜNKÜ ERMENİSTANIN BASKANI ASIL ERMENİSTANIN ANCAK YÜZDE YİRMİSİNİN BASKANI.

1915-E KADAR BÜTÜN DÜNYA HARİTALARINDA ERMENİSTAN OLARAK GÖSTERİLEN TOPRAKLARIN YÜZDE SEKSENİ BUGÜN TÜRKLERİN İSGALİNDE.

TÜRKLER BU TOPRAKLARA "DOĞU ANADOLU" DİYORLAR.

KÜRTLER DE 1915-DE ERMENİLERİN SOYKIRIMINA UGRATILMASINDAN DOLAYI BOSALAN TOPRAKLARA KÜRTLER YERLESTİĞİNDEN "KÜRDİSTAN" DİYORLAR.

ERMENİLER DE, TARİHİN BİLİNDİĞİ DEVİRDEN 1915-E KADAR ERMENİLERİN VATANI OLDUĞUNDAN "BATI ERMENİSTAN" DİYORLAR.

ERMENİSTANIN YALNIZ YÜZDE YİRMİSİNİN BASKANI OLAN SERJ SARKİSYANIN TÜRKLERLE BARİS İÇİNDE YASAMAK İÇİN DOSTLUK GÖSTERİSİ YAPMASINI ÇOK İYİ ANLIYORUZ.

FAKAT BU, BATI ERMENİSTANDA 1915-DE SÖYKİRİMİNE UGRAYARAK BÜTÜN DÜNYAYA YAYILAN ERMENİLERİN AHFADI OLAN DİYASPORADA ERMENİLERİNİN HİÇ BİR PROBLEMİNİ HALLETMEZ.

NE "1915 SOYKIRIMI" NE "ÇALINAN VATAN" NE DE "ÇALINAN VATANIN ZENGİNLİKLERİ" PROBLEMLERİ SERJ SARKİSYANIN DOSTLUK GÖSTERİLERİ İLE HALLOLÜNMAZ.

BİLAKİS, BİR DİYASPORADA ERMENİSİ OLARAK BİZİM ENDİSEMİZ: TÜRKLERLE BU YENİ DOSTLUK GÖSTERİNDE "SOYKIRIMI VE BATI ERMENİSTAN MESELESİ" BAZARLIK KONUSU OLUR.

... BUGÜNKÜ ERMENİSTANIN BİR KARABAG PROBLEMİ VAR AZERİLER İLE.

YİRMİ SENEDEN BERİ DEVAM EDİYOR...

TÜRKLERİN DE ERMENİLERLE 1915 SOYKIRIMI VE BATI ERMENİSTAN MESELESİ VAR.

YÜZYILDAN BERİ KANAYIP DURUYOR.

... BUGÜNKÜ ERMENİSTAN BASKANI SERJ SARKİSYAN KARABAGLI.

YANI 1915 SOYKIRIMINA UGRAYAN ERMENİLERİN AHFADI DEĞİL.

VE SERJ SARKİSYAN DİYASPORADA ERMENİLERİN PROBLEMLERİNİ YASAMAMİSTİR. DERİSİNİN ÜZERİNDE HİSSETMEMİSTİR.

BİZİM KORKUMUZ SU :

ABDULLAH GÜL, KARABAG PROBLEMİNİN HALLOLMASI İÇİN AZERİLERİ İKNA EDER....

VE KARSILIGINDA DA, ERMENİLER, 1915 SOYKIRIMINI, VE BATI ERMENİSTANI UNUTURLAR....

\* \* \*

1915-DEN BUGUNE KADAR DIYASPORA ERMENILERI BIRLESİK BİR DIYASPORA HÜKÜMETİ KURAMADILAR.

BUNDAN DOLAYI DÜNYADA BENZERİ OLMİYAN, KORKUNÇ 1915 ERMENİ SOYKIRIMINI GERÇEKLESTİREN TÜRKLER BUGÜNE KADAR CEZALANDIRILMADILAR.

DIYASPORADA BIRLESİK BİR ERMENİ BİRLİĞİNİN KURULMASINA ENGEL OLAN, SIYONİSTLERE SATILMIS, SÖZDE MILLİYETÇİ GEÇİNER ERMENİ LİDERLERİNE :

LÂNĒT, LÂNĒT.

Յ. Չ.

ՍՆԱՆԿԱՅԱԾ ԱՄԵՐԻԿԱՆ ՌՈՒՍԻՈՅ... (Ծար. էջ 2-էն)

Մէջ գրուածնե-  
րը, միայն հա-  
մայնավար-  
ներուն պաշ-  
տօնաթերթը  
եղող «Իմա-  
նիթ» թերթը  
հրապարակելու  
քաջութիւնը  
ունեցաւ: Ստորև,  
Թարգմա-  
նութիւնը՝  
«Իմանի-  
թ» թերթէն՝  
Երկուշաբթի  
1 Սեպտեմբեր  
2008:



ԵԱԶԿ-Ը ԿՐ ՄԵՂԱԴՐԷ ԹԻՖԼԻՍԻՆ

Երոպայի Ապահովութեան Եւ Համագործակցութեան Կազմակերպութիւնը կը մեղադրէ Կրաստանը, որ Կովկասի տարածքին նորագոյն տագնապի մը գոյացման պատճառ եղաւ:

Գերմանական «Տէր Շփիկըլ» շաբաթաթերթին համաձայն, կազմակերպութեան կարգ մը թաքուն տեղեկագիրները որոնց բովանդակութեանը ինք կրցած է իրագել դառնալ, մատնացոյց կ'ընեն Թիֆլիսը զայն մեղադրելով և հաստատելով, որ Կրաստանին, իր զինուորական նախապարծակումին սկսաւ ատեն մը, երբ ռուսական հրասայլերը վրացական հողամասէն դուրս կը գտնուէին:

Դէպքերուն ժամանակացոյցը, այնպէս ինչպէս կը տեղեկագրեն այդ զեկուցագրերը, կը ժխտեն վրացական իշխանութիւններուն հաղորդածները ըստ որոնց, Թիֆլիսի քայլը փութացո՛ւց միայն ռուսական միջամտութիւնը:

Միշտ «Տէր Շփիկըլ»ի համաձայն, փաստաթուղթերը շատ հաւանական կը սեպեն պատերազմական ոճիրներու գործուած ըլլալը վրացական ուժերուն կողմէ, Օսեթիոյ քաղաքայիններուն վրայ կատարուած գիշերային յարձակումի ընթացքին:

Ֆրանսական «Լը Զանար Անշէնէ» թերթը իր Չորեքշաբթի 20 Օգոստոս 2008-ի թիւով կ'արձագանգէ Երոպայի Ապահովութեան և Համագործակցութեան Կազմակերպութեան Կեդրոնէն ստացած ստոյգ տեղեկութիւններուն ըստ որոնց, Մ. Նահանգները տեղեկ էին Կրացական նախապարծակումի մը պատրաստութենէն և թէ, «Ամերիկացի պաշտօնատարներ, իրենց

**ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻԲՐԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
 ԹՈՒՐՔԻՈՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝  
 ԱՊՏՈՒԼԼԱՀ ԿԻՒԼ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ:  
 ԴԱՐԵՐԷ Ի ՎԵՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
 ՋՈՂԸ ԵՂԱԾ ՀԱՅ ԱԶԳԻՆ ՄԷԿ ԱՆԴԱՄԸ ԵՒ  
 ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿԱՐՕՏԸ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՅ ՄԸ ԸԼԼԱԼՈՎ՝  
 ԹՈՒՐՔԻՈՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՊՏՈՒԼԼԱՀ  
 ԿԻՒԼԻ ԵՐԵՒԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՍ «ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ»  
 ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆՔ:**

Հայաստանի հանրապետության նախագահ Սերժ Սարգսեանին՝ դրացի երկիր եղող Թուրքիոյ հետ համերաշխ պայմաններու մէջ ապրելու հեռանկարով Աստուլլահ Կիլը Հայաստան-Թուրքիա ֆուտպոլի խաղը դիտելու համար երեւան հրաւիրելը, հեռատես որոշում մըն է:

Բայց ինք միայն, այսօրուան Փոքր Հայաստանին նախագահն է:

Բո՛ւն Հայաստանին քսան առ հարիւրին նախագահը:

Մինչեւ 1915 թուականը, աշխարհագրութեան բոլոր քարտէսներուն վրայ, Հայաստան ըլլալով ցոյց տրուած հողերուն ութսուն առ հարիւրը այսօր, Թուրքերուն կողմէ, գրաւուած է:

Թուրքերը այս հողերուն «Արեւելեան Անատոլու» կ'ըսեն:

Քիւրտերը, 1915-ի հայկական ցեղասպանութեամբ ամայացած հայապատկան հողերը ուր կը բնակին իրենք այսօր, «Քիւրտիստան» կը կոչեն:

Հայերն ալ, պատմութեան ծանօթ թուականներէն մինչեւ 1915-թ.ը, հայերուն հայրենիքը եղող տարածքին «Արեւմտեան Հայաստան» կ'ըսեն:

Հայաստանի տարածքին միայն քսան առ հարիւրին նախագահը եղող Սերժ Սարգսեանին Թուրքերուն հետ խաղաղութեան մէջ ապրելու համար անոնց բարեկամական վերաբերում ցուցնելուն նպատակը, շատ լաւ կը հասկնանք:

Բայց այս վերաբերումը, 1915-թ.ին ցեղասպանութեան ենթարկուելով աշխարհի բոլոր կողմերը տարածուած հայերուն շառաւիղները եղող ներկայ Սփիւռքի հայութեան ազգային հարցերէն ոչ մէկը կրնայ կարգադրել:

Ո՛չ «1915-ի ցեղասպանութիւն»ին,

Ո՛չ ալ «Գողցուած հայրենիքին հարստութիւններուն» հարցերը Սերժ Սարգսեանին «Բարեկամական վերաբերումներով» կրնան կարգադրուիլ: Ընդհակառակը...

Մենք, հայրենազրկուած Սփիւռքահայ մը ըլլալով մտահոգ ենք, որ Թուրքերուն հետ այս «նոր բարեկամական վերաբերումներու» ընթացքին՝ 1915-ի ցեղասպանութիւնը և Արեւմտեան Հայաստանը կրնան սակարկութեան հարց ըլլալ:

Այսօրուան Հայաստանը, Ազերիներուն հետ, Ղարաբաղի հարցը ունի որ, գրեթէ քսան տարիներէ ի վեր, կը շարունակուի առանց լուծումի յանգելու:

Թուրքերն ալ, հայերուն հետ, 1915-ի ցեղասպանութեան և Արեւմտեան Հայաստանի հարցերը ունին որոնք, 93 տարիներէ ի վեր, կ'արինին:

Այսօրուան Հայաստանի նախագահը Ղարաբաղի հայ մըն է: Այսինքն՝ 1915-ի ցեղասպանութեան ենթարկուած հայերուն մէկ շառաւիղը չէ: Եւ ան, Սփիւռքի հայութեան հարցերը չէ ապրած: Այսինքն՝ Սփիւռքի հայերուն ցաւերը «Իր մորթին վրայ չէ գզացած»: Մեր վախը հետեւեալն է.

Ապտուլլահ Կիլը, Ղարաբաղի հարցի լուծման համար, Ազերիները կրնայ համոզել...

Եւ ասոր փոխադարձ՝ հայերն ալ 1915-ի ցեղասպանութիւնը և Արեւմտեան Հայաստանի կորուստը կրնան մոռնալ...



★ ★ ★

1915-թ.էն մինչեւ այսօր, Սփիւռքի հայութիւնը միացեալ Սփիւռքի ներկայացուցչական կառավարութիւն մը չկրցան կազմել:

Այս պատճառաւ Աշխարհի պատմութեան մէջ նմանը չունեցող և զարհուրելի՝ 1915-ի ցեղասպանութիւնը կատարած թուրքերը, մինչեւ այսօր, չպատժուեցա՛ն:

Սփիւռքի մէջ միացեալ հայկական ներկայացուցչական կառավարութեան մը կազմուելուն արգելք եղող, Սիոնիստներուն հնազանդ, իբր թէ ազգայնականի համբաւ ունեցող Սփիւռքի հայ որոշ կուսակցական ղեկավարներուն... Անվերջ անէ՛ծք:

Յ. 2.

մասնակցութիւնը բերած են այդ պատրաստութիւններուն: Այս օգնութիւնը՝ վրացական հրետանիին բերուած թեքնիք օգնութեամբ չի՛ սահմանափակուիր, լոկ, շա՛տ հաւանաբար: Եւ « Դեռ կը վկայուի, որ ԱՄՆ-ի սպաներու թելադրութեամբ է, որ Վրացիք հարիւրաւոր ցամաք-ցամաք հրթիռներ արձակած են Օւէթներու մայրաքաղաքին վրայ, երբ դեռ վրաց զինուորական ջոկատները չէին սկսած իրենց նախապարձակումին »:



Mikheil Saakashvili et George Bush, en avril 2008

\*\*

Այստեղ կարելոր կը նկատենք մէջբերել, Ռուսիոյ Նախագահ Մետվետելի վերջերս « Ֆայնէնշըլ Թայմզ » թերթին կատարած յայտարարութեան ամէնէն կարելոր մասերը՝

«...ԱՐԵՒՍՏԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆԿԱՏԻ ՉԱՌԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՃԱՆՉՑԱՆ՝ ՍԵՐՊԻԱՅԷՆ ԱՆՋԱՏՈՒՈՂ ԶՈՍՈԿՈՅԻՆ ԱՆԿԱՄԱՅՈՒՄԸ: ՄԵՆՔ ԶԱՆԱՅԻՆՔ ԲԱՅԱՏՐԵԼ, ԹԷ ԶՈՍՈԿՈՅԻ ԱՆԿԱՄԱՅՈՒՄԷՆ ՅԵՏՈՅ, ԿԱՐԵԼԻ ՉԷ ԶՐԿԵԼ ԱՊԽԱԶՆԵՐՆ ԵՒ ՕՍԷԹԵՐԸ ԱՆԿԱՄԱՅՈՒՄԷ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ ԿԱՐԵԼԻ ՉԷ ՄԷԿՈՒՆ ՀԱՄԱՐ ԿԱՆՈՆ ՄԸ, ԻՍԿ ՈՒՐԻՇՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԲԵՐ ԿԱՆՈՆՆԵՐ ԿԻՐԱՐԿԵԼ:

ԱՇԽԱՏԵՑԱՆՔ ՀԱՄՈՋԵԼ ՍԱՀԱԿԱԾԿԻԼԻՒՆ ՈՐ ՕՍԷԹԻՈՅ ԵՒ ԱՊԽԱԶԻՈՅ ԴԷՄ ՈՒԺԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՉԴԻՄԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ ՄԸ ՍՏՈՐԱԳՐԷ. ՄԵՐԺԵՅ:

ՕԳՈՍՏՈՍ 7-8-Ի ԳԻՇԵՐԸ, ՀԱՍԿՑԱՆՔ, ԹԷ ԻՆՉՈՒ ՉԷ ՍՏՈՐԱԳՐԱԾ:

ՄԻԱՅՆ ՅԻՄԱՐ ՄԸ ԱՅՍ ՏԵՍԱԿԻ ԲԱՄՏԱԽԱՂԻ ԿՐՆԱՐ ԴԻՄԵԼ: ԻՍԿԱՊԷ՞Ս ԱՆ ԿԸ ՀԱԻԱՍԱՐ, ԹԷ ՀԱՐԱԻԱՅԻՆ ՕՍԷԹԻԱՅԻ ԿՐԱՅ ՅԱՐԶԱԿԵԼԷ ԵՒ ՄԵԾ ՄԱՍԱՄԲ ՌՈՒՍ ՀԱՐԻՒՐԱԻՈՐ ԶԱՂԱՔԱՅԻՆԵՐ ՍՊԱՆՆԵԼԷ ԵՏՔ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՊԻՏԻ ՉՀԱԿԱԶԴԵՐ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՅԴ ՆԱՄԱՅԱՐԶԱԿՈՒՄԸ ԵՏ ՄՂԵԼԷ ՏԱՐԲԵՐ ՄԻՋՈՅ ՉՈՒՆԵՐ:

( → էջ 6 )



**ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԸ ԳՈՅԱՏԵԻՆԷ  
ՄԵՐ ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԷՆ ԻՐ ԺԱՌԱՆԳԱՄ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԻԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ**

**ԳԷՈՐԳ ՏԱՐՕՆԻ**

Հայութիւնը հաւա՛տֆ ունի իր ազգային աւանդութիւններուն հանդէպ. կը յարգէ զանոնք և անոնց կառչած կը մնայ: Հին ժամանակներէն մեզի հասնող այս աւանդութիւններն են որ զօրացուցած են ու կը շարունակեն զօրացնել հայութեան ինքնուրոյն դիմագիծը:

Հայկական այս աւանդութիւններուն կարգին կը սիրենք յիշատակել Տեառնընդ-առաջ-ի տօնակատարութիւնը, իր հնադարեան խարոյկով, անցեալին՝ Հայաստան Աշխարհի լեռնաշխարհին վրայ, այժմ՝ մեր եկեղեցիներուն բակերուն մէջ, Բուն Բարեկենդանը, իր ընտանեկան իրախնամներով, Վարդավառը, իր կենսատու ջուրերով, սիրոյ ու յարգանքի իր վարդերով, Սրբուհի Կոյս-ին վերապիտութեան տօնը՝ խաղողի օրհնութեան իւրայատուկ արարողութեամբ:

Հայութեան այս աւանդութիւններուն խորո՛ւնկ և ամրակուռ արմատները մեզ կը հասցնեն մինչեւ մեր հեթանոսական շրջանները: Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին, իր ազգային կառոյցներով, ներդաշնակօրէն ինքնատի՛պ համադրութեամբ, այս աւանդութիւնները շարկապսած է Քրիստոնէական Հաւատքի տաղաւարներուն և տօնախմբութիւններուն:

Հայկական դիցաբանութեան ժամանակաշրջանին, աշխատասէր ու երկրագործ հայեր, Վարդավառ-ի Նաւասարդեան օրերուն, նախախնամութեան և բնութեան իրենց պարգեւած հունձէն՝ ցորեն նուիրած ու ընծայաբերած են Վահագն-ին, իւրաքանչիւր տարի բարեբեր աշխատաշրջան բոլորելու տեսիլքով ու ցանկութեամբ: Մայրերու Մայր-նանչցած են Անահիտը ու մշտստեւ յարգանք տածած են անոր հանդէպ:

Հայաստան Աշխարհի լեռներն ու դաշտերը բազմահարուստ եղած են խաղողի այգիներով: Հայը մասնայատուկ կասյուսածութիւն ունեցած է խաղողին հանդէպ: Անկէ պատրաստած է գինի: Հին ժամանակներուն, Հայաստանի Վարազդատ Արքան մասնակցած է Յունաստանի մէջ կազմակերպուած այդ ժամանակաշրջանի տիրական մարզածելին՝ յունօ-հռովմէական մարտ-ի առաջին մրցումներուն ու երբ յաղթական հռչակուած է, մասնակիցներուն հրամցուցած է Հայաստանէն իր շքախուճի անդամներուն բերած հայկական ընտիր գինին:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին Սրբուհի Աստուածածնի վերապիտութեան տօնին միացուցած է խաղողի օրհնութեան աւանդութիւնը: Եղած են ժամանակներ, երբ հայսկերոս ու հայաբնակ Կիլիկիոյ շէներուն և դաշտերուն մէջ, յատուկ կերպով հրաւիրուած հայ հոգեւորականներ, Սրբուհի Կոյս-ին տօնին օրը հանդիսաւորսպէս կատարած են հայապատկան այգիներուն և խաղողին օրհնութիւնը:

Պատմական ու հազարազանձ Անիի անկումէն ետք, երբ հայեր գաղթած են դէպի Արեւելեան Եւրոպա- Լեհաստան, Մոլտաւիա, Թրանսիլվանիա, Ռումանիա- իրենց հետ բերած են նաեւ իրենց ազգային սովորութիւնները գորոնք կրցած են սյախել երկա՛ր ժամանակի համար: Ռումանիա հաստատուած հայեր նախածեռնարկ եղած են եկեղեցիներու շինութեան: Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցիին Առաջնորդութիւնը շուրջ վեց դարերու հարո՛ւստ և արդիւնաշա՛տ անցեալ ունի Ռումանիոյ մէջ: Եւրոպայի Հայ Առաջնորդական թեմերուն հնագոյնն է ան: Տարբեր ժամանակաշրջաններու ռումանական իշխանութիւններուն բարեհա՛ն արտօնութեամբ հայեր եկեղեցիներ կառուցանած են Ռումանիոյ գրեթէ բոլոր քաղաքներուն մէջ. անոնց չորսը կը յիշատակենք այստեղ- Ռուման, Յոֆշան,

**ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԸ ԳՈՅԱՏԵԻԷ**  
**ՄԵՐ ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԷՆ ԻՐ ԺԱՌԱՆԳԱՄ**  
**ԱԶԳԱՅԻՆ ԱԻԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ**  
 ԳԷՈՐԳ ՏԱՐՕՆԻ

Ջամբա ու Գոնսթանցու: Ինուամնիոյ հայկական այս հնակառոյց եկեղեցիներու պահպանումի ու վերանորոգումի անհրաժեշտ աշխատանքներուն շարքին ազգանըւեր ու եկեղեցանուէր գործունէութիւն ծաւալեց Գեորգ Ս. Տիրայր Ս. Արք. Մարտիկեան: Հայկական ազգային-եկեղեցական հարտարայեւութեան գեղակերտ արտայայտութիւնն է Պուրեշ-ի հայոց Սրբոց Հրեշտակապետաց Առաջնորդանիստ եկեղեցին, մայրաքաղաքի կեդրոնամասին մէջ, յի կողմին ունենալով Ազգային Առաջնորդարանի ու հայկական թանգարանի շէնքը: Զանոնք միացնող փողոցը կը կոչուի «Հայկական Պողոտայ»:

Ինուամնիոյ հայկական եկեղեցիներուն շարքին մէջ առանձնայատուկ դիրք ունի Երկրի Սուշավա-յի բարձունքին վրայ հայերուն բարձրացուցած վանքը, որ նուիրուած է Սրբուհի Կոյս-ին: Տարիներու հոլովոյթին հետ, հերթական ուխտագրնացութիւններու ընթացքին, հայութիւնը վանքի եկեղեցիին տուած է Հանդակատար Ս. Աստուածածին անունը:

Սուշավա-յի հայկական վանքը ուխտատեղի մըն է ո՛չ միայն հայութեան, այլ նաե՛ւ, Արեւելեան Եւրոպայի բոլոր երկիրներու տեղաբնակ ժողովուրդներուն համար: Իւրաքանչիւր տարի, Սրբուհի Կոյսին վերափոխութեան օրնին, ուխտակատարութեան համար Սուշավա կը բարձրանան Գեորգանիայէն, Աւստրիայէն, Հունգարիայէն և Պուլկարիայէն ժամանած բազմահարիւր օտարերկրացի հաւատացեալներ, որոնք հոն մատուցուող Սրբ. Պատարագներու ընթացքին, ծնկաչոք կը բարձրանան դէպի հայկական եկեղեցին:

Այս վանքին մէջ, Իր Արեղայական ձեռնադրութենէն ետք, Իր քառասնօրեայ մեծութիւնը բոլորած է Վազգէն Ա. Վեհափառ:

Ինուամնիոյ և Պուլկարիոյ մէջ իր ազգային-հոգեւոր յիսուն տարիներու բեղմնաւոր ծառայութեան ընթացքին, երկու հայ թեմերու քաջակորով և իմաստուն Առաջնորդը՝ Գեորգ Ս. Տիրայր Ս. Արք. Մարտիկեան, յուրաքանչիւր տարի, կազմակերպած է ու կը շարունակէ կազմակերպել հայութեան աւանդական ուխտագնացութիւնը՝ դէպի Սուշավա-յի Հանդակատար Ս. Աստուածածին եկեղեցին: Այստեղ իր մատուցած Ս. Պատարագին աւարտին, Գեորգ Տիրայր Սրբազան կը կատարէ օրհնութիւնը՝ ուխտաւոր հայերուն բերած խաղողի ողկոյզներուն և շրջանի Ռուսներ սյգեգործներուն խաղողի տունկերուն:

Խաղողի օրհնութեան արարողութիւնը շեշտաւորուած է յիշողութեանս մէջ, մանկութեանս օրերէն սադին: Լուսահոգի հօրեմական պապս՝ Սարգիս Գրիգորի Գրիգորեան խաղողի որթատունկեր մշակած էր ծննդավայրիս՝ Պէյրութի Ռեմէյլ թաղամասի Ս. Յարութիւն եկեղեցիի հայաբնակ շրջանի մեր բնակարանի պարտեզին մէջ և մեր տանիքը վերածած՝ գեղատեսիլ սյգեստանի:

Պապս կը պատմէր, թէ Մուշի Բուլանուխ գաւառի Կոփ գիւղին մէջ, իր ծնողքը կը պահէին և կը մշակէին իրենց նախահայրերուն սյգիները և, յուրաքանչիւր տարի, Աստուածամօր օրնին, կը յարգէին իրենց գիւղի Ս. Յարութիւն եկեղեցիին խաղողաօրհնէք-ի նուիրատուները ըլլալու իրենց բարի՛ սովորութիւնը:

Պապս կ'արգիլէր մեզի խաղողը համոտեսել անոր օրհնութենէն առաջ: Ի՛նքն եւս, մինչեւ իր կեանքին մայրամուտը, մնաց հաւատարիմ՝ իր ծնողէն իր ժառանգած սյգի՛ւ սովորութեան և, 1940-ական թուականներէն սկսեալ, մեր տանիքի սյգեստանէն իր հաւաքած խաղողի ողկոյզները իր ձեռքերով, տարած է մեր թաղի Ս. Յարութիւն եկեղեցին, օրհնութեան համար:

**ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԸ ԳՈՅԱՏԵԻԷ**  
**ՄԵՐ ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԷՆ ԻՐ ԺԱՌԱՆԳԱՄ**  
**ԱԶԳԱՅԻՆ ԱԻԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ**  
 ԳԷՈՐԳ ՏԱՐՕՆԻ

Ս. Էջմիածնի վանական պուրակյան մէջ, կողքին՝ Վեհաբանի ա՛յն գօտիին ուրկյց իւրաքանչիւր ուխտաւոր հնարաւորութիւնը կ'ունենայ լիաթո՛ք ըմբռնելու մեր սրբազա՛ն լեբան՝ Արարատի վեհատեսիլ համայնապատկերը, Վազգէն Ա. Վեհափառ, 1960-ական թուականներուն,

սարքաւորել տուաւ փոքրատարած բայց սիրո՛ւն այգի մը, որ կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին, դարձաւ բնակավայրը՝ Հայաստանի տարածքին անող խաղողի բոլոր տեսակներուն: Խաղողի իւրաքանչիւր տեսակ ունէր իր յատուկ անունը որ, յատկանշական ձեւաւորումով, արձանագրուած էր տունկին վրայ գեղեղունած ցուցանակի ճակատին: Իւրաքանչիւր տարի, Սրբուհի Կոյս-ին վերափոխութեան տօնին, պատշաճ արարողութեամբ, Վազգէն Ա. Վեհափառ կ'օրհնէր Ս. Էջմիածնի վանական պուրակյան այս յիշարժա՛ն այգին, որ այգեմշակութեան քաղցրեղէն թանգարանի մը ապրո՛ղ և ապրեցնո՛ղ տպաւորութիւնը կու տայ օտար թէ հայ իւրաքանչիւր այցելուի:

Ուրախ եմք, որ այս տարի եւս, 2008 տարեթիւին, Լիբանանի հայութիւնը արժեւորեց Աստուածամօր վերափոխութեան տօնը, Պիֆֆայեա-յի բարձունքին, Ս. Աստուածածնի մատրան, Ջմմառ-ի հայ Կաթողիկէ Սրբուհի Կոյս-ին փոխման Վանքին ու հայկական բոլոր եկեղեցիներուն մէջ: Պիֆֆայեա-յի Ս. Աստուածածնի մատրան Ուխտագնացութեան օրը, Շարաթ, 16 Օգոստոս, երեկոյեան Ս. Պատարագը մատուցանեց Լիբանանի Թեմի բարեջա՛ն Առաջնորդ՝ Գեորգ Գեղամ Եպիսկոպոս Խաչերեան: Օրուան Խորհուրդին և հայութեան բարոյական արժէքներուն մասին պատգամեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոս:

Ջմմառ-ի մէջ, Օգոստոս 17-ին, Կիրակի օր, պատարագեց ու քարոզեց Հայ Կաթողիկէ համայնքի Հոգեւոր Տէր՝ Ներսէս - Պետրոս Թարմունի Պատրիարք: Այստեղ, եկեղեցական արարողութիւններու աւարտին, ուխտաւորներուն տրուած է Լուվր-ի թանգարանին մէկ սրբանկարին գունաւոր փոքրածաւալ տպագրութիւնը, - Յիսուս Մանուկ՝ Աստուածամօր գրկին մէջ, - և որուն կցուած է հետեւեալ աղօթքը.

- Տիրամայր Խաղող-ի- Քու պաշտպանութեանդ հովանիին կ'սայաւինինք, Սուրբ Աստուածածին, մի անտեսեր մեր խորին աղաչանքները, այլ միշտ փրկէ մեզ ամէն վտանգէ, փառաւորեալ և օրհնեալ Կոյս: Ամէն: ՎԱՆՔ ՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԿՈՒՍԻՆ, ՋՄՄԱՌ:»

Անճնապէս կարողութիւնը ունեցայ, Սրբուհի Կոյսին վերափոխութեան տօնին, 17 Օգոստոս-ին, Կիրակի օր, կանուխէն ուղղուելու դէպի Մեծի Տանն Կիլիկիոյ բարբար աղօթք մըն է վեհաայա՛նձ սրբապատկեր մը, ուր, -գեղանկարչական արուեստի սրտկառնագո՛ւ բովանդակութեամբ, Աստուածամայրը անհո՛ւն սիրով տէր կը կանգնի Յիսուս Մանուկ-ին,- որուն ներքև կայ հետեւալ արձանագրութիւնը. Նուիրուած է Գրիգոր Գրիգորեան-ի յիշատակին, - 1972-1989-»:

Սրբուհի Կոյս-ին և Իր վերափոխութեան տօնին խորհուրդով, հայութեան անշէ՛ջ հաւատքին հանդէպ յարգանքի ու հաւատարմութեան ուխտակատարութիւն մըն է, որ կատարուեցաւ ա՛յդ օրով, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբանութեան կարկառո՛ւն հոգեւորականներէն՝ Գեորգ...

**ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԸ ԳՈՅԱՏԵԻԷ  
ՄԵՐ ՀԻ՛Ն ԺԱՄԱՆԱԿՆԵՐԷՆ ԻՐ ԺԱՌԱՆԳԱՄ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԻԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ**

**ԳԷՈՐԳ ՏԱՐՕՆԻ**

Տ. Կոմիտաս Ս. Արֆ. Սիանեան, շրջապատուած՝ Միաբանակից եկեղեցականներով՝ -եպիսկոպոս, վարդապետ ու արեղսյ- և սարկաւազներով: Գաթնագահեց՝ տպաւորի՛չ ժամերգութեան: Մեր ծիսակատարութիւններուն հանդէպ երաժշտագէտ Սրբազանը կը ցուցաբերէ մասնայատուկ նախանձախնդրութիւն, որ արժանի է գնահատութեան: Անհրաժեշտ է յիշել, այստեղ, կարդալու և տպաւորելու իր իւրայատուկ ոճը, որմով կատարեց ընթերցումը՝ Ս. Պատարագին նախորդող և օրուան Խորհուրդը բացաւորող Ս. Աւետարանին, յատուկ և կո՛ւտ առոգանութեամբ:

